

ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԷՐՏԵՐԵԱՆ

Փռնիզ ևր
Քարոյնէն

Հարոյր Յէ

Spiritual Reflections

2020

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

	Էջ
Առաջարան	7
Հրաւեր Յիսուսի աստուածային կեանքին համենթաց քալելու	11
Երկու խօսք Գալիլթորնիոյ Հայոց անդրանիկ Առաջնորդէն	13
Յիսուսի Ծնունդը՝ հրաւեր խոստումի	17
Քահանան	20
Մեր մէջ մշակենք հոգեւորականը	23
“Shared Leadership”	26
Հովուական այցելութիւն	28
Մբ. Երրորդութիւն Հայց. Եկեղեցու փառապանծ 90-Ամեակ	30
«Երկինք եւ երկիր անցցեն եւ բանք իմ մի՛ անցցեն»	32
«Օրինակ լինիջիք հաւատացելոց»	34
Յիսուս զանձանակին դիմաց	36
Սերմնացանին առակը՝ պատկերը մեր կեանքին	38
Փարիսեցիւն եւ մաքսաւորը	40

Գոհաբանական զգացում	42
Հոգեւոր եւ բարոյական արժէքներէ պարպում	44
Մբ. Յարութիւն	46
Չմնանք անտարբեր	50
Դրօշը Հայաստանի Չորրորդ Հանրապետութեան	51
Աներեւակայելին	52
Հոգեգալուստ	54
ՀԵՀԵՄ-ի առաքելութիւնը	56
ՀԵՀԵՄ-ի կարեւորութիւնը	58
Հարցազրոյց՝ ՀԵՀԵՄ-ի մասին	60
Սարդարապատը ոգին է մեր ազգին	65
Հուշարձան ձօն՝ Սարդարապատի 100-Ամեակին	67
Ս. Էջմիածին	69
Ս. Էջմիածինը խորհուրդն է մեր ինքնութեան	71
Մբ. Էջմիածինը՝ «Անկէզ Մորենին»	75
Մբ. Էջմիածինը՝ Գլուխ Հայ Եկեղեցւոյ	77
Թեմական եւ ծխական կեանքի կազմակերպութիւն	79

Ողջոյնի խօսք՝ ուղղուած ուսուցչաց վերապատրաստման	81
“Մայրենի լեզուն պահպանէ, քրիստոնէական հաւատքդ ապրիիք”	85
Վերափոխումն Սբ. Աստուածածնի	87
Սափօր ոսկեղէն լի մանանայիւ	90
Մեր Պատարագը	94
Շարականներ	96
Հանրապետական մաղթանք	99
Սրտի խօսք	101
Սփիւռքը	103
ՀԲԸՄ-ի ծննդեան 100-Ամեակ	107
Արուեստը՝ Աստուած եւ մարդ միացնող օղակ մըն է	108
Խաչվերաց	110
Խաչն կենարար	113
Վարագայ Սբ. Խաչ	116
«Մի՛ վախնար, միայն հաւատա՛»	118
Մեր կեանքի առաքելութիւնը	121
«Յամենայն ժամ ուսանիմ եւ ի գիտութիւն ճշմարտութեան ոչ հասանիմ»	123

Բոլոր ժամանակներու պատումները	126
«Դուք հետամուտ եղէք Աստուծոյ Արքայութեան եւ այդ ամէնը աւելիով կը տրուի ձեզ»	129
Գտնենք Քրիստոսի ներկայութիւնը	131
Նոր Տարուոյ սեմին	134

ԱՌԱՋԱԲԱՆ

Միբելիներ,

Ձեզ ենք հանձնում Հայց. Առաքելական Սուրբ Եկեղեցու հարգարժան եւ վաստակաշատ հոգեւորականներից մեկի՝ Հյուսիսային Ամերիկայի Արեւմտյան Թեմի Առաջնորդ՝ Գերաշնորհ Տեր Հովնան Արք. Տերտերյանի, թվով տասնհինգերորդ քարոզների փունջը:

Արդարեւ քարոզգրքերի նմանօրինակ ծավալն ու քանակը խոստում վկան է Սրբազան Հոր գրական բեղուն գործունեության, որն, անշուշտ, չի սահմանափակվում քարոզգրքերով: Առաջնորդ Սրբազան հոր գրական աշխատությունների քանակն անցնում է ութսունից եւ իր մեջ ներառում է քարոզգրքեր, խորհրդածություններ, մանրապատումներ եւ աղոթագրքեր ինչպես հայերեն, այնպես էլ անգլերեն լեզուներով:

Սույն Քարոզգիրքը հոբելինական է, եւ ձոնված է Սրբազան հոր Քահանայական Օծման եւ Ձեռնադրության 40-րդ տարեդարձին:

Այս հանգամանքը հաշվի առնելով՝ ցանկանում եմ ծանուցումս սկսել Առաջնորդ Սրբազան հոր քահանայությանը նվիրված վերլուծությամբ. *“Քահանայութեան կոչումը մենք մեր հոգեւոր կեանքին մեջ զգացած ենք ու ապրած դեռեւս ի մանկութենէ եւ այն փայփայած, որպէսզի ուռճանար մեր մեջ եւ որպէսզի առաւելագոյնս իմաստաւորէինք մեր ծառայութիւնը Աստուծոյ փառքին համար եւ ի խնդիր Հայց. Առաքելական մեր Սբ. Եկեղեցոյ եւ հաւատացելոց հոգեւոր կեանքի զարգացման”*: Արդարեւ այս տարիների ընթացքում

Սրբազան հայրը մշտապես լսեց Տիրոջ այն ձայնը, որն իրեն ասում էր. «Վերցուր խաչը եւ հետեւիր ինձ» (Մատթ. 16:24):

Քառասուն տարի առաջ Սրբազան Հոր քահանայական կյանքը սկիզբ էր առնում Հայոց *“Սրբություն Սրբոցից”*՝ Սբ. Էջմիածնի Մայր Տաճարի սուրբ Խորանից, որը *“Արմատն է մեր կեանքին ու պատմութեան, եւ դէպի երկինք բարձրացող ու դէպի յաւերժութիւն առաջնորդող աստուածահիմն կամուրջը”*: Սրբազան Հայրը հիշեցնում է Սբ. Էջմիածնի աշխարհասփյուռ զավակներին, որ՝ *“Ս. Էջմիածինը հայրենի հողին հետ միաձուլ դարձած անժամանակին մէջ ապրող յաւերժութիւնն է”* եւ մասնավորաբեր մեր օրերում երբ ընթանում են Սբ. Էջմիածնի Մայր Տաճարի շինարարական մեծածավալ աշխատանքները, եւ Սրբազանն էլ գլխավորում է նմի քահավարի եկեղեցաշէն առաքելությունը, բոլորիս պատիվն ու պարտականությունն է մեր մասնակցությունը բերել Մայր Տաճարի շինարարական աշխատանքներին, քանզի. *«Ս. Էջմիածինը մեր կեանքը ապահովագրող աստուածային ներկայութիւնը կը շարունակէ մնալ»*:

Քարոզգրքում զգալի տեղ է զբաղեցնում Սփյուռքի մեր հայրենակիցներին ուղղված կոչերը, որոնց հիմքում ընկած է հայրենասիրությունը, քանիզի. *«Ի մասնաւորի սփիւռք ապրող մեր ժողովուրդի զաւակաց համար Հայրենիքը գրաւականն է մեր կեանքի»*: Սրբազան հայրը իր անձնական օրինակով եւ քարոզներով աշխատում է հայոց ամենից բազմաշերտ գաղութի՝ ԱՄՆ-ի Արեւմտյան ափի, կյանքն առավել կազմակերպված եւ կայուն դարձնել, որի միակ գրավականը Հայց. Եկեղեցին է՝ *«Մենք խոր համոզումով կուզենք ընդգծել, որ Հայց. Եկեղեցին պիտի ըլլայ առանցքը եւ Հայաստանի եւ Սփիւռքի իրականութեան»*:

Եկեղեցին հավատացյալների ժողովն է, որում անգերազանցելի դեր են կատարում հայ մայրերը: Այսօր հայ մայրերն են կոչված լինելու ոչ միայն ընտանիքի այլև՝ Եկեղեցու շարուկականության ջատագովը: Սրբազան Հայրը իր երախտիքի խոսքն է հայտնում հայ մայրերին՝ ասելով. *«Միրելի մայրեր, այսօր Աստուածամոր տօնն է եւ մենք բնականօրէն կը տօնախմբենք անոր յիշատակը: Այսօր կը տօնախմբենք նաեւ բոլոր մայրերու պատարագումը, որովհետեւ ինչպէս Աստուածամայրը պատանի Յիսուսը առաջնորդեց տաճար, այդպէս ալ կը սպասենք, որ մեր մայրերը իրենց զաւակները առաջնորդեն Եկեղեցի»:*

Երիտասարդները մեր վաղվա կերտողներն ու առաջնորդներն են եւ գաղտնիք չէ, որ Հովնան Սրբազանը մասնահատուկ վերաբերմունք ունի մեր երիտասարդության նկատմամբ: Երիտասարդությունն այսօր, առավել քան երբեւէ, կարիք ունի հոգեւոր խոր ինքնաճանաչման. *«Երիտասարդութեան եւ Եկեղեցւոյ կապը պէտք է որ հոգեւոր, գիտակցական եւ իմացական հիմքի վրայ ըլլայ այլ ոչ զգացական կամ աւանդութեան ոյժի: Այսպէս միայն կրնանք պատրաստել վաղուան առաջնորդները, նախանձախնդիր պաշտպանները մեր ազգային եւ հոգեւոր արժէքներուն»:*

Սրբազան Հայրն իր գրություններում ի հայտ է բերում մի շարք գաղափարական եւ ներքին խնդիրներ, որ արգելակում են մեր անհատական եւ հավաքական առաջընթացը: Սրանցից ցանկանում ենք մեջբերել միայն երկուսը:

Առաջինն Աստծո Խոսքից դատարկված լինելու հանգամանքն է, որը ուղղակի կործանարար է հասարակության համար. *«Երբ մեր շուրջը կը նայինք, մեզի համար յստակ կը դառնայ, որ անհատներ կամ հաւա-*

քականություններ ովքեր պարպուած են Աստուծոյ խօսքէն, իրենց կեանքը կ'ապրին աննպատակ եւ յաճախ կորսնցուցած իրենց մէջ ճշմարիտ ուրախութիւնը»: Երկրորդ խնդիրը միջակութեան մթնոլորտն է, որը լրջագոյն պատնէշ է մեր առաջընթացի եւ շոշափելի հաջողությունների համար. «*Հոգեւոր թէ աշխարհիկ կեանքէն ներս մենք այլեւս պիտի մերժենք միջակութիւններ եւ պիտի ձգտինք ունենալ կատարեալ մասնագէտներ բոլոր բնագաւառներէն ներս»:*

Արդարեւ «*Մարդուն, եւ ի մասնաւորի քրիստոնեային, մեծագոյն յաղթանակը կը կայանայ նոր կեանքին մէջ*» իսկ նոր եւ մեղքերից ազատագրված կյանքը սկիզբ է առնում ներողամտութեամբ. «*Եթէ մարդը կ'ուզէ ինքզինք ազատել գերութենէ, ապա պիտի կարողանայ ներողամտութեամբ ապրիլ, որպէսզի ճշմարտապէս ապրի քրիստոնեայի կեանքով*»:

Քրիստոնյան, Աստծո հետ խոր եւ անքակտելի կապ հաստատելով, կոչված է նոր հարթութեան վրա բարձրացնել իր կյանքը, քանզի. «*Աստուծոյ հետ ապրուած կեանքը լուսաւոր է եւ խաղաղ*»:

Խոսքս ցանկանում եմ ավարտել Սրբազան հոր պատգամով եւ հույս հայտնել, որ սույն քարոզգիրքը առիթ կ'հանդիսանա մեկ անգամ եւս վերաբժեւորելու մեր կյանքը եւ առավել ամրացնելու մեր կապը Տիրոջ հետ. «*Ձեր մէջ կրէք Աստուծոյ ներկայութիւնը: Ձեր խօսքը թող ըլլայ Աստուծոյ խօսքը, եւ թող Ձեր կեանքին ճանապարհը նմանի Քրիստոսի կեանքին*»:

Որդիական Ակնածանոթ՝

Հայկ Սադոյան
Բրբենք, 2020

ՀՐԱԻԷՐ ՅԻՍՈՒՄԻ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԿԵԱՆՔԻՆ ՀԱՄԸՆԹԱՅ ՔԱԼԵԼՈՒ

Հոգեւոյս Գարեգին Արքեպիսկոպոս Խաչատուրեան, որուն անունը մեր ս. եկեղեցւոյ մէջ արձանագրուած է որպէս Գարեգին Տրապիզոնցի, իրօք լուսամիտ այն հոգեւորականն է, որ իր հետ եւ՝ առաջնորդական տարիներուն, եւ՝ Կ. Պոլսոյ պատրիարքութեան շրջանին իր պատգամներով հաւատաւոր մեր ժողովուրդի զաւակները հրաւիրած է քայլելու Յիսուսի հետ: Իր օրին, երբ ընտրուած է Գալիֆորնիոյ Հայոց թեմի Անդրանիկ Առաջնորդ, հրապարակած է հրաշալի պատգամ մը, որու մէջ կը տեսնենք մեծ Առաջնորդին լուսեղէն կերպարը, կը հասկնանք, որ իրօք կարող էր «լեռներ շարժել» եւ հոգիներուն մէջ ամրացնել սէրը Աստուծոյ եւ Աւետարանէն ճառագայթող մեծ Վարդապետի խօսքերը:

Մեր այս քարոզներուն որպէս առաջնորդող խօսք կ'արտասանենք իր պատգամը՝ յղեալ ողջ ժողովուրդին, որպէսզի եկեղեցւոյ զաւակները քայլեն Քրիստոսի հետ համընթաց:

Տրապիզոնցին իր ժողովուրդը կ'առաջնորդէ Աւետարանի կենդանի հաւատքին, որպէսզի անոր հետ հաղորդակցությամբ մեր ժողովուրդի զաւակները նոյն հաւատքին մէջ գտնեն աստուածայինը, համամարդկայինն, ու մանաւանդ մեր նախնեաց հաւատքին իրայատկութիւնները. «Աւետարաններու հաւատքը եղած է հայուն հաւատքը, որ իր առջեւ բացած է ճշմարիտ քաղաքակրթութեան մը փշոտ այս լուսեղէն ճամբան,

Ճամբան բոլոր ողջախոհ քրիստոնեաներուն եւ մարդոց միանգամայն»:

Իր ժողովուրդի ծառայութեան կոչուած հոգեւորականը որպէս նշանաբան կ'ունենայ հետեւեալ խօսքը. «Քեզի համար եւ քեզի հետ»:

«Երբ առաջին անգամ ա. եկեղեցւոյ մէջ քեզ իմ ողջոյնի խօսքերս կ'ուղղէի՝ ըսի քեզ, թէ ոչինչ պիտի ուզեմ քեզմէ, բայց եթէ զքեզ միայն: Երբ ունենամ քեզ՝ կ'ունենամ ամէն բան»:

Ինչ հրաշալի մտորում մը, որ կը պարտաւորեցնէ մեզ խոնարհելու մեծ հոգեւորականին առջեւ, քանզի իր բառերուն մէջ կ'ապրինք տեսլապաշտ Առաջնորդին զարկերը սրտին ու թոյժքները հոգւոյն:

Սիրելի ընթերցող, կարդա՛ Տրապիզոնցոյ պատգամը եւ պիտի ապրիս նոր կեանքին խորհուրդը եւ վայելես քաղցր ներկայութիւնը մեր մայր ա. եկեղեցւոյ, որուն ծնունդը կը տեսնենք Ս. Էջմիածնի տեսիլքին մէջ:

Մարտ 10, 2020

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ
ԳԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՀԱՅՈՑ
ԱՆԴՐԱՆԻԿ ԱՌԱՋՆՈՐԴԷՆ

Սիրելի Հայ Ժողովուրդ Գալիֆորնիոյ,

Հայրապետական օրհնածիր ողջոյնէն վերջ լսե՛ նաեւ ողջոյնը քու անդրանիկ Առաջնորդիդ՝ որ քեզի կը բերէ իր սրտի բովանդակ խանդակաթ սէրը՝ նուիրումի եւ զոհաբերումի աւետարանաշունչ ուխտով խորացած ու զօրացած: Այդ Առաջնորդը, ինքն ալ խանդավառօրէն՝ առաջնորդուած գաղափարական ներշնչող լոյսով մը՝ որ Յիսուսի աստուածային կեանքէն կ'արտացոլայ, կը հրաւիրէ զքեզ մօտենալու իրեն մտերմիկ ու լրջմիտ համարձակութեամբ մը, քալելու իրեն հետ վստահութեամբ ու հաստատակամ, լսելու իր հովուական թէեւ անարուեստ՝ այլ սրտաբուի երգերը ուշադրութեամբ եւ յօժարակամութեամբ, աչերդ սեւեռած այն միակ նպատակակէտին՝ որ բարի է ու գեղեցիկ, վասնզի ամենուս է ան:

Օտար, բայց հիւրընկալ այս երկնքին տակ, ուր բարոյական անգին գանձերու հետ նիւթն ալ ունի այնքան անդիմադրելի եւ, աւաղ, մերթ այնքան հիւժող հրապոյրներ, մենք պարտաւոր ենք մեր մէջ մշակելու եւ առատահոս աղբերացումով յայտնաբերելու ներքին այն քաղցր ու բարեպաշտիկ սրբութեամբ օծուն ապրումները՝ որոնցմով մեր նախնիք կենցաղավարելու իմաստութիւնն ունեցան անցեալի գուցէ աւելի շնորհալի ու երանաւետ օրերու մէջ:

Այդ ապրումները մեզի կու տայ Հայաստանեայց Եկեղեցին, մէկը Քրիստոսի Եկեղեցին հարազատ

պատկերներէն, այն սրբալոյս Ոգիովը՝ զոր առաջին դարերէն իսկ ժառանգած է Աւետարանի կենդանի հաւատքին: Արդ, հաւատքը, իր համամարդկային նկարագրովը տիեզերական, միւ եւ արիւն դառնալու ընդունակ, տարրացած է նաեւ Հայ Ազգին, Հայաստանեայց սրտին մէջ, ծնունդ տալով գիտակից նահատակութեամբ անմահացած անթիւ դիւցազուններու: Աւետարանին հաւատքը եղած է Հայուն հաւատքը, որ իր առջեւ բացած է ճշմարիտ քաղաքակրթութեան մը փշոտ այլ լուսեղէն ճամբան, ճամբան բոլոր ողջախոհ քրիստոնեաներուն եւ մարդոց միանգամայն: Ազգային արժէքները իրենց էութեամբը աստուածակերտ, վեր ամէն կաշկանդող ու մոլորեցնող հին ու նոր նախապաշարումներէ, այդ հաւատքին մէջ գտած են միշտ ու պիտի գտնեն յաւէտ իրենց նուիրագործումը, առանց խանգարելու համամարդկային անհրաժեշտ Միութեան գեղեցիկ ներդաշնակութիւնը: Ո՛չ մէկ արհամարհանք, նաեւ ո՛չ մէկ անտարբերութիւն այդ սրբազան արժէքներու հանդէպ՝ կրնան գտնել իրենց արդարացումը կեանքի իրականութենէն բխած ողջմտութեան առջեւ: Միւրել ի՛ր ժողովուրդը, անոր աւանդութիւնները, անոր սովորոյթները, անոր լեզուն, անոր անցեալը, ներշնչուիլ այդ բոլորով, սիրել իր հայրենիքը, ոգեւորուիլ անոր գեղեցկութիւններովը, նուիրուիլ անոր յառաջացման ու բարձրացման, ա՛յնքան բնական է, հետեւաբար եւ անմեղադրելի՝ որքան սիրելը իր սեփական կամ հօրենական տունը: Եւ այս սէրը չհակասեր այն բարձր ու անխառն համակրանքին՝ որով բոլոր ազգերն անխտիր, պահելով մէկտեղ նկարագրի իրենց առանձնայատուկ դրոշմները, պէտք է շաղկապուին իրարու, ապահովելու համար համամարդկային եղբայրութեան, Աստուծոյ

թագաւորութեան, հետեւաբար եւ աշխարհի խաղաղութեան եւ ընդհանրական բարօրութեան իրականացումը:

Մարդասիրական եւ ազգասիրական բիրեղացած զգացումները իրարու հետ սերտօրէն, ներդաշնակօրէն եւ հրաշալիօրէն հաշտեցնող եւ Հայուն դարաւոր ու անձեռնմխելի աւանդը եղող Աւետարանի այս վսեմ Հաւատքին է ահա որ կը հրաւիրէ զքեզ քու անդրանիկ Առաջնորդդ, ով սիրելի հայ ժողովուրդ Գալիֆորնիոյ:

Յօժարական եւ սիրով եմ եկեր բարձրադպրակ մունետիկն ըլլալու քեզ այս շինարար եւ հրաշագործ հաւատքին, մտածելու, խօսելու եւ մանաւանդ գործելու ա՛յդ հաւատքով քեզի համար եւ քեզի հետ:

Երբ առաջին անգամ Ս. Եկեղեցւոյ մէջ քեզ իմ ողջոյնի խօսքերս կ'ուղղէի՝ ըսի քեզ թէ ոչինչ պիտի ուզեմ քեզմէ՝ բայց եթէ զքեզ միայն: Երբ ունենամ զքեզ՝ կ'ունենամ ամէն բան: Եւ եթէ կ'ուզեմ ունենալ զքեզ՝ այդ դարձեալ քեզի համար է: Շահելով զքեզ՝ շահեցուցած կ'ըլլամ քեզ: Այդ շահը բացարձակապէս քուկդ է: Ոչ ասորը կամ անորը, այս խումբին կամ այն խումբին, այլ քո՛ւկդ, իւրաքանչիւր հայ անհատի՝ որ կ'ապրի այս նորակազմ Վիճակի սահմաններուն մէջ: Ջայն բաժնելու համար պէտք չկայ ո՛չ հատու սուրի, ո՛չ վիրաւորող լեզուի, ո՛չ խայթող գրչի եւ ո՛չ իսկ մտայլոտ մտածումներու: Սէրը, միայն անձնուրաց Սէրը կրնայ երաշխաւորել արդար բաժանումը:

Եթէ կարենաս ըմբռնել այս ճշմարտութիւնը, օհ, վստահ եմ թէ քեզ դժուար կամ գոնէ անկարելի պիտի չըլլայ մօտենալ՝ առանց դանդաղելու՝ նուիրումի եւ գոհաբերումի այն սուրբ ուխտին՝ որով յայտարարեցի քեզ թէ ստանձներ եմ քեզ ծառայելու այս նոր պաշտօնը: Այդ ուխտը քու ուխտդ ալ պիտի ըլլայ:

Այս քանի մը խօսքերը նկատե՛լ՝ յառաջաբան այն բոլոր իդէերու, թելադրութիւններու եւ յորդորներու՝ որոնք աւելի յարմար առիթով մը կը խոստանամ գրի առնել քեզ համար:

Վստահ թէ հայրապետական բարձր յանձնարարութեանց եւ հրահանգներուն հետ իմ այս սրտագին խօսքերն ալ կը գտնեն իրենց բարերար արձագանգը քու հոգւոյդ խորը, կը մաղթեմ որ տիեզերքի գթառատ Հայրը Իր երջանկառիթ օրհնութիւններով պտղաբերէ ամէնուդ տնաշէն, եկեղեցասէր ու ազգասիրական բոլոր անխոնջ ու յարատեւ ջանքերը եւ նիւթական ու բարոյական գուարթառատ գոհողութիւնները:

ՅԻՍՈՒՄԻ ԾՆՈՒՆԴԸ՝ ՀՐԱԻԷՐ ԽՈՍՏՈՒՄԻ

«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ
Օրինեալ է յայտնութիւնն Քրիստոսի»

Աստուծոյ առաջնորդութեամբ մարդկութեան առջեւ կը բացուի Նոր Տարին, որը կը նուիրագործուի Յիսուս Քրիստոսի ծննդեամբ: Նորին խորհուրդը ընդհանրապէս դժուար պիտի ըլլար ըմբռնել, եթէ երբեք Աստուած չներգործէր աշխարհի կեանքին մէջ, մարդկանց հոգիներէն ներս: Ժամանակը, կեանքն ու տեղը կարելի չէ նորին պրիսմակէն տեսնել առանց Քրիստոսի մարդեղութեան խորհուրդին: Եւ այս մտածում չէ կամ մտածումի արդիւնք, այլեւ՝ հաւատամք, ապրուած հաւատքի արտայայտութիւն: Քանզի ամէն անգամ, երբ տօնախմբենք Սուրբ Ծնունդը, ներքին անբացատրելի հոգեւոր զգացումներով կը լեցուի մեր էութիւնը եւ ինքնըստինքեան յանձնատու կ'ըլլանք Աստծուն եւ մեր ուրախութիւն կ'ըլլայ անչափելի:

Յիսուսի ծնունդը մարդկութիւնը կը տօնախմբէ գիտակից հաւատքով: Քաջ կ'ըմբռնենք այն ճշմարտութիւնը, որ Աստուածորդին՝ Յիսուս մանուկը մեզի կը բերէ Աստուծոյ սէրը, խոնարհութեան պատգամը, խաղաղութեան շունչը, կեանքին մէջ նոր կեանք մը բանալու խորհուրդը եւ տակաւին բազում դասեր, որոնց մէջ էականը կը մնայ այն, որ մարդն ստեղծուած ըլլալով Աստուծոյ պատկերին համաձայն՝ իր մէջ ունի նաեւ ստեղծագործելու ոգին ու ուժը:

Յիսուսի ծնունդը՝ աստուածային այն անկրկնելի հրաշքն է, որ մեր մէջ ծնունդ կու տայ նոր մարդուն: Մբ.

ծննդեան տօնը, հետեւաբար, դադար մը կը հաստատէ մեր կեանքին մէջ, որպէսզի ունենանք անդրադարձումի ու քննութեան պահը եւ ապա մեր կեանքի ճանապարհը պայմանաւորուի Աստուծոյ կամքին համաձայն:

Յիսուսի ծնունդը անհրաժեշտ չէ երկար բացատրել միայն բառերով, այն պէտք է ապրիլ, զգալ եւ, մանաւանդ, նմանակից ըլլալ Անոր: Եւ ի զուր չէ, որ յաճախ ժողովրդական բացատրութիւնն ու խօսքը կ'ըսէ հետեւեալը, թէ պէտք է մանուկի մը պէս հրճուիլ եւ ուրախանալ Յիսուսի ծնունդին ի տես, քանզի մանուկի մը սիրտը մաքուր է ինչպէս սպիտակ ձիւնը, եւ Յիսուսի սբ. ծննդեան տօնը կ'իմաստաւորէ մանուկը խոստումով ու յանձնառութեամբ, որպէսզի ըլլայ օրինակելի: Եւ ինչո՞ւ նոյնպիսի խոստում ու յանձնառութիւն չկատարենք չափահասներս, որուն այնքան պէտքն ունինք, որպէսզի մեր էութեանը մէջ արմատաւորենք ներքին հոգեւոր հարստութիւնը եւ խաղաղութիւնը:

Թող մեր Տիրոջ եւ Փրկչի Յիսուսի հրաշալի ծնունդը մեր էութեան մէջ խորացնէ հաւատքի քաջութիւնը՝ որպէսզի նոր խոստումներով լեցնենք մեր կեանքը: Յիսուսի կեանքը դարձաւ ծառայութեան ճանապարհը մարդկութեան կեանքին մէջ: Ուրեմն, մենք եւս կատարենք նոյնը, մեկզմիւսին ծառայութեամբ: Անոր երկրաւոր կեանքը լուսաւորեց աշխարհը այնպիսի պատգամներով, որոնք դրսեւորուեցան Իր իսկ կատարած քայլերով: Եւ զուցէ Քրիստոսով մեզի հաղորդուած կեանքի դասերէն մեծագոյնը կը մնայ ներողամտութիւնը: Եթէ մարդը կ'ուզէ ինքզինք ազատել գերութենէ, ապա պիտի կարողանայ ներողամտութեամբ ապրիլ, որպէսզի ճշմարտապէս ապրի քրիստոնեայի կեանքով:

Յիսուսի սբ. ծնունդը ողջ մարդկութեան կեանքը կ'առաջնորդէ նոր կեանքի, որպէսզի մարդիկ սթափումի

պահ մը ունենան եւ կեանքով ապրին կատարեալ ոչ մեր կամքին համաձայն, այլեւ՝ Աստուծոյ կամքին, որ կը պատգամէ այն բոլորը ինչ որ կը գտնենք Քրիստոսի վարդապետութեան մէջ, Աւետարաններով մեզի հաղորդուած:

Յիսուսի սբ. ծնունդը նոր կեանքի պատգամը կը յղէ նաեւ մեր ազգի զաւակաց, որպէսզի կեանքն ապրինք հաւատքով Աստուծոյ սէրն ու իմաստութիւնը իւրացնելով մեր մէջ, որպէսզի օրհնութիւն բերենք մեր Հայրենիքին ու Սբ. Եկեղեցւոյն: Յիսուսի սբ. ծնունդը տօնախմբել հայ քրիստոնեային համար՝ կը նշանակէ նորոգեալ հաւատքով սիրել Հայրենիքն ու Սբ. Էջմիածինը, նորոգեալ յանձնառութիւններով իմաստաւորել մեր աստուածատուր կեանքը: Եւ երանելի է այն հայ քրիստոնեան, ով իր հաւատքը կ'ապրի գործնապէս եւ Յիսուսի ծնունդը կը տօնախմբէ որպէս հրաւերը՝ նոր կեանքի:

Յիսուսի սբ. ծննդեան խորհուրդով ապրինք կեանքը: Յիսուսի ծնունդը՝ Աստուածորդու երկինքէն երկիր խոնարհումն է մարդկութեան մէջ, որպէսզի Անոր հետ բարձրանանք առ Աստուած: Եւ եթէ մարդկութիւնը ունենայ իր մէջ Աստուծոյ աչքին խոնարհ կեանք մը ապրելու ձգտումն ու տեսիլքը, ապա այն ժամանակ ողջ աշխարհը կ'ապրի նոր կեանքը մը ի Քրիստոս:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ Օրհնեալ է յայտնութիւնն Քրիստոսի

Ուրախ սրտով կը յայտարարենք ծնունդն Աստուածորդու եւ ապա այն ժամանակ Աստուած մեր հոգին կը նորոգէ, որպէսզի մանուկ Յիսուսի հետ նոր կեանքին ծնունդը ապրինք նաեւ մենք: Ամէն:

ՔԱՀԱՆԱՆ

«Աշակերտք Քրիստոսի, եւ առ ամենայն տիեզերս առաքելք. բարեխօսեցէք առ Տէր վասն մեր»:

«Որք առիք զպատուէր քարոզել աներկիւղ զԲանըն կենաց յաշխարհի. բարեխօսեցէք առ Տէր վասն մեր»:

«Որք արժանի եղէք տեսանել մարմնով զՈրդին Աստուծոյ յայտնապէս. բարեխօսեցէք առ Տէր վասն մեր»:
(Շարական)

Շարականագրի այս բառերը թերեւս այնքան պարզ, բայց եւ այնպէս ճշմարտութիւնը կը խօսին Քահանայի մասին.

Շարականի տողերուն մէջ շեշտուած են երեք հիմնական մտածում. առաջինն այն է, որ Քահանան նման է Քրիստոսի աշակերտներուն, որոնք եւս առաքուած էին տիեզերքի մէջ, մեզ կը բարեխօսեն Տիրոջ մօտ: Երկրորդը այն է, որ ինչպէս աշակերտներն ու առաքելները, նոյնպէս եւ քահանաները պատուէր կը ստանան քաջօրէն քարոզելու աշխարհի մէջ կեանքի խօսքը: Եւ վերջապէս երրորդը այն է, որ ինչպէս աշակերտներն ու առաքելները արժանի եղան իրենց իսկ աչքերով տեսնելու Աստուածորդուն, նոյնպէս Քահանաները՝ իրենց հաւատքով կարող են նոյնպիսի վկայութիւն տալ Քրիստոսի Անձին մասին:

Իւրաքանչիւր հոգեւորական իր կեանքը ի սպաս կը դնէ Եկեղեցւոյ ծառայութեան, երբ ներքին ձայն մը զինք կը կանչէ: Այդ ձայնը կոչումն է. հաւատքի զգացողութեան գերագոյն պահը, երբ քրիստոնէայ մարդը իր մէջ այնքան զօրեղ կը զգայ ծառայելու զգացումը եւ կը

հետեւի Քրիստոսի հրաւերին, երբ Ան կը պատգամէ.
«Վերցուր խաչը եւ հետեւիր ինձ»:

Քահանայից ծննդեան տարեդարձներու եւ յատկապէս Ձեռնադրութեան եւ Օծման ամեակներուն նուիրուած այս հանդիսութիւնը կը միտի ընդգծել կարեւորութիւնը Քահանայական կոչման եւ առաքելութեան, որը գործնապէս կ'արտայայտուի հոգեւոր ապաստարարութեան կամ ծառայութեան կեանքով:

Ճշմարիտ է, որ Քահանան իր կեանքի ասպարէզը կ'ընտրէ, երբ ներքին ձայն մը զինք կը կանչէ: Այս հոգեւոր իրավիճակին համար ճշդուած ժամ կամ օր չկայ: Այդ կոչումը կը ծնի մեր մէջ պարագայի մը մէջ եւ այդ պահուն եւեթ կը զգանք, որ աներեւոյթ ձեռք մը մեզ կը բարձրացնէ վեր, որպէսզի հետեւինք ի վերուստ եկած ձայնին եւ խոնարհինք Աստուծոյ եւ մարդկանց առաջ:

Ո՞վ է քահանան, եթէ ոչ Քրիստոսի հետեւողը եւ ընդհուպ խաչակիցը Անոր: Տարբերութիւնը, սակայն, այն է, որ Քրիստոս կատարեալ է, եւ Ինքն է Ճանապարհը, Ճշմարտութիւնը եւ Կեանքը, իսկ մարդը տկար է իր էութեամբ, եւ սակայն, հաւատքի զօրութեամբ իր կարելին ի գործ կը դնէ ըլլալու նմանակից Քրիստոսի:

Քահանաները մեր Թեմի հարստութիւնն են՝ իրենց ծառայութեամբ: Իրենց աղօթքի կեանքն ու նուիրումը համայնքի կեանքը կը միաւորէ: Անոնք Հոգեւոր Հովիւներ են, ովքեր կը մատակարարեն Աստուծոյ խօսքը եւ կ'ուզեն մշակել մարդուն կեանքը Քրիստոսի սիրով եւ իմաստութեամբ:

Այս երեկոյի հանդիսութիւնը պատեհութիւն կ'ընձեռեմ մեզ արտայայտելու բոլորիս երախտագիտութիւնը մեր քահանայից ծառայութեան դիմաց եւ մաղթելու, որ Դուք բոլորդ Ձեր ծառայութեան ճանապարհը շարունակէք առաւել զօրացած՝ Սբ. Հոգւոյ շնորհներով:

Տօնական այս առիթով մեր խորին երախտիքը մեր Քահանայ հայրերուն եւ իրենց ընտանիքներուն: Կ'ուզենք իւրաքանչիւրին փոխանցել խորհրդանշական նուէր մը, հայկական ոճով պատրաստուած խաչ մը, որ պէս նշան մեր սիրոյ ու գնահատութեան: Խաչն է եղած խորհրդանիշը մեր առաքելութեան, քանզի խաչին մէջ կը տեսնենք Տէրը եւ կը հետեւինք Անով մեր առջեւ բացուած ճանապարհին:

Նոյեմբեր 14, 2018

ՄԵՐ ՄԷՋ ՄՇԱԿԵՆՔ ՀՈԳԵԻՈՐԱԿԱՆԸ

Բազում առիթներով անդրադարձած ենք Քահանայութեան խորհուրդին եւ մեր մտածումները բաժնած եւ այն համայնքերուն հաւատացեալներուն որտեղ գտնուած ենք հովուական պաշտօնով, ե՛ւ Ճեմարանականներուն Սբ. Էջմիածին մեր այցելութեանց ընթացքին ե՛ւ երբեմն նաեւ անհատներուն կամ փոքր խմբաւորումներուն: Այսօր, երբ անգամ մը եւս պատեհ առիթը կ'ունենանք մեր խօսքն ուղղելու Թեմի քահանայից, մեր սիրեցեալ եղբայրներուն ի Քրիստոս, կ'ուզենք պարզ բառերով փոխանցել մեր մտածումներն ու խորհուրդները: Քահանայութեան կոչումը մենք մեր հոգեւոր կեանքին մէջ զգացած ենք ու ապրած դեռեւս ի մանկութենէ եւ այն փայփայած, որպէսզի ուռճանար մեր մէջ եւ առաւելագոյնս իմաստաւորէին մեր ծառայութիւնը Աստուծոյ փառքին համար եւ ի խնդիր Հայց. Առաքելական մեր Սբ. Եկեղեցւոյ եւ հաւատացելոց հոգեւոր կեանքի զարգացման:

Այսօր կ'ուզենք ի մասնաւորի շեշտը դնել նաեւ այն հիմնական մտածումին վրայ, որ բացի մեր տասնեակ տարիներու կեանքի մէջ ունեցած օրինակելի մտատիպարներէն, որոշակի դերակատարութիւն է ունեցած նաեւ Ժողովուրդը: Ժողովուրդին հաւատքը եւ հաւատացելոց խոնարհ ծառայութիւնը եղած է պարտաւորեցնող, որպէսզի մենք մեր մէջ մշակէինք հոգեւորականը: Անշուշտ, ունեցած ենք եւ վստահաբար պիտի ըլլան թերացումի պահեր, բայց Աստուծոյ առաջնորդութեամբ եւ Ժողովուրդի սիրովը առաջնորդուած՝ սրբազրած ենք մեզ, որպէսզի մնայինք ուղիղ ճանա-

պարհի մէջ: Դասեր ենք քաղած հաւատացելոց բոլոր խաւերէն, տարիքային տարբեր մակարդակներու վրայ գտնուողներէն, այն քաջ համոզումով, որ Աստուած մեզի կը խօսի բոլորի մէջէն: Կը մնայ որ լսենք Աստուծոյ ձայնը եւ պատրաստակամ ըլլանք՝ հսկելու մեր հոգեւոր կոչումին վրայ:

Հոգեւորականաց այս հաւատքին մեր փափաքն է, որ բոլորս ունենանք անկեղծ զրոյցներ եւ միմեանց հետ բաժնենք մեր հովուական փորձառութիւնները եւ այն ժամանակ պիտի հասկնանք, որ միմեանց զօրավիգ մնալով կը զօրացնենք նաեւ Եկեղեցին, կը ներշնչենք հաւատացեալները՝ Աստուծոյ խօսքին քաջալերութեամբ եւ բոլորանուէր ծառայութեամբ:

Այստեղ կ'ուզենք մէջբերել մտածում մը մեր անցեալ ելոյթներէն, ուր շեշտը դրած ենք նաեւ քահանային մշտական պատրաստութեանը վրայ, որպէսզի մեր ծառայութիւնը ըլլայ արդիւնատուր. «Քահանաները, որոնք կը պատասխանեն Աստուծոյ կանչին, պարտ են մասնաւոր պատրաստութեամբ, յարատեւութեամբ մշակել իրենց հոգեւոր կեանքը, որպէսզի կարողանան համայնքին կեանքը շաղախել Աստուծոյ խօսքով եւ Աւետարանի լոյսովը»: Մեր համատեղ խոկումները այս նպատակը կը հետապնդեն, որպէսզի ունենանք վերապատրաստութեան առիթը, որպէսզի ծառայութեան վերադառնանք առաւել զօրացած՝ խորացնելով մեր հաւատքի ուժականութիւնը: Հետեւաբար, մեր կարելին ի գործ կը դնենք ընթերցումներով մեր մէջ խորացրնելու եւ կրօնական գիտելիքները, եւ հոգեւոր կեանքի գիտակցութիւնը: Եւ գիտենք, որ դեռ աւելին պէտք է կատարենք, որուն խոստումը մենք կ'ուզենք յարգել:

Մեր խօսքը իր եզրակացութեան կ'ուզենք բերել նաեւ մեր այլ մտածումով, որ կը խօսի աղօթքի զօրութեան եւ ներագդեցութեան մասին: Մէջբերումը կը կատարենք մեր նախկին գրութիւններէն հետեւեալ բառերով. *«Աղօթանուէր կեանքով ապրող քահանային կեանքը լոյսի ներկայութիւնն է համայնքի կեանքին մէջ: Աղպիսին նաեւ լոյսի կը հրաւիրէ իր համայնքի զաւակները եւ փաստօրէն իր կեանքով կը դառնայ եւ՝ խաղաղութիւն, եւ՝ սէր, եւ՝ աստուածայինը ճառագայթող ներկայութիւն»:*

Հետեւաբար հետեւինք Քրիստոսի աղօթական կեանքի օրինակին եւ թող գալիք խոկումի երկու օրերը դարձնենք մեր հոգեւոր կեանքի նորոգութեան օրեր: Մեր ամբողջ էութեամբ աղօթենք եւ իրար նկատմամբ տածենք քրիստոնէական եղբայրական սէրն ու հոգածութիւնը, որպէսզի միասնական կարողանանք ի կատար ածել Եկեղեցւոյ առաքելութիւնը:

Բարի երթ բոլորիս: Քայլենք Աստուծոյ գծած ճանապարհէն եւ առաջնորդենք միմեանց նոյն ճանապարհին, որպէսզի մեզի հետեւի նաեւ Աստուծոյ ժողովուրդ:

Օգոստոս 25, 2018

“SHARED LEADERSHIP”

“If Christian laymen, ministries, and priests really want to be agents of social change, the first thing they have to learn is how to share leadership.”

Henry J. M. Noumen

«Եթէ քրիստոնէայ առաջնորդներ, ըլլան անոնք աշխարհիկ թէ հոգեւոր սպասաւորներ կ’ուզեն տեսնել ընկերային կեանքին մէջ փոփոխութիւններ, ապա ամէն բանէ առաջ պիտի սորվին միասնական առաջնորդութեան ոգին պահպանել»:

Սիրելի Տէր Զաքարիա,

Յարգարժան Ծխական Խորհուրդ եւ պատուարժան Ժողով,

Հովուական մեր այցը կը զուգադիպի Եկեղեցւոյ Օծման 9-րդ տարեդարձին: Եւ փառք Աստուծոյ, որ նոր եկեղեցին ներկայ բոլոր յարմարութիւններով իր առաքելութիւնը կը շարունակէ առաւելաբար կեդրոնանալով Աստուծոյ խօսքին քարոզչութեան վրայ եւ յատկապէս նորահաս սերունդին մէջ արթուն պահելով քրիստոնէական հաւատքի գիտակցութիւնն ու ազգային ոգին:

Մեր խօսքի հիմնական շեշտը այս անգամ կ’ուզենք կեդրոնացնել համատեղ աշխատանքի կամ համատեղ առաջնորդութեան վրայ:

Բնական է, մեր այս պատգամը կը վերաբերի մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն եւ այսօր նաեւ Սբ. Արգար եկեղեցւոյ ընտանիքին: Արդարեւ, Սբ. Արգար եկեղեցին իր յարակից յարմարութեամբ օրինակելի համայնք մը կը ներկայացնէ եւ մենք բոլորով զայն ոչ

միայն պահել-պահպանելու, այլև զարգացնելու պարտականություն ունինք:

Ինչքան հաճելի է, որ այս համայնքը իրեն յատուկ գործելակերպ մը ունի: Պահելով հանդերձ հոգեւոր առաքելութեան հիմնական ուղղութիւնը, Մբ. Մբգարը որոշապէս կը ձեռնարկէ միջոցառումներ, որոնք ունին ազգային նշանակութիւն, ինչպիսիք են՝ Հայաստանի Անկախութեան Տօն, Վարդանանք եւ այլն: Մաէական մօտեցում մըն է մեր ազգի զաւակները Հայրենիք - Մբ. Էջմիածին կապերու տեսանկիւնէն դիտուած: Եւ այս մօտեցումին համար մենք կը յղենք մեր գնահատանքն ու գոհունակութիւնը:

Միբելիներ ի Քրիստոս, այս անգամ ձեզ այցի գալով կ'ուզենք նաեւ ձեզի հետ թողուլ կարեւոր հարցադրում մը, որուն պատասխանը պիտի սպասենք մինչեւ մեր յաջորդ հանդիպումը ձեզի հետ:

Ինչպիսի՞ հեռանկար կը հետապնդէ Մբ. Մբգար Հայց. Եկեղեցին յառաջիկայ 25 տարիներու համար: Որո՞նք են առնուելիք քայլերը, որոնք պիտի ապահովեն եկեղեցոյ պայծառութիւնը՝ ի խնդիր գալիք սերունդներուն: Վստահաբար մտածած էք այս մասին, բայց մեր փափաքն է, որ այդ ուղղութեամբ շատ աւելի մասնագիտացուած մօտեցում ցուցաբերէք, որպէսզի ապահովենք նաեւ մեր զաւակաց համար վաղուան Եկեղեցին:

Տարեդարձներ կը նշանաւորուին, երբ նոր յանձնառութիւններ կ'առնենք յառաջ տանելու համար մեր կառոյցներու առաքելութիւնը եւ աւելին՝ այս կերպ ցոյց տուած ըլլալու համար մեր երախտագիտութիւնը այն սերունդին, ովքեր տեսիլքն ունեցան դառնալու համար հիմնադիրներն Եկեղեցոյ եւ համայնքին:

Մեպտեմբեր 10, 2018

ՀՈՎՈՒԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

«Երկինք եւ երկիր անցցեն, եւ բանք իմ մի՛ անցցեն»:

(Մարկոս 13:31)

Օրուան Աւետարանէն քաղուած այս խօսքը մեզի կը յիշեցնէ այն մասին, որ Աստուծոյ պատգամները յաւիտենական են: Կեանքի մէջ մենք շատ բան կը լսենք ու կը կարդանք, բայց իրօք մեզի համար յստակ կը դառնայ այն, որ Աստուծոյ խօսքն է ճշմարիտ եւ արդար եւ նոյն խօսքը՝ ժողովուրդներու կեանքը անցեալին եւ այսօր պայծառակերպած է, որպէսզի խաւարի մէջ չմնանք եւ կեանքը ապրինք Աստուծոյ հետ:

Երբ մեր շուրջը կը նայինք, մեզի համար յստակ կը դառնայ, որ անհատներ կամ հաւաքականութիւններ, ովքեր պարպուած են Աստուծոյ խօսքէն, իրենց կեանքը կ'ապրին աննպատակ եւ յաճախ կորսնցուցած իրենց մէջ ճշմարիտ ուրախութիւնը:

Այս գեղեցիկ Եկեղեցին պէտք է դարձնենք մեր Թեմի կարեւոր ուխտավայրը, ուր հաւատացեալներ աղօթքի պէտք է գան եւ նորոգեն իրենց հոգեւոր կեանքը: Բնական է՝ այն կը պահանջէ լուրջ եւ հետեւողական աշխատանք, բայց վստահ եղէք, որ արդիւնքը պիտի ըլլայ իրօք ներշնչող: Մենք գիտենք, որ նախափորձեր եղան եւ սակայն աշխատանքի ընթացքը դանդաղեցաւ: Մեր կոչն է, որ վերսկսինք աշխատանքը եւ մեր նպատակը՝ Եկեղեցին իր համայնքին դերին մէջ պահելով հանդերձ դարձնենք նաեւ ուխտավայր:

Հովուական մեր այցի առիթով մենք ձեզ բոլորդ կ'ողջունենք սիրով եւ փառք կու տանք Աստուծոյ որ

ձեզ բոլորդ կը գտնենք քաջառողջ եւ Եկեղեցւոյ կեանքին մէջ լծուած աշխատանքի: Մեր աղօթքն է առ Աստուած, որ բոլորդ մնաք քաջ ձեր հաւատքի մէջ, քաջառողջ եւ ընտանեկան կեանքով երջանիկ: Յիշենք սակայն, մեր Տիրոջ խօսքը, որ այսօր մեզի կը տրուի որպէս օրուան հոգեւոր հացը, որ, «Երկինք եւ երկիր անցցեն, եւ բանք իմ մի՛ անցցեն»:

Սեպտեմբեր 8, 2018

ՄԲ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑՈՒ ՓԱՌԱՊԱՆԾ 90-ԱՄԵԱԿ

Սիրելի բարեպաշտ հայորդիք,

Մբ. Երրորդություն Հայց. Առաքելական Եկեղեցւոյ ծննդեան 90-ամեակն է եւ հրաշալի առիթն է տօնախմբելու 90 տարիներու պատմութիւնը նուիրագործուած, Թեմակալ Առաջնորդներու, Հոգեւոր հովիւներու եւ վաստակեալ հաւատաւոր ժողովուրդի ծառայութեամբ:

Մենք փառք կու տանք Ամենակալին Աստուծոյ, որ մեր երիտասարդական տարիներուն խոնարհ սրտով եւ հոգով ձեզ հովուելու օրհնութիւնը ունեցանք եւ ձեր բոլորին սիրով հարստացած մինչեւ այսօր կը շարունակենք մեր ծառայութիւնը ի խնդիր Հայց. Եկեղեցւոյ Աստուծոյ օգնականութեամբ եւ ձեր բոլորի աղօթքներով:

Մեր բարի մաղթանքները ձեր սիրեցեալ Թեմակալ Առաջնորդին, յանձին Գերշ. Տ. Արգար Եպիսկոպոս Յովակիմեանին, Եկեղեցւոյ արժանաւոր ու նուիրեալ Հովիւ՝ Արժանապատիւ Տ. Զարեհ Ա. Քինյ Զարգարեանին իր հաւատանուէր ծառայութեան, եւ բոլորիդ անխտիր, որպէս հաւատաւոր զաւակները մեր Մայր Սուրբ Եկեղեցւոյ:

Սիրելիներ, պայծառ եւ լուսաւոր պահեցէք Մբ. Երրորդութիւն Հայց. Եկեղեցին, որովհետեւ սա է այն ժայռը, որուն վրայ կը կառուցուին հայ ընտանիքները որպէս մէկական մանրակերտը Հայց. Եկեղեցւոյ: Համախմբուէք ձեր սիրելի Առաջնորդին, Հոգեւոր Հովիւին շուրջը եւ ձեր հոգին ու սիրտը, միտքն ու ամբողջ էութիւնը ներդրէք այս նուիրական օջախէն ներս:

Մեր յուշերուն մէջ անջնջելի պիտի մնան քաղցր յիշատակներ բոլորիդ հետ կապուած, այս Սբ. Եկեղեցւոյ հետ առնչուած: Հոգով ձեզի հետ ենք եւ բառերը բաւական չեն արտայայտելու մեր սիրոյ անչափելիութիւնը եւ երանի թէ կարողանայինք բոլորդ գրկել եւ յագեցնել մեր կարօտը:

Աստուծոյ սէրը թող միշտ առաջնորդէ մեզ բոլորս դէպի նոր արշալոյսներ, որպէսզի բոլորով դառնանք Հայց. Եկեղեցւոյ կանթեղի լոյսին մաքուր ձեթը: Ամէն:

Սեպտեմբեր 1, 2018

«ԵՐԿԻՆՔ ԵՒ ԵՐԿԻՐ ԱՆՑՑԵՆ ԵՒ ԲԱՆՔ ԻՄ ՄԻ՝ ԱՆՑՑԵՆ»

(Մատթ. 24:35)

Օրուան Աւետարանէն քաղուած այս խօսքը մեզի կը յիշեցնէ այն մասին, որ Աստուծոյ պատգամները յաւիտենական են: Կեանքի մէջ մենք շատ բան կը լսենք ու կը կարդանք, բայց իրօք մեզի համար յստակ կը դառնայ այն, որ Աստուծոյ խօսքն է ճշմարիտ եւ արդար եւ նոյն խօսքը՝ ժողովուրդներու կեանքն անցեալին եւ այսօր պայծառակերպած է, որպէսզի խաւարի մէջ չմնանք եւ կեանքը ապրինք Աստուծոյ հետ:

Երբ մեր շուրջը կը նայինք, մեզի համար յստակ կը դառնայ, որ անհատներ կամ հաւաքականութիւններ ուրիշ պարպուած են Աստուծոյ խօսքէն, իրենց կեանքը կ'ապրին աննպատակ եւ յաճախ կորսնցուցած իրենց մէջ ճշմարիտ ուրախութիւնը:

Այս գեղեցիկ Եկեղեցին պէտք է դարձնենք մեր Թեմի կարեւոր ուխտավայրը, ուր հաւատացեալներ աղօթքի պէտք է գան եւ նորոգեն իրենց հոգեւոր կեանքը: Բնական է այն կը պահանջէ լուրջ եւ հետեւողական աշխատանք, բայց վստահ եղէք, որ արդիւնքը պիտի ըլլայ իրօք ներշնչող: Մենք գիտենք, որ նախափորձեր եղան եւ սակայն աշխատանքի ընթացքը դանդաղեցաւ: Մեր կոչն է, որ վերսկսինք աշխատանքը եւ մեր նպատակը՝ Եկեղեցին իր համայնքին դերին մէջ պահելով հանդերձ դարձնենք նաեւ ուխտավայր:

Հովուական մեր այցի առիթով մենք ձեզ բոլորդ կ'ողջունենք սիրով եւ փառք կու տանք Աստուծոյ որ ձեզ բոլորդ կը գտնենք քաջառողջ եւ Եկեղեցւոյ կեանքին

մէջ լծուած աշխատանքի: Մեր աղօթքն է առ Աստուած,
որ բոլորդ մնաք քաջ ձեր հաւատքի մէջ, քաջատողջ եւ
ընտանեկան կեանքով երջանիկ: Յիշենք սակայն, մեր
Տիրոջ խօսքը, որ այսօր մեզի կը տրուի որպէս օրուան
հոգեւոր հացը, որ, «Երկինք եւ երկիր անցցեն, եւ բանք
իմ մի՛ անցցեն»:

Սեպտեմբեր 8, 2018

«ՕՐԻՆԱԿ ԼԻՆԻՋԻՔ ՀԱԻԱՏԱՑԵԼՈՑ»

Օրուայ Աւետարանական դասերը քաղուած են Տիմոթէոսի առաջին նամակէն (Գլուխ 4:11 – 5:10) եւ Յովհաննու Աւետարանէն (Գլուխ 3:13-21): Իսկ բովանդակութեամբ այնքան հարուստ են, որ կարելի չէ այստեղ, քարոզի մը սահմաններուն մէջ անդրադառնալ իւրաքանչիւր խօսքի: Այդ իսկ պատճառով կ'ուզենք մեր խորհրդածութիւնը կեդրոնացնել Պօղոս Առաքեալի Տիմոթէոսին ուղղուած հետեւեալ խօսքին վրայ. «Օրինակ լինիջիք հաւատացելոց...»:

Առաքեալի այս խօսքը կը յիշեցնէ այն գլխաւոր պարտականութեան մասին, որ իւրաքանչիւր քրիստոնէայ պարտ է ի կատար ածել: Քրիստոս՝ Աստուծորդին գերագոյն օրինակն էր Իր առաքեալներուն եւ անոնց յաջորդող բոլոր սերունդներուն: Եւ եթէ հետեւող ենք Քրիստոսի, ապա մեր կեանքով պարտ ենք բարի օրինակ դառնալ բոլորին:

«Մի անփոյթ առներ զշնորհացդ որ ի քեզ են»:

Բոլորիս տրուած են շնորհներ. ըլլայ Մկրտութեան խորհուրդով եւ տակաւին մնացեալ խորհուրդներով, եւ իրաւունք չունինք անփոյթ ու անտարբեր գտնուելու անոնց նկատմամբ: Եթէ մեզի տրուած շնորհները կեանքի չենք կոչեր, ապա թերացած ենք Աստուծոյ հանդէպ մեր հաւատքի կեանքին մէջ եւ առհասարակ:

Վերջապէս, Առաքեալը կը յիշեցնէ մեզ քրիստոնավայել կեանքի արժէքին մասին. «Զգոյշ լինիջիք անձին եւ վարդապետութեանդ եւ ի դմին յամեսջիր, զայդ եթէ առնիցես, եւ զանձն ապրեցուցես, եւ զայնոսիկ որ քեզն լսիցեն»:

Այստեղ պէտք է մտաբերենք Վարդապետի խօսքը. «Ես եկի, զի առաւել կեանս ունիցիք» (Յովհ. 10:10): Հետեւաբար, ճշմարիտ կեանքը Քրիստոսի վարդապետութեամբ ձեռք բերուած կեանքն է, երբ կը կատարենք Աստուծոյ կամքը, կը մերժենք նիւթական արժէքներու հանդէպ ցուցաբերուած մօտեցումները, եւ վեր կը դասենք հոգեւոր արժէքները, որպէս մնայունին ու աստուածայինին արտայայտութիւնը:

Իսկ երբ կը կարդանք օրուան Աւետարանը, քաղուած Յովհաննու Աւետարանչի գրչէն (Գլուխ 3: 13-21) ապա մեզի համար շատ յստակ կը դառնայ այն գերագոյն ճշմարտութիւնը, որ Քրիստոսով է պայմանաւորուած յաւիտենական կեանքը:

«Որովհետեւ Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ Իր Միածին որդին աշխարհ ղրկեց, որպէսզի ով որ հաւատայ Անոր չկորսուի, այլեւ՝ յաւիտենական կեանք ունենայ» (Յովհ. 3:16):

Այս խօսքը եւ շարունակուող պատումները կը միտին մշակել մեր հոգեւոր կեանքը այն տեսիլքով, որուն մասին կը խօսի առաքեալը՝ Տիմոթէոսին ուղղուած նամակին մէջ:

Մեր պատգամն է, որ Կիրակնօրեայ այս սուրբ Պատարագը դառնայ դուռը մեզ դէպի Աստուած առաջնորդող, քանզի Աստուծոյ հետ ապրուած կեանքը լուսաւոր է եւ խաղաղ:

Յուլիս 28, 2018

ՅԻՍՈՒՍ ԳԱՆՁԱՆԱԿԻՆ ԴԻՄԱՑ

«Յիսուս գանձանակին դիմաց նստած կը նայէր, թէ բազմութիւնը գանձանակին մէջ ի՛նչպէս դրամ կը ձգէ: Շատ հարուստներ շատ բան ձգեցին: Աղքատ այրի մըն ալ եկաւ ու երկու լումայ ձգեց, որ նաքարակիտ մը կընէ: Իր աշակերտները կանչելով իրեն՝ ըսաւ անոնց. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ այս աղքատ այրին գանձանակը դրամ ձգողներուն բոլորէն աւելի ձգեց, որովհետեւ բոլորը իրենց առատութենէն ձգեցին, բայց ան՝ իր կարօտութենէն ձգեց իր ամբողջ ունեցածը, իր ամբողջ ապրուստը»:

(Մարկոս 12:

40-44)

Փորձենք հասկնալ եղելութիւնը:

Մեզի ներկայացողը Քրիստոս է ով մեզի կը հետեւի, մեր կեանքին ընթացքին, թէ ինչպէ՞ս կ'ապրինք եւ կ'արժեւորենք այն:

Գանձանակը նոյնիքն մեր կեանքն է, մեր ընտանիքն է, մեր զաւակները, եւ վերջապէս մեզի վստահուած պատասխանատուութիւնները, եկեղեցին, դպրոցը:

Մեծահարուստները մենք ենք: Յաճախ կը նուիրենք մեր աւելորդացէն եւ չենք ցուցաբերեր ամբողջական նուիրում:

Այրի կիներ եւ անոր կերպարը օրինակ է ճշմարիտ քրիստոնեայի, ինչ որ Քրիստոս Ինք կը ներկայացնէ: Մենք եւս մեր կեանքով կրնանք նմանիլ այրի կնոջ:

Յիսուս կանչեց իր աշակերտները եւ ըսաւ. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ այս աղքատ այրին գանձա-

նակը դրամ ձգողներուն բոլորէն աւելի ձգեց, քան գանձանակին մէջ միւս բոլոր դրամ ձգողները իրենց աւելորդէն ձգեցին, իսկ ան՝ իր չքաւորութենէն ձգեց այն ամէնը, ինչ որ ունէր, իր ապրուստը՝ եղածին չափ»:

Յիսուս կանչեց: Բոլորս ալ պիտի կանչուինք հաշուետուութեան, ինչպէս Տէրը Տնտեսի առակին մէջ կը յիշեցնէ մեզ, երբ իր խօսքը կ'ուղղէ Տնտեսին. «Տու՛ր զհաշիւ տնտեսութեան քո»:

Հաշուետու ենք մեզի շնորհուած կեանքին: Մենք չենք կրնար այն ապրիլ պատահականօրէն: Սուրբ է տրուած նուէրը՝ կեանքն ինքնին: Այն բացառիկ նուէր է եւ պէտք է ապրիլ իմաստութեամբ, ծառայութեամբ, առանց գերին դառնալու նիւթականին, այլ նմանուելով այրի կնոջ, որ արհամարհեց նիւթը եւ հոգին խոնարհեցուց Աստուծոյ առջեւ:

Այսօր կը տօնախմբենք նաեւ Ս. Թարգմանչաց տօնը, որն ամբողջ օրեր անընդհատ տօնախմբեցինք մեր համայնական կեանքին մէջ:

Թարգմանիչ վարդապետներուն առաջնորդներն էին Ս. Սահակ Պարթեւ հայրապետն ու Ս. Մեսրոպ Մաշտոց վարդապետը, որոնք տեսիլքն ունեցան Աստուածաշունչի հայերէն թարգմանութեան, Աստուծոյ խօսքը բերելու համար ժողովուրդին: Անոնց կեանքը կը նմանի այրի կնոջ, որոնք նուիրեցին կեանքը «գոյի չափ զկեանս իւր»:

ՄԵՐՄՆԱՑԱՆԻՆ ԱՌԱԿԸ՝ ՊԱՏԿԵՐԸ ՄԵՐ ԿԵԱՆՔԻՆ

Երբ կը կարդանք Մերմնացանի առակը Մատթեոսի Աւետարանի 13-րդ գլուխին մէջ, այնտեղ կը գտնենք պարզ եւ շատ դիպուկ կերպով առակին մեկնութիւնը: Մեզի կը մնայ պարզապէս ուշադիր հետեւիլ գլխաւոր պատգամին, որն ամփոփուած է 13-րդ գլուխի վերջին համարին մէջ. «Իսկ այն, որ կը լսէ խօսքը (Աստուծոյ) եւ կը հասկնայ՝ պտուղ կու տայ, կայ որ՝ հարիւր, եւ կայ որ՝ վաթսուն, եւ կայ որ՝ երեսուն»:

Ուրեմն, Մերմնացանի առակին գլխաւոր պատգամն այն է, որ մարդը դառնայ հողը, որ իր մէջ պէտք է վերցնէ Աստուծոյ խօսքը եւ անով իսկ լուսաւորէ իր հոգեւոր կեանքը, որովհետեւ Աստուծոյ խօսքը մարդուն կեանքը կ'առաջնորդէ բարի ճանապարհներով, որպէսզի կեանքն ապրինք Աստուծոյ կամքին համաձայն եւ մեր բովանդակ կեանքով կատարենք Քրիստոսի Աւետարանէն ճառագայթող պատգամները: Այլապէս մենք կը նմանինք ճանապարհի եզրին ցանուած սերմին, կամ ապառաժի վրայ ինկած սերմին, եւ կամ փուշերուն մէջ նետուած սերմին: Մենք մեր կեանքով պէտք է նմանուինք հողին մէջ ինկած սերմին, որպէսզի լսելով Աստուծոյ խօսքը՝ այն գործի վերածենք, ապրինք Աստուծոյ խօսքին համաձայն եւ դառնանք լոյս աշխարհի մարդկանց կեանքին մէջ:

Մարդը պէտք է դառնայ կրողը Աստուծոյ: Այդպիսին է մարդը, երբ աղօթող է եւ իր հաւատքը կենսագործող: Կեանքը գեղեցիկ է եւ օրհնեալ, երբ մեր հոգի-

ներուն մէջէն կը ճառագայթէ սէրը Աստուծոյ եւ նոյն սէրը կը քանդէ խաւարը մարդկանց հոգիներուն մէջ:

Աստուծոյ խօսքը երբ արմատ կը նետէ մեր հոգիներուն մէջ, ապա այլեւս մեր ամբողջ կեանքին ընթացքը կ'ըլլայ արդարութեան եւ խաղաղութեան ճանապարհորդութիւն մը: Ինչո՞ւ համար մարդիկ չարը կը գործեն, եւ ժողովուրդներ պատերազմի մէջ են, որովհետեւ իրենց կեանքը կը նմանի այն սերմին, որ ճանապարհի եզրին է ինկած կամ ապառաժի ու փուշերուն մէջ նետուած: Մինչդէռ երբ սերմը՝ Աստուծոյ խօսքը կը պահենք մեր հոգիներուն մէջ, ապա կը կատարենք Աստուծոյ սուրբ գործը:

Ուրեմն, քայլենք Աստուծոյ գծած ճանապարհէն, որպէսզի դառնանք լոյսի առաքեալներ:

Յունիս 13, 2019

ՓԱՐԻՍԵՑԻՆ ԵՒ ՄԱՔՍԱԻՈՐԸ

«Երկու մարդիկ տաճար ելան աղօթելու, մեկը՝ Փարիսեցի, միւրը՝ մաքսաւոր: Փարիսեցին մէկ կողմ կեցած էր եւ, ինքնիրեն, այս աղօթքը կ'ընէր. «Աստուած իմ, զոհութիւն քեզի, որ ես նման չեմ ուրիշ մարդոց, ինչպէս՝ յափշտակողները, անիրաւներն ու շնացողները, եւ կամ ինչպէս այս մաքսաւորը. այլ շաբաթը երկու անգամ ծով կը բռնեմ եւ իմ բոլոր ստացուածքներէս տասանորդ կու տամ»: Իսկ մաքսաւորը մէկ կողմ կեցած էր եւ չէր իսկ ուզեր իր աչքերը երկինք բարձրացնել, այլ կուրծքը կը ծեծէր ու կըսէր. «Աստուած, ներէ՛ ինձի՝ մեղաւորիս»: Կըսեմ ձեզի, ասիկա աւելի արդարացած իջաւ իր տունը, քան թէ միւրը. որովհետեւ, ով որ կը բարձրացնէ իր անձը, պիտի խոնարհի, եւ ով որ կը խոնարհեցնէ իր անձը, պիտի բարձրանայ» (Դուկ. 18:9-14):

Աղօթքի կեանքին մէջ մեր կեդրոնացումը պիտի հաստատենք միայն Աստուծոյ վրայ: Օրուան Աւետարանական դասը այդ կը պատգամէ: Փարիսեցին իր աղօթքի սլաքը չկարողացաւ կեդրոնացնել Աստուծոյ վրայ եւ սկսաւ բամբասանքով զբաղիլ: Իսկ մաքսաւորը՝ իր աղօթքի սլաքը կը կեդրոնացնէ Աստուծոյ վրայ եւ կը խնդրէ իր հոգեւոր էութեանը մաքրութիւնը, լուացումը, որովհետեւ ինքզինք կը համարէ մեղաւոր:

Քրիստոս Իր առակները կը ներկայացնէ կեանքէն առնուած պատկերներու վրայ, որովհետեւ նոյն պատկերներու մէջ Ինք մատնացոյց կ'ընէ մեզ - այլ խօսքով մեր կեանքի ընթացքը կը տեսնենք: Քրիստոսի կողմէ որդեգրուած ուսուցման այս մօտեցումը օգտակար է մեզի:

- Աղօթքի կեանքի գլխաւոր կերպարն է Քրիստոս՝ Աստուածորդին:
- Աղօթքի կեանքի գլխաւոր նպատակն է մեր մնայուն հաղորդակցութիւնը Աստուծոյ հետ, որովհետեւ կ'ապահովենք որդեգրութիւնը Աստուծոյ կողմէ:
- Աղօթքը՝ հայելին է մեր կեանքին, որպէսզի մեր մեջ անարատ պահենք Աստուծոյ պատկերը:

Առակը կ'աւարտի հրաշալի պատգամով մը. «Որովհետեւ ով որ իր անձը կը բարձրացնէ պիտի խոնարհի, եւ ան որ իր անձը կը խոնարհեցնէ պիտի բարձրանայ»:

Փաստօրէն, փարիսեցին իր անձը կը բարձրացնէր Աստուծոյ արդարանալով իր կատարած գործերուն համար, մինչ մաքսաւորը խոնարհումով կը ներկայացնէ իր աղօթքը եւ անձին մեղաւոր ըլլալը: Եւ Քրիստոս Իր խօսքը կ'աւարտէ ըսելով, որ մաքսաւորը արդարացած վերադարձաւ տուն:

Դեկտեմբեր 16, 2018

ԳՈՀԱԲԱՆԱԿԱՆ ԶԳԱՑՈՒՄ

«Դուք անոնց ուտելիք տուեք»:

(Մատթեոս 14: 16)

Մատթեոսի Աւետարանին մէջ կը կարդանք «Հացին առաջին բազմացումը» վերնագրուած հրաշքին պատմութիւնը, որուն մէջէն քաղելիք շատ դասեր ունինք:

Առաջին հերթին մեր առջեւ կը պարզուի գեղեցիկ պատկեր մը, ուր Յիսուսի շուրջը տարածուած կը տեսնենք հոծ բազմութիւն մը, որոնք եկած էին լսելու Վարդապետին պատգամները: Օրը երեկոյին կը հասնի, եւ աշակերտները կը յիշեցնեն Վարդապետին, որ ժամն է, որ ժողովուրդն արձակէր, որպէսզի անոնք մութէն առաջ կատարէին նաեւ իրենց գնումները:

Ահաւասիկ այս պահն է, որ Վարդապետը աշակերտներուն ուղղելով իր խօսքը՝ կ'ըսէ. «Դուք անոնց ուտելիք տուեք»: Մենք գիտենք նաեւ, թէ ինչպէս Տէրը հինգ նկանակը եւ երկու ձուկն առնելով՝ կ'օրհնէ եւ կը բաշխէ ժողովուրդին, ու ամենքն ալ կը յագենան: Կատարուածը հրաշք մըն էր, որուն խորքը պէտք է թափանցել:

Այս հրաշքի պատմութենէն մեզի հաղորդուած պատգամը այս է, որ ինչպէս Տէրը գրաց իր ժողովուրդին, մենք եւս մեր հոգեւոր էութեանը մէջ զարգացնենք գութի նոյն գիտակցութիւնը՝ մեզի վստահուած ժողովուրդին նկատմամբ:

Երկրորդ կարեւոր պատգամը այն է, որ բոլորս ի վերուստ տրուած շնորհներ ունինք, զորս պարտ ենք բաշխել մեր նմաններուն եւ ի մասնաւորի անոնց հետ,

ովքեր ծառաւի են եւ անօթի հոգեւորապէս: Փաստօրէն Վարդապետը իր աշակերտներուն արթնութեան կոչ մըն է, որ կը յղէ, որպէսզի իրենց հոգեւոր էութեանը մէջ զգան առանձնաշնորհումը իրենց տրուած շնորհները բաշխելու եւ այդկերպ նմանատիպը դառնան իրենց Վարդապետին:

Մատթէոսի Աւետարանէն մեզի հաղորդուած այս հրաշքի պատմութիւնը մեզի կը ներկայացնէ պատկերը Աստուած եւ մարդ փոխ-յարաբերութեան, ուր Աստուածորդին Իր թելերը լայն պարզած Իր գութն ու կարեկցութիւնը կը տարածէ բոլորին վրայ, եւ մարդը հրաւեր կը ստանայ իր մէջ մշակելու աստուածայինին պատկերը:

Յուլիս 20, 2019

ՀՈԳԵԻՈՐ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԺԷՔՆԵՐԷ ՊԱՐՊՈՒԱԾ

Սիրելի՛ բարեպաշտ հաւատացեալներ,

Աւագ Շաբթուայ սեմին ենք եւ հոգեւորապէս տրամադրուած ենք ըլլալու Աստուածորդու հետ՝ միութիւն մը հաստատելու ի Քրիստոս: Յատկապէս այս օրերուն կը պատշաճի աստուածաշնչային խօսքը՝ «Ինձ համար կեանքը Քրիստոս է» (Փիլիպ. 1.21):

Կ'ուզենք, սակայն, որոշապէս եւ յստակօրէն պատգամ մը յղել մեր ժողովուրդին՝ անդրադառնալով վերջին ամիսներուն հրապարակուած գրութիւններուն, յատկապէս լոյս տեսած tabloid-ի մը մէջ: Այդ անպարկեշտ հրապարակումները, անյարիւր օրուայ խորհուրդին, ունին իրենց պատուիրատուն, որուն անունը մեզի յստակ է, եւ աւելի յստակ են այդ պատուիրատուին նպատակներն ու մտադրութիւնները:

Կ'ապրինք տարօրինակ աշխարհի մը մէջ, ուր ազատութիւնը, յատկապէս խօսքի ազատութիւնը, որոշ մարդկանց մօտ ստացած է բոլորովին այլ՝ սանձարձակութեան, փողոցային վերաբերմունքի իմաստ: Յաճախ նման մօտեցում կ'որդեգրուի յատուկ դիտաւորութեամբ մը, որ մարդիկ ծածկեն իրենց ազահութիւնը կամ խաւարի գործերը՝ մտածելով, որ այդ կերպ գերծ կը մնան լոյսի տակ բերելու ճշմարտութիւնը:

Մեր խօսքը պիտի ըլլայ պարզ ու յստակ: Կատարուած հրապարակումներուն հասցեատէրը մենք չենք եւ կը մերժենք բոլոր վերագրումները, որոնք կը միտին հարուած հասցնել նախ մեր անձին եւ ապա, անտա-

րակոյս, եկեղեցիին: Հոգեւոր ու բարոյական արժէքներէ պարպուած եւ եկեղեցիի հետ կապ եւ առնչութիւն չունեցող մարդիկ թող իրենք զիրենք բարոյական իրաւունք չվերապահեն անպատուել ու վարկաբեկել մեզ: Ժողովուրդը քաջածանօթ է մեր աշխատանքներուն թէ՛ Հայաստան, թէ՛ Արցախ եւ թէ՛ մեր ընդարձակ համայնքէն ներս: Մենք մեր կեանքը նուիրած ենք Աստուծոյ, Յիսուս Քրիստոսի, Իր եկեղեցւոյ եւ մեր ժողովուրդի ծառայութեան: Եւ ասիկա կը յայտարարենք պարզ ճակատով եւ հանգիստ խղճով:

Աւագ Շաբթուայ սեմին ենք, եւ կը նախապատրաստուինք տօնախմբել Ծաղկազարդը եւ երկարող շաբաթուան հրաշալի պատկերներով ապրիլ Քրիստոսի հրաշալի Յարութիւնը: Հոգեւոր այս մթնոլորտին մէջ կ'ուզենք հեռու մնալ չարէն եւ փարուիլ միայն Քրիստոսի: Մենք հաշուետու ենք Աստուծոյ մեր կեանքով ու գործով, եւ թող ոչ ոք յաղգնի ինքզինքին վերապահել դատաւորի պաշտօնը, որովհետեւ Աստուած Ինքն է գերագոյն դատաւորը:

Ապրիլ 11, 2019

ՄԲ. ՅԱՐՈՒԹԻՒՆ

«Յամենայն ժամ զմահն Յիսուսի ի մարմին մեր կրեսցուք, զի եւ կեանքն Յիսուսի ի մարմինս մեր յայտնեսցին...: Այսուհետեւ մահ ի մեզ զօրանայ, եւ կեանք՝ ի ձեզ»:

(Բ. Կորնթ. 4:10-11)

Քրիստոսի սուրբ Յարութեան խորհուրդը կը տօնախմբենք այն խոր հաւատքով, որ Աստուածորդու հետ ապրուած կեանքի ճանապարհորդութիւնը ճշմարտութիւնն է: Մարդը, իր տկար բնութեամբ, անհրաժեշտութիւնը կը զգայ անտարակոյս, առ Աստուած բարձրանալու ձգտումը: Սա մարդկային այն զգացողութիւնն է, որով ոչ միայն մեր մէջ կը զգանք Վարդապետին ներկայութիւնը, այլեւ փափաքը կ'ունենանք ապրելու ստեղծագործ կեանքով:

Քրիստոսի սուրբ Յարութեան Տօնը քրիստոնէութեան մեծագոյն նշանն է, որուն հետ հաղորդակցող անհատն ու հաւաքականութիւնը կ'ապրի իրօրինակ հոգեւոր ուրախութիւն, արշալոյսը իր նոր կեանքին, որովհետեւ եթէ կար ժամանակ, երբ իր մարմնի մէջ կը կրէր մահն Յիսուսի, ապա Յիսուսի Յարութիւնն ալ կը դառնայ մեր հոգեւոր եւ ներքին էութեան ամբողջ տարողութիւնը: Այլ խօսքով, Քրիստոսի կեանքը՝ Իր տառապանքներով ու խաչին վրայ պատարագումով ու այնուհետեւ Իր հրաշափառ Յարութիւնը մանրակերտ պատկերն է մեր կեանքին:

Եւ եթէ պահ մը համեմատական մը հաստատենք Քրիստոսի կեանքին ու մեր ժողովուրդի կեանքին մի-

ջեւ, ապա այն ժամանակ կը հասկնանք մեր կեանքի փորձութիւնները եւ միանգամայն մոխիրներէն յարութիւնը մեր ազգի: Այս հաւատքով ապրեցան մեր նախնիք եւ մենք այսօր եւս յաւիտեան հաստատ պիտի մնանք նոյն հաւատքին մէջ:

Կ'ապրինք այնպիսի ժամանակներուն մէջ, երբ հաւատքն առ Աստուած առաւել դերակատարութիւն ունի մեր կեանքին մէջ, որպէսզի կեանքն ապրինք որպէս առաքելութիւն, նուիրուած Աստուծոյ, մեր Մայր Սուրբ Եկեղեցիին, Մայր Հայաստանին, հայ սրբազան արժէքներուն, որոնցմով եւ ապահոված կ'ըլլանք մեր ինքնութիւնը եւ քրիստոնէական եւ ազգային առումով: Մեր քաջ համոզումն է, որ հայ քրիստոնէային կեանքը ամէն օր պէտք է ըլլայ *«Վասն Յիսուսի, վասն հայրենեաց»*: Այս նշանաբանը հասցուցած է մեզ մինչեւ այս օրերը: Չնայած դարերու ընթացքին մեր կրած բազում ծանր փորձութիւններուն, փառք Ամենակալին Աստուծոյ, մեր հայրերը իրենց կեանքի ճանապարհորդութիւնը ապրած են Քրիստոսով եւ Անով իսկ կերտած են Յարութիւնը մեր ազգի: Եւ Մայր Հայրենիքը, եւ մեր Սուրբ Եկեղեցին, եւ ողջ Սփիւռքը կը շարունակեն իրենց վերելքը՝ Քրիստոսի Յարութեան խորհուրդով առաջնորդուած: Հայրենիքի մէջ մեր նախնեաց հողը պահած ենք միայն անոր համար, որ հայ քաջարի զինուորներ իրենց նահատակութեամբ իրենց էութեանը մէջ կրած են մահը Քրիստոսի եւ մեր էութեանը մէջ հաստատած տեսիլքը՝ յարուցեալ Հայաստանի: Նոյն գիտակցութեամբ, հայ Սփիւռքը, միշտ իր հայեացքը սեւեռած է պահած Մայր Հայրենիքի ու Սբ. Էջմիածնի վրայ եւ կերտած է եկեղեցի ու դպրոց, նորահաս սերունդներուն փոխանցելու համար Յարութեան շունչը:

Քրիստոսի Աւետարանը կեանքի գիրքն է: Մեր կեանքը առաջնորդենք Քրիստոսի Աւետարանէն ժառանգուած պատգամներով: Այս Զատիկը պէտք է դարձնենք «*Վասն հաւատոյ, վասն հայրենեաց*» Զատիկ: Արթնութեան հրաւերը պիտի դարձնենք այս Զատիկը: Ինչքան աշխարհը փորձութեանց կրակին մէջէն կ'անցնի, այնքան աւելի ամուր պիտի պահենք մեր հաւատքը ու առաւել սիրով փարած պիտի մնանք Մայր Հայաստանին:

Միեւելի հաւատացեալ ու հայրենասէր զաւակունք մեր ազգի, ամիսներ առաջ Հայոց Հայրապետը 2019 թուականը յայտարարեց հայ քրիստոնէայ ընտանիքի տարի: Իսկ մեր Թեմէն ներս 2019-ը նուիրուած է հայ գրքին, երբ խօսքը կ'առնչուի հայ ընտանիքին, ապա մեր հոգու պարտքը պիտի ըլլայ ընտանիքէն ծնած մեր զաւակաց կեանքը լուսաւորել մեր պատմութեամբ, հաւատքի ու ժականութեամբ, ստեղծագործ կեանքի տեսիլքով: Ով այս կերպ կ'ապրի իր կեանքը իր մէջ կը կրէ կեանքը Քրիստոսի, այլ խօսքով Յարութիւնը մեր Տիրոջ:

Քրիստոս Յարեալ ի Մեռելոց Օրինեալ է Յարութիւնն Քրիստոսի

Քրիստոսի Յարութեան խորհուրդով ներշնչուած Յարութեան ճանապարհին է նաեւ մեր ազգը: Մեր ամէն մէկ քայլը, խօսքն ու արարքը պիտի արտայայտէ վճռակամ հաւատքը մեր նախնեաց, հաւատքը նահատակներուն, որոնք տեսիլքը ունեցան գալիք սերունդներու հոգիին մէջ տեսնելու նոր արշալոյսը մեր կեանքին:

Քրիստոսի Յարութեան խորհուրդով ներշնչուած մեր զաւակաց կեանքին մէջ հաստատենք աղօթքին զօրութիւնը, որպէսզի իրենց կեանքի ընթացքն ըլլայ առ Աստուած եւ իրենց արեան մէջ զգան պատգամը մեր

նախնեաց՝ Աստուածապարգեւ կեանքը իսպառ բերելու մեր հայրենական հողին ու հայոց քրիստոնէական հաւատքին ի խնդիր:

Քրիստոս Յարեալ ի Մեռելոց
Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի

Մուրք Չատիկ, 2019

ՉՄՆԱՆՔ ԱՆՏԱՐԲԵՐ

Սիրելի բարեպաշտ հաւատացեալներ,

Բոլորս ալ իրազեկ ենք վերջին 10 օրերուն Հայաստանի մէջ տիրող խոր մտահոգութիւն պատճառող իրավիճակին: Մեր սրտի մաղթանքն ու աղօթքն է, որ մեր Մբ. Եկեղեցւոյ զաւակները՝ անխտիր բոլորը, ինչ տարիքի եւ ինչ պաշտօնի մէջ ալ կը գտնուին իրենց հոգու մէջ ամուր պահեն Աստուծոյ սէրն ու իմաստութիւնը, հեռու մնան զգայնութիւններէ, իրենց վերապահելով հանդերձ խօսքի արտայայտութեան արդար իրաւունքը: Այսպիսի պատգամ է յղուած նաեւ Վեհափառ Հայրապետի, Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի եւ Եպիսկոպոսաց դասի կողմէ:

Մենք լիովին համոզուած ենք որ Աստուծոյ կամքը պիտի առաջնորդէ մեզ, որպէսզի մեր ժողովուրդի զաւակունք միաբանուած մնան եւ սէրն ու խաղաղութիւնը տիրէ մեր Մայր Երկրի մէջ, որուն հողը նուիրագործուած է սերունդներու կենաց պատարագումովը: Մայր Հայաստանէն հեռու այս ամիսներուն ապրող մեր ժողովուրդի զաւակունք չմնան անտարբեր ստեղծուած ծանր իրավիճակին եւ շարունակաբար աղօթենք, որ երկրի մէջ տիրողը ըլլայ փոխադարձ յարգանքը եւ խաղաղ երկխօսութեան քաղաքակիրթ վերաբերմունքը:

Արդ, մեր հրաւերն է բոլորիդ, որ միանաք մեզ «Տէր ողորմեա»-ի աղօթքի պահուն, որպէսզի Աստուծոյ Աջը հովանի ըլլայ մեր զաւակաց վրայ ամենուրեք եւ այսօր մանաւանդ Մայր Հայաստան ապրող մեր եղբայրներուն եւ քոյրերուն վրայ:

Ապրիլ 22, 2018

ԴՐՕՇԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Արեւոտ է մայիսեան այս առաւօտը արդարութեան, բարութեան ու սիրոյ լոյսերու մէջ է ողողուած: Հայոց երկնականարին վրայ վեհօրէն կը ծածանի դրօշը Հայաստանի Չորրորդ Հանրապետութեան, որուն ծնունդը եկաւ դառնալու թագն ու պսակը մայիսեան մեր փառապանծ յաղթանակներուն: Բարեհաճ Աստուած՝ Իր Նախախնամութեամբ առաջնորդեց մեր ժողովուրդի քայլերը դէպի Նոր Հայաստան՝ Տիար Նիկոլ Փաշինեանն ընտրելով որպէս առաջամարտիկը ազգային զարթօնքի:

Հրաշքի մը պէս վերածնունց մեր ողջ ժողովուրդը, ի մասնաւորի՝ Հայրենիքին մէջ, ուր Մայր Հողէն ճառագեց Նոր Հայաստանին խորհուրդը: Այդ խորհուրդով բոցավառ են մեր հոգիները եւ յոյսով առլեցուն:

Այսօր, Աստուծոյ պատգամն է, որ մեր ժողովուրդն առաւել միաբանուած, իր մտասուեռումը կեդրոնացնէ յաւերժական Հայաստանի շինութեան եւ պայծառութեան սրբազան նպատակին վրայ: Ինչպէս որ բարի օրինակ դարձանք համայն աշխարհին մեր խաղաղասիրութեամբ, ազատատենչութեամբ, մարդու եւ հիմնարար իրաւունքներու բարձր գիտակցութեամբ, նոյն կերպ ալ պարտինք նոր եռանդով, հաւատքով եւ ուժականութեամբ տէր կանգնիլ մեր արժէքներուն: Նուիրեալ աշխատանքով եւ համբերութեամբ՝ որպէս կայացած քաղաքացիական հասարակութիւն, միասնական ազգ եւ եղբայրական ժողովուրդ պարտինք մեր զաւակաց առջեւ հարթել լոյսի ու յոյսի ճանապարհը, որ մեզ կը տանի դէպի նոր Հայաստան:

Աստուած օրինէ Հայաստան աշխարհը:

ԱՆԵՐԵՒԱԿԱՅԵԼԻՆ

Շաբաթներէ ի վեր ներքին տառապանք մը կ'ապրիմ եւ անտարակոյս շատեր նոյնը կը կրեն իրենց մէջ ի տես այն տխուր իրադրութեանց, որոնք տեղի կ'ունենան մեր ազգի կեանքին մէջ, ի մասնաւորի Հայաստան աշխարհէն ներս, երբ Եկեղեցին ու անոր Հովուապետը թիրախաւորուած են եւ ծանր հարուածներու կ'ենթարկուին: Դեռեւս Մայիս 30-ին, Հայաստան կատարած մեր այցի ընթացքին տեղի ունեցած հարցազրոյցի մը ընթացքին արտայայտած էինք այն մտածումը, որ բնականօրէն բոլորի իրաւունքն է հասարակական կեանքի մէջ արձանագրուած երեւոյթներու մասին կատարել քննադատութիւններ, բայց երեւի ընդունելի չենք գտներ անվայել արտայայտութիւններ կամ փողոցային խօսքեր ուղղեալ հոգեւորականի մը կամ աշխարհիկ անձի մը նկատմամբ: Կ'ապրինք ժամանակի մը մէջ, ուր մարդը պարտ է քաղաքակիրթ եւ պարկեշտ կեցուածք արտայայտելու ինքզինք: Իսկ աւելին՝ ոչ ոքի տրուած չէ իրաւունքը դատելու, որովհետեւ ճշմարիտ դատաւորը՝ Աստուած Ինք է եւ պէտք է անսալ Տիրոջ դատաստանին:

Երբ այս մտածումները թուղթին կը յանձնեմ կ'ուզեմ նաեւ ընթերցողին հետ բաժնել համոզմունքն այն մասին, որ մեր առջեւ ծառացած բոլոր տեսակ հարցերուն պէտք է մօտենալ քրիստոնէական սիրով եւ ներողամտութեամբ: Քանզի քրիստոնէական սէրն ու ներողամտութիւնը լեռները իրենց տեղէն շարժելու ոգին կը ներշնչէ մեզ: Առաւել եւս պէտք է մտաբերել Տիրոջ այն ոսկի պատուիրանը, երբ կ'ըսէ. «Ընկերոջ աչքին

շիւղը մատնացոյց ընելէ առաջ նախ տես քու աչքին գերանը» (Մատթ. 7:3-4):

Մարդը՝ եւ առաւել եւս քրիստոնէայ մարդը պիտի ապրի խոնարհ կեանքով, աստուածային սիրոյ ու իմաստութեան առաջնորդութեամբ: Քանզի երբ բացակայ է սէրը աստուածային եւ մեզ առաջնորդողը աստուածային իմաստութիւնը չէ, ապա խաւարի մէջ ենք: Յիշենք, որ մարդը եւ մենք բոլորս մեղաւոր ենք եւ տկար էութեամբ: Ուստի եւ բոլորիս է տրուած նուիրական պարտականութիւնը մէկզմիւսին տէրը ըլլալ, հոգալ իրարու եւ միմեանցով դառնալ ձգտողը կատարեալին:

Յուլիս 15, 2018

ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ

Քրիստոսի հրաշալի Յարութեան տօնէն յիսուն օրեր անց Եկեղեցին կը տօնախմբէ Հոգեգալուստը: Եկեղեցւոյ կեանքին մէջ կը ներկայացուի կատարուած ճշմարտութիւնը, թէ ինչպէս մինչ Առաքեալները նստած էին Վերնատանը Մբ. Հոգին կ'իջնէ երկինքէն ու բոլորի հոգիները կը զարդարէ երկնային ու աստուածային շնորհներով, որպէսզի հաւատքով գօտեպնդուած երթային աշխարհի կեանքին մէջ եւ տարածէին աստուածային լոյսը:

Քրիստոս, Աստուածորդին, Իր երկրաւոր կեանքի օրերուն քանիցս խօսած եւ յիշեցուցած է Իր Առաքեալներուն թէ ինչպէս Մխիթարիչը այցի պիտի գար իրենց եւ անոնց մէջ բոցավառէր հոգեւոր կրակը, եւ անով իսկ Առաքեալները դառնային տարածողները Աստուծոյ խօսքին:

Ահաւասիկ այս ճշմարտութեան իրազէկ դառնալով՝ կ'ըմբռնենք այն, որ Հոգեգալստեան Տօնը կը խորհրդանշէ սկիզբը Եկեղեցւոյ առաքելութեան, որ շարժում ստացաւ Առաքեալներով եւ անընդհատ կը կրկնուի այն նոր առաքեալներով, երբ մենք եւս կը զգանք ներգործումը Մբ. Հոգիին մեր էութեան մէջ: Սա այն պահն է, որ կարելի չէ թարգմանել բառերով, որովհետեւ անչափելի ու անհասանելի խորհուրդ կը պարունակէ իր մէջ Հոգեգալուստը: Սա չի նշանակէր որ կը դժուարանանք ըմբռնել խորհուրդին իմաստը: Եւ ինչպէս Առաքեալներու համար կոչումի օրն էր Հոգեգալուստը, ապա այդպէս ալ իւրաքանչիւրիս համար կոչումի օրն է այս Տօնը:

Ամէն անգամ երբ Եկեղեցին կը տօնախմբէ Հոգե-
գալուստը, ես անձնապէս կ'ապրիմ մինչեւ իմ հոգիին
խորքը եւ ողջ էութեանս մէջ Երկնային կրակին էջքը,
որ կը նորոգէ կոչումս ծառայութեան, որպէսզի քայլերս
շարունակեմ ուղղել դէպի Աստուած եւ ժողովուրդը:

Մայիս 20, 2018

ՀԵՀԵՄ-Ի ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ

ՀԵՀԵՄ-ի Առաքելությունը բնորոշող բազում սահմանումներ կարելի է գտնել եւ ներկայացնել, որոնք բոլորն ալ հիմնականին մէջ նպատակակէտ պէտք է ունենան հայ երիտասարդին մէջ խորացնելու քրիստոնէական նկարագիրը, հաւատքի գիտակցութիւնն ու հայրենասիրութիւնը:

ՀԵՀԵՄ-ի գործունէութեան ուղին այն է, որ աշխարհատարած Հայ Եկեղեցին ունենայ իր երիտասարդաց միաւորները, որոնք բոլորը միասին իրենց մտասեւեռումը պէտք է դարձնեն Հայ Եկեղեցոյ առաքելութիւնը: Այդ է եղած անցնող երկու տասնամեակներով ՀԵՀԵՄ-ի նպատակն ու գործընթացը եւ աստիճանաբար այն կ'ուզենք բարձրացնել զարգացման նոր մակարդակի մը վրայ: Բոլորիս սպասումն է, որ դուք, որպէս պատասխանատու երիտասարդներ, ձեր ուսերուն վերցնէք հայ եկեղեցոյ առաքելութիւնը եւ ձեզմով խմորէք նաեւ ձեր հասակակիցները:

Ի՞նչ է նպատակը Ատենապետաց այս ժողովին, եթէ ոչ աղօթքով առաջնորդուած՝ խորհրդակցական ու կազմակերպչական քայլերով կերտել ներկան ու նայիլ դէպի գալիքը: Յաջողելու գրաւականն այն է, որ միմեանց սիրէք ու յարգէք, լսէք ու զօրակցէք եւ ձեր ամբողջ մտասեւեռումը դարձնէք Հայց. Եկեղեցին, ուր ներկայ է Աստուած, եւ դուք կանչուած էք ծառայութեան իր ամենայն առումներով: Հետեւաբար, այս խորհրդակցական ու կազմակերպչական ժողովին արդիւնաւետութիւնը ձեր մէջ է, պատասխանէք Աստուծմէ ձեզ տրուած կոչումին եւ պիտի տեսնէք, թէ ինչքան հոգեւոր ներուժ

ունիք ձեր մէջ, որը եւ բաշխելու համապատասխան
մեթոտներն ու միջոցները պիտի ստեղծէք դուք:

Բարի երթ ձեր առաքելութեան եւ Աստուծոյ օգ-
նականութիւնն ու առաջնորդութիւնը բոլորիս:

Նոյեմբեր 2, 2019

ՀԵՀԵՄ-Ի ԿԱՐԵԻՈՐՈՒԹԻՒՆԸ

Մբ. Էջմիածինը՝ մեր ինքնության խորհուրդն է:

Մբ. Էջմիածին – այս նուիրական կոչումը իր մեջ կ'ամփոփէ մեր ազգային լինելությունը պայմանաւորող բոլոր հիմնական որոշիչները: Մեր հաւատքն առ Աստուած, հայրենի հողին գիտակցութիւնը, պատմութեան զգացողութիւնը, ներկային ոգին եւ տեսիլքը վաղուան:

Հաւատքն առ Աստուած – Մարդը պիտի ապրի հաւատքով առ Աստուած: Մեր կապը Աստուծոյ հետ տիեզերքի գեղեցկութիւնը եւ խոնարհումը Աստուծոյ անչափելիութեան առջեւ եւ ստանալու կոչումը՝ ապրելու ստեղծագործ կեանքով:

Հայրենի հողին գիտակցութիւնը – Մարդը՝ հոգեւոր էակ մըն է եւ իր կեանքը պարտ է լեցնել հոգեւոր ու բարոյական արժէքներով: Հոգեւոր եւ բարոյական արժէքներուն մեջ հայրենի, մշակոյթն ու արուեստը կարեւորագոյն տեղեր կը զբաղեցնեն, որոնցով կը կերտուի մեր նկարագիրը:

Պատմութեան զգացողութիւնը – Մարդը չի կրնար գոյատեւել առանց իր արմատին: Մեր կեանքին արմատն է պատմութիւնը, մեր առօրեան իր սնունդը, իր ներշնչումն ու զօրութիւնը կ'առնէ պատմութենէն: Որովհետեւ պատմութիւն կերտողները հիմքն են նաեւ մեր կեանքին:

Երիտասարդութիւն – Ներկայութեան ոգիով եւ տեսիլքով վաղուան:

Այսօր եւեթ մեր ուսերուն պիտի վերցնենք առաքելական կեանքով ապրելու կոչումը, հայրենիքով ապրելու սերը, մեր ազգային արժէքներու յարգանքը: Աշ-

խարհի որ ծայրն ալ ապրինք այս նուիրական սկզբունքները իմաստ ու նպատակ կու տան մեր կեանքին: Աստուած մեր ազգին է շնորհած մեզ բոլորս միաւորող գերագոյն Սրբութիւնը՝ Սբ. Էջմիածինը, ու այն պիտի դարձնենք պատկերը մեր հոգիին, եթէ կ'ուզենք հարազատ մնալ մեր ինքնութեան:

Միբելի երիտասարդներ, մեր կոչումն է ծառայել Աստուծոյ, մեր Սբ. Եկեղեցիին եւ Հայրենիքին: Այս օրերուն այստեղ կը գտնուինք սիրով պատասխանելով Հայոց Հայրապետի կոչին, որպէսզի Հայրենիք - Սբ. Էջմիածին գալով նորոգենք մեր ուխտը՝ հայաշունչ լինելութեան: Հոգեւոր ու ազգային զարթօնքի ոգին պիտի ապրինք Մայր Հայրենիք - Սբ. Էջմիածին Ուխտագնացութեամբ: Եկած ենք խոնարհելու գերագոյն սրբութիւններու առաջ - Հայրենիք - Սբ. Էջմիածին, մեր յարգանքը բերելու հայրենի ժողովուրդին՝ անոր պետականութեան եւ Եկեղեցիին, հայոց մշտաբերուն բանակին: Ուխտի ենք եկած մեր հաւատարմութիւնը ընծայելու յաւերժական Սբ. Էջմիածնին, ու Անոր Գահակալին՝ յանձինս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ ձեզի Վեհափառ, բերելու բոլորիս սէրն ու երախտագիտութիւնը, աղօթք առաքելով առ Աստուած, որ ձեզ պարգեւէ կենաց քաջառողջ եւ երկար տարիներ: Հայ Եկեղեցասէր Երիտասարդութիւնը համախմբուած պիտի մնայ ձեր շուրջը միշտ պատրաստակամ ծառայութեան բարձր ու նախանձախնդիր գիտակցութեամբ:

Յուլիս, 2018
Սբ. Էջմիածին

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ՝ ՀԵՀԵՄ-Ի ՄԱՍԻՆ

- Սրբազան Հայր, Դուք գլխավորում էք ՀԵՀԵՄ-ը: Տարիներ առաջ ստեղծուած համաշխարհային ընդգրկում ունեցող այս կառոյցի մասին կարծէք քիչ է խօսուում: Ներկայումս ի՞նչ գործունէութիւն է ծաւալում ՀԵՀԵՄ-ը Հայաստանում եւ Սփիւռքում եւ ո՞րն է կառոյցի նպատակը:

- Հայ Եկեղեցւոյ Երիտասարդաց Միութիւն ունենալու Տիրան Արք. Ներսոյեանի տեսիլքը միշտ ալ խանդավառած է մեզ որպէս Հոգեւոր Հովիւ եւ Առաջնորդ: Անցնող 35 տարիներուն ուր ալ որ կանչուեցանք ծառայելու, փորձեցինք կեանքի կոչել Ներսոյեան Սրբազանին տեսիլքը՝ 1946-ին Ամերիկայի մէջ՝ իր իսկ ստեղծած Հայ Եկեղեցւոյ Երիտասարդաց Միութեան նախատիպը որպէս օրինակ ունենալով:

Աշխարհի չորս ծագերէն հայ երիտասարդները Եկեղեցւոյ յարկին տակ ի մի բերելու գաղափարը յղացանք 2001-ին Քրիստոնէութեան որպէս պետական կրօն հռչակման 1700-ամեակի միջոցառումներու ընթացքին: Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետի օրհնութեամբ եւ լիակատար աջակցութեամբ անմիջապէս ձեռնամուխ եղանք այս նուիրական գործին՝ զանազան հանդիպումներ կազմակերպելով հայ երիտասարդութեան հետ:

Այսօր, 14 տարի ետք, կրնանք իրաւամբ ըսել, որ Եկեղեցւոյ հովանու ներքոյ համահայկական երիտասարդական կազմակերպութիւն ստեղծելու մեր տեսիլքը որոշապէս յաջողած է թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Սփիւռքի

մէջ. քլլայ ծխական կամ Թեմական մակարդակով: Այսուհանդերձ, պէտք է ընդունիլ որ նման ընդգրկում ունեցող կազմակերպութեան մը համար 14 տարին բարար ժամանակ չէ ինքնակազմակերպուելու տեսանկիւնէն: Մեր տեսիլքին ակնդէտ՝ մենք կը շարունակենք հետեւողական աշխատանքով համախմբել հայ երիտասարդները, կանոնակարգել կառոյցին վարչաժողովական կեանքը, յստակեցնել յառաջիկայ անելիքները եւ լրջօրէն մշակել գալիք ծրագրեր: Ի վերջոյ, ՀԵՀԵՄ-ին նպատակը մէկ է՝ հասցնել գիտակից, պատրաստուած, Հայ Եկեղեցւոյ աւանդոյթներուն եւ ազգային արժէքներուն նախանձախնդիր սերունդ մը, որ իր հոգեւոր եւ բարոյական նկարագրով նոր որակ պիտի հաղորդէ մեր ազգային, եկեղեցական կեանքին:

- Միութեան շրջանակներում, ի՞նչ ծրագրեր են նախատեսւում, առաջիկայում տարածքային ի՞նչ ընդգրկում կ'ունենան դրանք:

- Թեմական եւ ծխական մակարդակներով մեր մասնաճիւղերն ունին իրենց հաստատուած տարեկան ծրագրերն ու ժամանակացոյցը: ՀԵՀԵՄ-ի կեդրոնական գրասենեակը կը համակարգէ եւ, ի պահանջել հարկին, կ'աջակցէ տեղական մարմիններուն զանազան հարցերով:

Պատգամաւորական Ժողովի օրերուն պիտի կազմակերպենք ուխտագնացութիւններ, հանդիպումներ եւ քննարկումներ: Նաեւ՝ միշտ կը քաջալերենք մասնաճիւղերու փոխադարձ այցելութիւնները, համատեղ ծրագրերու իրականացումը, շրջանային ժողովները տարւոյ ընթացքին:

Մենք մեր կարգին պիտի շարունակենք այցելութիւնները Եւրոպայի, Մերձաւոր եւ Միջին Արեւելքի հայաշատ քաղաքները քաջալերելու եւ Եկեղեցւոյ շուրջ համախմբելու հայ երիտասարդները: Մեր փափաքն է, որ ՀԵՀԵՄ-ը դառնայ իրաւամբ համահայկական համաշխարհային երիտասարդական շարժում մը: Գիտակից ենք, որ այսպիսի ընդգրկուն եւ լայնածաւալ առաքելութիւն մը մնայուն հոգածութեան եւ աշխատանքի կը կարօտի: Մենք այդ յանձնառութեամբ կը շարունակենք մեր ջանքերը ժրաջանութեամբ, հետեւողակաւորութեամբ եւ եռանդով:

- Առաջիկայ ամսի առաջին շաբաթում գումարուելու է ՀԵՀԵՄ-ի հերթական Պատգամաւորական Ժողովը, ի նշ նպատակ է յետապնդում այս ժողովը եւ ի նշ խնդիրներ են դրուած Ժողովի առջեւ:

- 2015-ը խորհրդանշական տարի մըն է հայ ժողովուրդի համար: Այն մեկնարկուեցաւ Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի ոգեկոչման միջոցառումներով, նոր իմաստ ստացաւ նահատակաց սրբադասումով եւ առաւել պիտի նշանաւորուի Միւռնօրիններով: Աշխարհի զանազան Թեմերէն Մայր Աթոռ ժամանած երիտասարդները, նախեւառաջ, եկած են այդ խորհուրդին մերձօրէն հաղորդակից դառնալու, հոգեպէս վերանորոգուելու եւ իրենց հաւատարմութեան ուխտը վերահաստատելու: ՀԵՀԵՄ-ի նշանակութիւնը եւ կարեւորութիւնը մենք կը տեսնենք մեր ազգային եկեղեցական կեանքի վերանորոգութեան եւ վերագարթոնքի մէջ, այնպէս ինչպէս նոր միւռնօր կը խառնուի հին միւռնին, նոյն խորհուրդով մեր ազգը զարթօնք կ'ապրի եկեղեցասէր մեր երիտասարդներու աւիւնով, բարի

գործերով, շինիչ նախաձեռնություններով եւ ապագայի վառ յոյսերով:

Ասկէ զատ մենք պիտի քննարկենք ՀԵՀԵՄ-ի կանոնադրութեան լրամշակուած տարբերակը, որ պիտի դառնայ այս կազմակերպութեան վարչական-ժողովական կեանքի գլխաւոր ուղեցոյցը: Զեկոյցներ պիտի ներկայացնեն ՀԵՀԵՄ-ի մասնաճիւղերը իրենց գործունէութեանց մասին, պիտի քննարկենք ընդհանուր դժուարութիւններն ու տեղական խնդիրները, բայց առաւել կարեւոր տեղի պիտի ունենայ փորձի փոխանակում, որպէսզի մանաւանդ նորաստեղծ երիտասարդական կառոյցներ օգտուին հիներու փորձառութենէն եւ որդեգրեն լաւագոյն ծրագրերն ու նախագիծերը, միշտ զանոնք հարմարցնելով տեղական յատուկ պայմաններուն եւ պահանջներուն:

- Ժողովի ընթացքում հաստատուելու է ՀԵՀԵՄ ուղենշային նախագիծը, ի նշ է այն ենթադրում:

- ՀԵՀԵՄ-ի Ուղենշային Նախագիծը իր մէջ կ'ամփոփէ կազմակերպութեան տեսիլքը, գաղափարականը, համապարփակ ձեւով կը նախանշէ գործունէութեան ծիրը, յառաջիկայ անելիքները, մեր առաջնահերթութիւններն ու ապագայի ակնկալիքները: Ուրիշ խօսքով՝ կանոնադրութիւնը միտուած է համակարգելու ՀԵՀԵՄ-ի վարչական կառոյցը, ինչպէս որ անունն ինք կը յուշէ, իսկ Ուղենշային Նախագիծը կոչուած է մեզի ուղղորդելու, որպէսզի անշեղօրէն կարենանք կեանքի կոչել մեր առաքելութիւնը:

- Արդեօք այս կառույցն ինչ որ կերպ նպաստելո՞ւ է հայ երիտասարդի առջև ծառացած մարտահրավերներին, այդ թուում հոգեւոր-բարոյական լուծմանը:

- Անտարակոյս: ՀԵՀԵՄ-ը ինքնին մեծ ոյժ է, քանի որ կը ներկայացնէ մեր Եկեղեցոյ զաւակները աշխարհի տարբեր կողմերէն: Անձնական շփումներու, բարեկամութեան եւ մտերմութեան շնորհիւ, մեր երիտասարդները յարաբերութիւններ կը հաստատեն այլ երկիրներու մէջ ապրող եւ գործող իրենց տարեկիցներու հետ, որ գործնական առումով ինքնին հեռանկարային է: Համագործակցութիւնը մէկ զմէկու օգնելը, գործնական կապեր հաստատելը, եւ ինչո՞ւ ոչ, հայ ընտանիքներ կազմելը առանցքային նպատակներ են ՀԵՀԵՄ-ի համար: Այսուհանդերձ, մեր գերիւնդիրը կը մնայ նոր, գիտակից, պատրաստուած սերունդ հասցնելը: Երիտասարդութեան եւ Եկեղեցոյ կապը պէտք է որ հոգեւոր, գիտակցական եւ իմացական հիմքի վրայ ըլլայ այլ ո՛չ զգացական կամ աւանդութեան ոյժի: Այսպէս միայն կրնանք պատրաստել վաղուան առաջնորդները, նախանձախնդիր պաշտպանները մեր ազգային եւ հոգեւոր արժէքներուն:

Մեր համատեղ աշխատանքին արդիւնքն արդէն յուսադրող է: Ինչպէս որ մշակ մը կը սպասէ հունձքին, մենք ալ որպէս Եկեղեցի անհամբեր կը սպասենք քաղելու բարի պտուղները մեր ջանքերուն:

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԸ ՈԳԻՆ Է ՄԵՐ ԱԶԳԻՆ

Աստուած Ամենակարող, անսասան պահէ հողը հայրենական: Քու աստուածային լոյսով ու իմաստութեամբ միաւորէ մեզ, որպէսզի հաւատքի քաջութեամբ կերտենք ներկան, միշտ խոնարհումով մեր Ս. Նահատակաց յիշատակի առջեւ: Մեր սրտէն բխում առած աղօթքին մէջ յաւետ պիտի արձագանգէ պատգամը հոգելոյս Վազգէն Առաջինի հետեւեալ բառերով.

«Ամէն անգամ, երբ մենք՝ հայերս, ճակատագրական պահի մը, իրադարձութեան մը կամ վտանգի մը առջեւ գտնուինք այստեղ կամ այլուր, Սարդարապատի ոգին է, որ պէտք է արթննայ մեր մէջ, որպէսզի մենք չշեղուինք մեր պատմութեան, մեր ժողովուրդի զարգացման ուղիղ ճանապարհէն»:

Ամենակարող Աստուած 100 տարիներ առաջ, տակաւին Մեծ եղեռնէն հազիւ մի քանի տարիներ անց, մեր ժողովուրդը ինքզինք անգամ մը եւս գտաւ ահաւոր վտանգի մը առջեւ, երբ Քու աստուածային սէրը ճառագայթեց հոգիներուն մէջ մեր նախնեաց ու մեր Ազգի զաւակները համախմբուեցան Սբ. Էջմիածնի հովանիին տակ եւ օրուան Հայրապետին Երանաշնորհ Տ. Տ. Գեորգ Ե. Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Գարեգին Եպիսկոպոս Յովսէփեանցի սրտառուչ պատգամներու առաջնորդութեամբ գոտեպնդեցին հայոց քաջարի զինուորները ազատագրելու համար հայրենի հողը: Եւ Սարդարապատի կռուի դաշտ մեկնող քաջարի հայ զինուորները իրենց հոգու մէջ կրեցին անլուելի դողանջը Սբ. Էջմիածնի զանգերուն եւ կերտեցին ճանապարհը

նոր Հայրենիքին, որուն երկինքին վրայ պարգուեցաւ եռագոյն դրօշը՝ խորհրդանիշը մեր ժողովուրդին:

Աստուած Ամենագօր, գիտենք, որ եթէ կ'ուզենք ապրեցնել Սարդարապատի ոգին, պարտինք ազգովին մեր նորահաս սերունդի զաւակները առաջնորդել դէպի Մայր երկիր, որպէսզի անոնք հարիւրապատիկ զգան հայրենի հողէն իրենց սրտին հասնող տրոփիւնը եւ ուխտ կատարեն ապրելու հայ քրիստոնեայի հաւատքով եւ նախնեաց տեսիլքով:

Սարդարապատի հերոսամարտի յաղթանակը՝ հիմնաքարն է յաւիտենական Հայաստանի, որուն սրտին է ամրացած Մբ. Էջմիածինը, անպարտելի խորհուրդը մեր ինքնութեան, Սարդարապատի ոգու ծննդավայրը:

Աստուած պահէ ազգն Հայոց եւ սերունդներու կեանքը առաջնորդէ դէպի երկիր Հայաստան:

Յունիս 23, 2018

ՀՈՒՇԱՐՁԱՆ ՁՕՆ՝ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ 100-ԱՄԵԱԿԻՆ

Սարդարապատի 100-ամեակին ու Հայոց Հանրապետության 100-ամեակին նուիրուած այս Յուշարձանը մնայունօրէն պիտի յիշեցնէ բոլոր այցելուները մեր ազգի պատմութեան այն յիշարժան էջի մասին, երբ ազգի մը զաւակները յանուն իրենց հաւատքի ու Հայրենիքի իրենց կեանքը պատարագեցին:

20-րդ դարու առաջին Ցեղասպանութիւնը կատարուեցաւ ընդդէմ հայոց 1915 թուականին կազմակերպուած Օսման պետութեան կողմէ: Քիչ ժամանակ անց, երբ տակաւին ցաւի ու տառապանքի մէջ էր մեր ազգը եւ ամենուրեք որբեր ու տեղահանուած ժողովուրդի մը զաւակները կը փորձէին իրենց կեանքը վերսկսիլ, ահա այս անգամ վտանգը կը հասնի Արեւելեան Հայաստան, երբ քաջութեան իւրօրինակ կեցուածքով, հայ զինուորներ Սր. Էջմիածնի խորհուրդով առաջնորդուած կը փրկեն Հայրենիքը եւ վերջնականօրէն յետ կը մղեն թշնամու զօրքերը եւ Սարդարապատի ճակատամարտով կը հաստատուի ծնունդը Հայոց Առաջին Հանրապետութեան:

Հարիւր տարիներ յետոյ, այսօր, աշխարհասփիւռ մեր ժողովուրդը, հակառակ արտաքին բոլոր տեսակի մարտահրաւերներու, կը շարունակէ ապրիլ վերածնեալ եւ յաղթանակած կեանքով:

Այս յուշարձանը, որուն նախաձեռնութիւնը յանձն է առած “Dignity” հաստատութիւնը, կեանք կը խորհրդանշէ եւ անտարակոյս պիտի դառնայ դէպի իրեն

հրաւիրող մագնիսը, որպէսզի այս կեանքէն բաժնուող
մեր ազգի զաւակներու հոգիները իրենց խաղաղութիւնը
գտնեն Յարութեան խորհուրդին ներքոյ, որովհետեւ
Յուշարձանը ինքնին կը խորհրդանշէ վերածնունդ եւ
նոյն խորհուրդը կը ներշնչէ նաեւ բոլորիս:

Մայիս 22, 2018

Ս. ԷԶՄԻԱԾԻՆ

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին Յունիս 23-ին կը տօնախմբէ Կաթողիկէ Ս. Էջմիածնի տօնը: Այն սահմանած է առաքելաշնորհ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը՝ Վիրապէն ելլելէն, եւ կենարար Աւետարանի ճշմարտութեան խօսքով լուսաւորելէն յետոյ:

Էջմիածնի մէջ երկինքէն վար իջաւ Աստուածորդին հրեղէն սիւնի մը տեսքով՝ Իր փառքի լոյսը սփռեց Հայաստան աշխարհի մէջ: “Էջմիածին” - մեր առաջին Կաթողիկէի անունն է սա, որ դարձած է անունը մեր ինքնութեան 301 թուականէն սկսած, երբ մեր ազգը ընդունած է քրիստոնէութիւնը որպէս պետական կրօն եւ այդ օրէն սկսեալ մեր պատմութեան ընթացքը ուղեգծուած է քրիստոնէական հաւատքի գործերով:

Եւ այսօր, դարերու ընդմէջէն շարունակելով մեր սրբազան հայրերու նախանշած ուղին, պիտի կարենանք արժեւորել Սբ. Էջմիածնի Տօնը եւ ըսենք, որ այն հիանալի առիթ մըն է նորոգելու մեր հաւատքի կեանքի ուխտը, քալելու Աստուծոյ գծած ճանապարհով, մնալու հաւատարիմ մեր Ս. Եկեղեցւոյ ու անոր ասանդներուն, եւ կեանքը հարստացնելու հոգեւոր ու բարոյական անփոխարինելի արժէքներով:

Ս. Էջմիածնի Տօնի առիթով կը դիմենք ձեզ, սիրելի՛ հայորդիներ: Յիշեցէք, որ զաւակներն էք Ս. Էջմիածնի եւ Ս. Էջմիածնի տեսիլքով պիտի ապրիք ձեր կեանքը: Մայր Հայրենիք եւ Ս. Էջմիածին պիտի ականատեսը դարձնէք յիրաւի հոգեւոր վերածնունդի: Ձեզ կը դիմենք մանաւանդ այս օրերուն, երբ Միածնաւէջ Սուրբ Տաճարը ամենքիս նուիրական աջակցութեան

կարիքն ունի, երբ տակաւին աւարտին չէ հասած անոր հիմնովին վերանորոգութիւնը:

Դարեր շարունակ կանգուն Սրբավայրի նորացումն ու վերանորոգումը վերջին տարիներուն Հայոց Հայրապետների առաջնահերթ մտահոգութիւնն են եղած: Այդ ջանքերը նոր եռանդ ստացած են երջանկայիշատակ Գեորգ Զ. եւ Վազգէն Ա. Կաթողիկոսներու օրօք՝ ազգային բարերարներ Գալուստ Կիւպէնկեանի, Ալէք Մանուկեանի, անոր զաւակներ Ռիչարդ եւ Լուիզ Մանուկեաններու եւ այլոց նուիրատուութիւններով: Եւ ահա հերթը հասած է մեր սերունդին: Միահամուռ ջանքերով մենք ամենքս նոյնպէս պիտի հաւաստենք Սուրբ Էջմիածնի ամրութիւնն ու յարատեւութիւնը, թիկունք կանգնենք անոր, մեր նուիրատուութիւնները միախառնենք ազնիւ հայորդեաց ձգտումին՝ ալ աւելի ամրացնելու եւ աներեր դարձնելու համար Մայր Տաճարը:

Սբ. Էջմիածնի Տօնին առիթով աղօթք կը բարձրացնենք առ Աստուած Մայր Աթոռի անսասանութեան համար անոր գահակալին մականին ներքոյ, Մայր Աթոռի եւ Հայաստանի ու արտաշխարհի մեր թեմերու եւ եկեղեցիներու պայծառութեան համար:

«Լուսաւորեա՛, Կաթողիկէ Եկեղեցի՛, Քանզի ի քէն շող աստուածեղէն ի Հօրէ լուսոյ ծագեաց»:

Յունիս 23, 2019

Ս. ԷԶՄԻԱԾԻՆԸ ԽՈՐՀՈՒՐԴՆ Է ՄԵՐ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ

Միրելի հայորդիք, հայ քրիստոնեայի համար Ս. Էջմիածինը սրբություն սրբոցն է, Աստուծոյ ձեռակերտը, որուն մէջ կը տեսնենք պատկերը մեր հոգիին ու կը կարդանք ամբողջ պատմութիւնը մեր ազգի: Իրաքանչիւր հայ, ով ուխտի այցելութեամբ գտնուած է Ս. Էջմիածին, անկասկած առաջին իսկ պահուն իր մէջ զգացած է հոգեւոր վերածնունդ, որովհետեւ նոյն սրբավայրին մէջ կը լսենք ձայնն Աստուծոյ, աղօթքը մեր նախնեաց եւ կը տեսնենք ճանապարհը նոր ժամանակին եւ յաւիտենականութեան:

Ս. Էջմիածինը այն սրբազան տեղն է, ուր Աստուած իջաւ եւ հանդիպեցաւ մեր ժողովուրդին, եւ այդ պահէն սկսած մենք դարձանք առաջին քրիստոնեայ պետութիւնը աշխարհի երեսին, որ քրիստոնեութիւնը ընդունեց որպէս պաշտօնական պետական կրօն: Եւ 301 թուականէն սկսեալ Ս. Էջմիածինը դարձաւ մայրը մեր ժողովուրդին, որովհետեւ մեր ազգի զաւակներուն բաշխեց եւ՝ հոգեւորը, եւ՝ ազգայինը: Ս. Էջմիածնի լուսոյ խորանէն հաղորդուեցան Վարդանանք եւ Սարգսրապատի հերոսներն ու մեր օրերու անմահ քաջերը Արցախի, որոնք կերտեցին հրաշքը բոլոր ժամանակներու եւ ժառանգը գալիք բոլոր սերունդներուն: Ահա թէ ինչու, երբ մեր հայեացքը կ'ուղղենք դէպի Ս. Էջմիածին, անդ կը տեսնենք պատկերը մեր ժողովուրդի, պատկերն ու առաքելութիւնը մեր կեանքին, եւ ամենէն աւելին՝ Աստուծոյ ներկայութիւնը: Մէկ խօսքով՝ Ս. Էջմիածինը արմատն է մեր կեանքին ու պատմութեան, եւ

դէպի երկինք բարձրացող ու դէպի յաւերժութիւն առաջ-
նորդող աստուածահիմն կամուրջը:

1700 եւ աւելի տարիներ շարունակ Ս. Էջմիածինը
իր Մայր Տաճարով եղած է հոգեւոր մագնիսը՝ մեր ժո-
ղովորդի զաւակները իրար կապող ու միացնող: Դա-
րերու ընթացքին ի՛նչ փորձութիւններ ու վտանգներ են
հասած Ս. Էջմիածին, եւ սակայն Աստուծոյ աջը պահ-
պանած է Սրբութիւն Սրբոցը մեր ազգի, որպէսզի այն
դառնայ Մայրը բոլոր սերունդներուն համար:

Հայոց սրբազան լեռ Արարատի դէմ կանգնած
մշտաբթուն հսկիչն է Ս. Էջմիածինը: Եւ մայրն այսօր
կը կանչէ աշխարհասփիւռ իր զաւակները, որպէսզի
մեր օրերու պարտքը կատարենք եւ միասնական աշ-
խատանքով ապահովենք անյետաձգելի վերանորոգու-
թիւնը Ս. Էջմիածնի Մայր տաճարին:

Հայոց Հայրապետը՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. կա-
թողիկոս Ամենայն Հայոց, իր սրբատառ կոնդակով կոչ
կը յղէ բոլոր հայութեան, որպէսզի գործնական աղօթ-
քով տէր կանգնենք, պահենք պահպանենք Ս. Էջմիա-
ծինը՝ որպէս լոյսի ու հաւատքի Փարոսը բոլոր սե-
րունդներուն համար.

*«Ի խորոց սրտի աղօթում ենք, որ Բարձրեալ Տէ-
րը Իր Սուրբ Աջի ամենախնամ հովանու ներքոյ պահ-
պանի ձեզ, սիրելի՛ հաւատաւոր եւ հաւատարիմ զա-
ւակներ մեր, պարգեւի բիւր բարիքներ եւ ամուր պահի
եկեղեցանութիւնումի, ազգանութիւնումի ու հայրենասի-
րութեան ձեր ոգին: Թող Աստուծոյ շնորհները հովանի
լինեն ազգիս հայոց եւ միշտ խաղաղ ու անսասան պա-
հեն մեր հայրենիքը, ամուր՝ մեր պետականութիւնը,
յաւէտ շէն ու պայծառ՝ Առաքելական մեր Սուրբ Եկե-
ղեցին»:*

Միրելի հայրողիք, պատմութեան մէջ քիչ անգամ կը պատահի, երբ առանձնաշնորհումը կը տրուի մեզ մեր հոգու պարտքը կատարելու մեր ազգի կեանքին Սրբութիւն Սրբոց Ս. Էջմիածնի նկատմամբ: Մեր պարտքը կատարենք հպարտութեամբ, գիտակից հաւատքով եւ այն մտածումով, որ Ս. Էջմիածնի Մայր Տաճարի վերանորոգութեան նուիրական պարտականութիւնը մերն է: Սրբալոյս միտոնը, որով մեր զաւակները կը դրոշմենք, մեզի կը բաշխուի Ս. Էջմիածնէն: Ուրեմն Մայրը այսօր պէտքն ունի իր զաւակաց, միասնաբար Անոր ձեռքերը վեր բռնենք:

Տարիներ առաջ Վեհափառի օրհնութեամբ ու նախաձեռնութեամբ կազմակերպուեցաւ Մայր Տաճարի վերանորոգութիւնը: Երբեւէ չէինք պատկերացնէր, որ աշխատանքը կրնար երկարիլ: Ամէն քայլափոխի անդրադարձանք, որ ընթացիկ վերանորոգութենէն աւելի հիմնական քայլերու անհրաժեշտութիւնը կար: Մասնագէտներ հրաւիրուեցան եւ՝ Իտալիայէն, եւ՝ Ճապոնիայէն, եւ անոնց քննութեան արդիւնքն եղաւ այն, որ Մայր Տաճարը կը գտնուէր փլուզման վտանգի առջեւ եւ անհրաժեշտ էր անյետաձգելի ու մեծածախ վերանորոգութիւն, Փառք Աստուծոյ, աշխատանքները կ'ընթանան, եւ յուսալից ենք, որ 2020 տարւոյ աւարտին Մայր Տաճարը իր դռները կը բանայ, եւ մեր ժողովուրդի զաւակները, Ս. Էջմիածնի կարօտը իրենց սրտերուն մէջ, կը փութան Ս. Էջմիածնի Մայր Տաճար՝ իրենց մօմը վառելու եւ ջերմ ու անկերծ աղօթքով ամրապնդելու Լուսաւորչի տեսիլքով երկինք բարձրացած Մայր Տաճարի հիմքերը:

Միրելի բարեպաշտ հաւատացեալներ, ձեզի կու գանք Ս. Էջմիածնի լոյս հաւատքով: Ձեզի կը բերենք Վեհափառ Հայրապետի սէրն ու օրհնութիւնները, որ-

պէսզի մշտապէս ձեր հոգու աչքերը ուղղէք դէպի Ս. Էջմիածին: Ձեզի կը բերենք մեր նախնեաց հաւատքի կանչը, որ բոլորս միասնաբար դրսևորենք մեր աղօթքը գործնական կերպով՝ մեր նուէրը պատրաստելով Ս. Էջմիածնի Մայր Տաճարի վերանորոգութեան համար: Մայր Տաճարի վերանորոգութիւնը մեր եւ՝ պարտքն է, եւ՝ պատիւը:

Թող Ամենակարող Աստուած իր Աջը հովանի դարձնէ բոլորիդ վրայ, որպէսզի մեր ինքնութեան խորհրդանիշ՝ Ս. Էջմիածնի լոյսի առջեւ մնանք խոնարհած: Ս. Էջմիածինը հայրենի հողին հետ միաձոյլ դարձած անժամանակին մէջ ապրող յաւերժութիւնն է:

Մեր մէջ է հաւատքին գիտակցութիւնն ու ոյժը, կեանքի կոչենք այն, եւ այն ժամանակ երկնքի մէջ մեր նահատակաց հոգիները պիտի հրճուին եւ իրենց յարուցեալ կեանքը տեսնեն մեր մէջ՝ վերանկախացեալ Մայր հայրենիքով, հօր եկեղեցիով եւ ազատատենչ մեր ժողովուրդով:

Սեպտեմբեր 4, 2020

ՄԲ. ԷԶՄԻԱԾԻՆԸ՝ «ԱՆԿԷԶ ՄՈՐԵՆԻՆ»

Հայ ժողովուրդի զաւակաց համար 301 թուականով կը սկսի պատմութեան նոր եւ ամենանշանակալից հանգրուանը, որով եւ կ'ուղեգծուի ճանապարհը դէպի յաւերժութիւն: 301 թուականին Հայաստան աշխարհը կը դառնայ առաջին քրիստոնեայ պետութիւնը, եւ 303 թուականին Լուսաւորիչ հայրապետի տեսիլքով Աստուածորդին երկինքէն երկիրն Արարատեան այցի կու գայ ոսկէ մուրճով՝ նշանակելով այն նուիրական տեղը, ուր եւ կը կառուցուի առաջին կաթողիկէն՝ բաբախող սիրտը ողջ հայութեան:

Բաբախող սիրտը Ս. Էջմիածինն է, որուն խորհուրդին առջեւ մեր ազգի զաւակունք անխտիր խոնարհած են եւ ապահովագրած նոր կեանքն ի Քրիստոս: Քանզի Ս. Էջմիածինը դարբնոցն է մեր հաւատքին, մեր ողջ սրբութեանց, հայոց այբուբենին, Վարդանանց ոգու եւ մինչեւ մեր օրերու Սարգսրապատի հերոսամարտն ու ազատատենչ Արցախը:

Մեր ազգի ինքնությունութեան ու յաւերժականութեան անկրկնելի գրաւականն է Ս. Էջմիածինը: Եւ աստուածաշնչական խօսքով՝ Ս. Էջմիածինը «Անկէզ մորենին» է:

Անցնող 1700 եւ աւելի տարիներու ընթացքին Ս. Էջմիածինը քայլած է Քրիստոսի հետ Գողգոթայի ճանապարհով, բայց քանի որ այն հաստատուած է Աստուծոյ Աջին զօրութեամբ, մեր Սրբութիւն Սրբոցը միշտ վեր է յառնած եւ կը շարունակէ ըլլալ լոյսի ու յոյսի փարոսը մեր ժողովուրդի հաւատաւոր զաւակաց ի

Հայաստան եւ ի Սփիւռս աշխարհի: Այս է պատգամը Ս. Էջմիածնի:

Այս օրերուն մեր մայրը՝ Ս. Էջմիածնի Մայր Տաճարը, կոչ կը յղէ բոլորիս, որպէսզի մեր հոգու հայեացքն ուղղենք դէպի Ս. Էջմիածնի Մայր Տաճար, որպէսզի անյետաձգելի վերանորոգչական աշխատանաց մէջ բերենք մեր բաժինը, կատարենք մեր հոգու պարտքը՝ գալիք սերունդներուն փոխանցելու համար հրաշքը՝ անժամանցելին:

Ս. Էջմիածնի Մայր Տաճարի վերականգնումը պարտք ենք կատարել համազգային ջանքերով, բոլորիս հաւատքի գիտակցութեամբ ու ծառայութեամբ: Այս ճանապարհին առաւել պիտի զօրանանք, որովհետեւ մեր էութեան մէջ պիտի կրենք լուսաւոր պատկերը Ս. Էջմիածնի:

Նոյեմբերի 28, 2019

ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆԸ՝ ԳԼՈՒԽ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Հայ Եկեղեցւոյ միութիւնը եւ հայ հաւատացեալ ժողովրդի ազգային միասնութիւնը հնարաւոր է հաստատել հայրենի հողի վրայ խարսխուած Սուրբ Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետութեան վեմին վրայ, որուն հաւասարագոր ուրիշ հեղինակութիւն կամ կեդրոն չէ եղած եւ չի կրնար ըլլալ:

Հայ Եկեղեցւոյ նուիրապետական կառոյցի կեդրոնը Ս. Էջմիածինն է: Կիլիկեան կաթողիկոսութեան եւ Երուսաղէմի ու Կ. Պոլսոյ Աթոռները, Սուրբ Էջմիածնի՝ դէպի Սփիւք երկարած թելերն են, գործակիցերն են, ամէն մէկը իր իրաւասութիւններով, իր ներքին կանոնադրութեամբ եւ իր աշխատանքի բաժինով: Խախտել այս պատմականօրէն հաստատուած նուիրապետական կառոյցը՝ կը նշանակէ անխուսափելի կերպով ստեղծել տեսալէս տագնապալի կացութիւններ եւ պառակտումներ, ինչպէս եղաւ վերջին քսան տարիներու ընթացքին: Անբնական է եւ անկանոն՝ պատկերացնել մէկ ու անբաժան Եկեղեցի մը երկու հաւասարագոր գլուխներով: Մէկ ու անբաժան մեր Եկեղեցւոյ նուիրապետական կառոյցը իր ներքին հաւասարակշռութիւնը եւ կարգապահութիւնը կը կորսնցնէ ամէն անգամ, երբ նոյն նուիրապետական կառոյցին մէջ տեղ ունեցող Աթոռ մը կը փորձէ տեղը գրաւել Եկեղեցւոյ բուն ու միակ գլուխին, ձգտելով իր իշխանութիւնը տարածել իր մասնաւոր Աթոռի սահմաններէն դուրս:

Հայոց Հայրապետ Վազգէն Ա-ի նամակէն՝ ուղղուած Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, Յուլիս 6, 1977թ.

«Ս. Էջմիածնի ճշմարտությունը թերագնահատել կը նշանակէ մերժել Աստուծոյ տուած մեծագոյն պարգեւը, որը գրաւականն է մեր գոյութենականութեան: Սուրբ Էջմիածին – պարզ անուն մը չէ սա: Այս անունը կը բացատրէ Աստուծոյ Էջքը Մայր հողի վրայ, Աստուծոյ ներգործութիւնը մեր ազգի կեանքին մէջ:

Մենք պիտի գուրգուրանք Աստուծոյ կողմէ մեզ տրուած մեծ պարգեւին՝ Ս. Էջմիածնին համար, որը մեր առջեւ կը բանայ ճանապարհը յաւերժութեան: Ժամանակներու հոլովոյթին հետ նոր պատգամ կը բերէ Ս. Էջմիածինը մեր ազգի գաւակաց:

Այսօր Ս. Էջմիածինը պատգամ կը կարդայ բոլորին խոնարհելու իր սուրբ խորանին առջեւ, մանաւանդ պատմական այնպիսի ժամանակահատուածի մը ընթացքին, երբ արտաքին դժնդակ պայմանները ամէն օր եւ ամէն ժամ վտանգ կը սպառնան եւ՝ մեր երկրին, եւ՝ մեր ժողովուրդի գոյութեան:

Ս. Էջմիածինը մեր կեանքը ապահովագրող աստուածային ներկայութիւնը կը շարունակէ մնալ»:

Յունիս 6, 2019

ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԾԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Հայոց Առաքելական Ս. Եկեղեցւոյ առաքելութիւնն այսօր, առաւել քան բոլոր ժամանակները, կը գտնուի գլխաւոր հրամայականի մը առջեւ, որը կ'արդիւնաւորուի հիմնականին մէջ թեմական եւ ծխական կեանքի կազմակերպութեանը մէջ: Աստուծոյ խօսքին քարոզչութիւնը ժողովուրդի հոգեւոր կեանքին մէջ աւելիով խորացնելու համար անհրաժեշտ է նոր մակարդակի մը վրայ բերել թեմական եւ ծխական կեանքին կազմակերպութիւնը՝ հաշուի առնելով ներկայ ժամանակի այն բազում հանգամանքները, որոնք յստակօրէն մարտահրաւերներ են:

Այս ներածութիւնը չմիտիր նոր խօսք փոխանցելու Ազգային եկեղեցական ժողովին մասնակից պատգամաւորներուն, որպէս հաւաքական աղօթքով, հաւատքով եւ ներգործական աշխատանքով ու ծառայութեամբ կարելի ըլլայ գործնականացնել թեմական եւ ծխական կեանքին տեսիլքը, որը եղած էր մեր սուրբ եկեղեցւոյ հայրերունը եւ այն առաւել շեշտադրութեամբ պէտք է ըլլայ մեր բոլորինը:

Արդ, ամփոփ կերպով կ'ուզենք հաստատել, որ եկեղեցին ու եկեղեցւոյ առաքելութիւնը աշխուժացնելու եւ անոր շարունակութիւնը ապահովելու համար ամէն բանէ առաջ մենք պիտի վերանորոգենք հաւատքի գիտակցութիւնը Աստուծոյ նկատմամբ եւ ապա օգտագործենք այն բոլոր միջոցներն ու մեթոդները, որոնք մեզի են հասած եկեղեցւոյ աւանդութեամբ: Եւ որպէսզի մեր տեսիլքը՝ թեմական եւ ծխական կեանքը առաւել

կազմակերպութեամբ ապահովենք, ապա հիմնական-
նօրէն պէտք է մեր աչքին առջեւ ունենանք հետեւեալ
հիմնական քայլերն ու միջոցները.

Ա. Հոգեւորականներու պատրաստութիւնը

Բ. Թեմական եւ ծխական կեանքին

կազմակերպութեան ուղենիշները

Գ. Հովուական աստուածաբանութեան

գործնական ձեռնարկները:

Եթէ մենք վերոյիշեալ հիմնական քայլերն ու մի-
ջոցները ի գործ դնենք խոր համոզմունքով, հաւատքով
ու յանձնառութեամբ, ապա ճշմարտապէս կը յաջողինք
թեմական եւ ծխական կեանքին կազմակերպութեան
առաքելութեանը մէջ, միշտ որպէս հիմք ունենալով
Աստուածաշունչ մատեանը, մեր հաւատամքը եւ մեր
հայրերու սրբազան ասանդութիւնները:

Այս ներածականը թերեւս ամփոփ կը թուի ըլլալ,
բայց երբ աչքի առաջ կ'ունենանք վերոյիշեալ երեք քայ-
լերն ու միջոցները եւ մասնաւոր անոնց առաւել աշխու-
ժութեամբ գործնականացումը, ապա անտարակոյս թե-
մական եւ ծխական կեանքին կազմակերպութիւնը կը
բերենք տեսանելի նոր մակարդակի մը վրայ:

Նոյեմբեր, 2019

ՈՂԶՈՅՆԻ ԽՕՍՔ՝ ՈՒՂՂՈՒԱԾ ՈՒՍՈՒՑՉԱՑ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

Եկեղեցին հայ քրիստոնեայի անհատական թե՛ հաւաքական ու ազգային կեանքին մէջ Աստուածահիմն գերագոյն պարգէնն է, որուն պատկերին մէջ մենք կը տեսնենք Աստուծոյ ներկայութիւնը, մեր ինքնութիւնը, մեր առաջ բացուած կեանքի ճանապարհը: Եկեղեցին՝ մարդկային ձեռակերտը չէ, այլեւ՝ աստուածայինը, որ նկարագիր կը շնորհէ մեր էութեանը, որպէսզի մեր մէջ բիրեղացնենք նաեւ Աստուծոյ պատկերը:

Իր իւրովի նկարագրով Հայց. Առաքելական մեր Մայր Մբ. Եկեղեցին կ'առանձնանայ միւս բոլոր քոյր Եկեղեցիներէն այն հիմնական պատճառով, որ Հայց. Եկեղեցին եղած է հաւատացողը մշակոյթին ու անոր ընձեռած արժէքներուն, որոնցով եւ կը պայմանաւորուի նաեւ ազգի մը գոյութենականութիւնը: Եւ փոխադարձաբար, մենք մեր մշակոյթին մէջ կը տեսնենք նաեւ մեր քրիստոնէական կրօնքը: Այս առումով հոգելոյս Վազգէն Ա. գեղեցիկ բնորոշում մը կու տայ մշակոյթի մասին, ուր եւ կ'անդրադառնայ այն հիմնական մտածողութեան, թէ մեր ժողովուրդը մշակոյթի մէջ գտած է իր կրօնքը. «Հայ ժողովուրդը պիտի ապրի ու պիտի տոկայ նաեւ յետ այսու, առաւելապէս իր մշակոյթով, իր ստեղծած արժէքներով: Եւ անտարակոյս այդ կարելի է իրականացնել, եւ ան սկսած է իրականանալ միմիայն հայրենի հողի վրայ»: Այնուհետեւ, Վեհափառը կը զարգացնէ հետեւեալ մտածողութիւնը, թէ՛ «Մարդու գաղափարը առաւելապէս եւ էապէս բնորոշողը մշակոյթն է՝ իր ամենալայն իմաստով, կրօնքն ալ մէջը առնուած»:

Հայ ուսուցիչը ունի իւրայատուկ առաքելութիւն: Ան ոչ միայն աշակերտին հաղորդ կը դարձնէ հայոց այբուբենին ու մշակոյթին, այլեւ հոգեւոր ու ազգային արժէքներու ամբողջութիւնը ջամբելու նուիրական պարտականութիւնը կը վերցնէ իր ուսերուն եւ այս բոլորին մէջ Հայց. Եկեղեցին կը ներկանայ որպէս արմատն ու հիմքը մեր մտասէւեռումին: Մեր դաստիարակչական առաքելութիւնը կը մնայ անկատար, եթէ երբեք մենք մեր մէջ չենք խորացնէր գիտակցութիւնը՝ ըմբռնելու Հայ Եկեղեցւոյ ճշմարտութեան ու անոր առաքելութեան: Այստեղ հարկ կը զգանք մի քանի մէջբերում կատարել Վազգէն Ա. Կաթողիկոսի մտածումներէն, որոնք իրօք իրենց այժմեականութիւնը երբեւէ չեն կորսնցուցած.

«Հայաստանեայց մեր Եկեղեցին, իր առաքելական սկզբնաւորութեամբ, մօտ երկհազարամեայ պատմական իր կեանքով ու իրագործումներով եւ իր ուղղափառ վարդապետութեամբ, քրիստոնէական լոյս հաւատքը ստեղծագործօրէն ապրող ու ինքնուրոյն ճառագայթումով փառաւորող ամենավաւերական Եկեղեցիներէն մին կը հանդիսանայ մարդկային աշխարհին մէջ, այսպիսով անբաժանելի մասը ըլլալով Քրիստոսի Տիեզերական Եկեղեցւոյ:

Հայաստանեայց Եկեղեցին՝ հայ ժողովուրդի ոգեկանութեան ու կրօնական տեսիլքներու մարմնացումն է, Քրիստոսի խօսքը համազգային վաւերական ապրումի ու ստեղծագործ առաքելութեան վերածած, հարազատօրէն հայկականութեան ձեւերու մէջ:

Հայաստանեայց Եկեղեցին համազգային է եւ հայկական՝ իր մայրենի լեզուով ու մատենագրութեամբ, իր ճարտարապետութեամբ, երաժշտութեամբ ու սրբանկարչութեամբ, իր ծէսով ու իր աղօթքներով, իր անհամար սրբավայրերով՝ սփռուած ամբողջ պատմական

Հայաստանի տարածքի վրայ, իր անկախ նուիրապետական կառոյցով, իր հոգեբանութեամբ եւ բազմադարեան իր բոլոր իրագործումներով, նաեւ իր հերոսական մաքառումներով, վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց»:

Մէկ այլ տեղ Վեհափառը երբ կը խօսի Սփիւքի մասին եւ այստեղ Եկեղեցոյ առաքելութիւնը մատնացոյց կ'ընէ, ան կը կատարէ երկու հիմնական հաստատումներ, որոնցմէ առաջինը կը վերաբերի Հայ Եկեղեցոյ հեղինակութեան յաշս հիւրընկալ պետութեանց, եւ միւսը կը խօսի Հայ Եկեղեցոյ մասին, որպէս գլխաւոր կոռուանը Սփիւքի իրականութեան մէջ, որով եւ կը պայմանաւորուի մեր ազգի յաւերժականութիւնը, քանզի Եկեղեցին ինչպէս անցեալին, այսօր եւ յաւիտեան պիտի շարունակէ ըլլալ ոսկի կամուրջը մեզ դէպի Հայրենիք տանող եւ պարտաւորեցնող որ խոնարհինք Սբ. Էջմիածնի Խորհուրդին առջեւ:

«Յօգուտ Հայ Եկեղեցոյ համազգային հոգեւոր առաքելութեան, կարեւորութեամբ յիշենք այստեղ նաեւ այն հիմնական իրաւական իրողութիւնը, թէ Սփիւքի տարածքի վրայ, յաշս հիւրընկալ պետութեանց, հայերը իրենց ինքնութիւնը իրաւապէս կրնան պահպանել եւ ճանաչում ստանալ իբրեւ կրօնական համայնքներ, այսինքն իբրեւ Եկեղեցի: Այս ճշմարտութիւնը յաճախ շատերու կողմէ կ'անտեսուի:

Մեր մտահոգութիւնները եւ Մեր խոհերը ի մի բերելով, կը կամենանք եզրակացնել, թէ արտասահմանի հայութեան ինքնութեան ամբողջ ու անվտանգ պահպանման ամենաամուր, ամենահայկական, ամենատեւական ու ամենաօրինական հիմքը Հայ Առաքելական Եկեղեցին է թէ՛ գործնական եւ թէ՛ իրաւական տեսակետներէ:

Մեր բոլորիս խղճի պարտքն է յատակել, բիրեն դացնել եւ գործնական ծրագրի վերածել Հայաստանեայց Եկեղեցոյ նուիրական առաքելութիւնը, այսօր մեզի յանձնուած ժողովուրդի կեանքին մէջ:

Մեր բոլորիս խղճի պարտքն է, իրաւ հաւատքով դէպի մեր սուրբ գործը, անձնուրացութեամբ աշխատանքի լծուիլ, միակամ ու միախորհուրդ, մէկգմիւսին նեցուկ, մէկգմիւսին հնազանդ «երկիրդովը Քրիստոսի», աշխատանքի լծուիլ միշտ յիշելով Աւետարանի պատուիրանը, թէ՛ *«որ կամիցի ի ձէնջ առաջին լինել, եղիցի ամենեցուն ծառայ»* (Մարկոս 10: 45):

Միբելի ուսուցիչներ, դուք դաստիարակներ էք եւ աւետարանական իմաստով ալ առաքեալներ էք: Դուք ընտրեալներ էք եւ ձեր կոչումին որպէս հաւատացող նուիրեալ սպասաւորներ եկած էք այս համաժողովին մասնակցելու առաւել պատրաստուած ձեր ծառայութիւնը բերելու ի նպաստ Հայ Դպրոցին:

2018

“ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒՆ ՊԱՀՊԱՆԷ, ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱԻԱՏՔԴ ԱՊՐԻՐ”

Տարեմուտ է եւ որպէս Հայց. Առաքելական մեր Մայր Սուրբ Եկեղեցւոյ սպասաւոր ջերմօրէն կ'ողջունենք բոլոր ծնողներն ու իրենց զաւակները, որպէսզի նորովի կորովով եւ նուիրումով միասնաբար լծուինք Մայրենի լեզուն պահպանելու եւ քրիստոնէական հաւատքն ապրելու նուիրական առաքելութեան:

Մեր կոչն է, որ ծնողները մեզ հետ համագործակից ըլլան նոր սերունդի դաստիարակութեան սրբազան առաքելութեան: Հայ ընտանիքը առաջին դպրոցն է եւ մանրակերտը Հայ Եկեղեցւոյ:

Մեր առաքելութեան մեջ պիտի յաջողինք, որովհետեւ մեր նախնեաց տեսիլքն է եղած, որ նորահաս սերունդներ ապրին աստուածսիրութեամբ, հայրենակերտումի ոգով, եկեղեցանուէր կեանքով եւ հայ մշակոյթի հանդէպ գուրգուրանքով: Գերագոյն նպատակն է սա բոլորիս, որովհետեւ նիւթական արժէքները անցողակի են եւ անժամանցելին եւ յաւիտենականը՝ Աստուծոյ տուածն է: Մենք լիովին համոզուած ենք, որ մեր նշած հոգեւոր արժէքները հոգեւոր ժառանգն են մեզի վստահուած մեր նախնեաց կողմէ: Երբ կը պահենք այս բոլորը եւ կ'ապրինք հայուն վայել գիտակից կեանքով, ապա հոգեւորապէս հարուստ է մեր կեանքը եւ ամենէն կարեւորը ունինք նկարագիր:

Հետեւաբար, սիրելի ծնողներ, ի գին ամէն զոհողութեան ձեր զաւակներուն փոխանցէք մեր կողմէ ընդգծուած արժէքները, որպէսզի մեր կեանքը դարձնենք

լաւագոյն ու ամենէն ընտիր ընծան՝ նահատակաց Սուրբ Խորանին առջեւ:

Իսկ պատանիներուն, երիտասարդներուն ուղղելով մեր խօսքը կ'ուզենք վստահ ըլլալ, որ հպարտ էք ձեր հայ քրիստոնեայի նկարագրով: Ապրեցէք Աստուծոյ սիրով, թող ձեր սէրը ըլլայ ողջ մարդկութեան համար, որպէսզի գործնապէս ցոյց տաք ձեր սէրը եւ ձեր կեանքը դառնայ բարի օրինակ բոլորին համար անխտիր: Միրեցէք ձեր մայրենի լեզուն, սովորեցէք ձեր պատմութիւնը, նուիրէք ձեր կեանքը Մայր Հայաստանին եւ մնացէք արդար քաղաքացիները Միացեալ Ամերիկայի:

Թող Աստուծոյ սէրն ու իմաստութիւնը մշտապէս առաջնորդէ ձեզ: Ամէն:

Մեպտեմբեր 1, 2018

ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ ՍԲ. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Աստուածամայրը Հայց. Առաքելական մեր Մայր Սբ. Եկեղեցոյ կեանքին մէջ առաջինն ու գլխաւոր սուրբն է, որուն հանդէպ հաւատացելոց խոնարհումը դարերով շարունակ արտայայտուած է եւ ի մասնաւորի անոր անձին ձօնուած հրաշալի շարականներու միջոցով:

Ո՞վ էր Սբ. Կոյս Մարիամ Աստուածածինը, Աստուածամայրը, որուն կերպարը հիմք դարձաւ մայրութեան բոլոր մայրերու համար: Ան խոնարհ իր անձով Աստուծոյ կանչին պատասխանեց եւ հնազանդութեամբ դարձաւ մայրը Աստուածորդու, խնամեց զԻնք եւ հետեւեցաւ Անոր մինչեւ Գողգոթա: Ուրեմն, երբ մեր աղօթքներուն շեշտը եւ սլաքը կը կեդրոնացնենք անոր անձին վրայ, ապա իր էութեան մէջէն մեզի կը հաղորդրի խոնարհութեան դասը, եւ յատկապէս անոր կերպարը կը դառնայ հայելին բոլոր մայրերուն համար, որպէսզի կեանքը ապրին Աստուծամօր կեանքին օրինակով: Եւ այդպէս ալ կ'ապրիք ձեր կեանքը սիրելի մայրեր, խոնարհ ծառայութեամբ, անսահման զոհողութեամբ, եւ այն քաջ գիտակցութեամբ, որ ձեզի վստահուած զաւակը կամ զաւակները Աստուծոյ կանչն ու տուածն է:

Աշխարհի կեանքին մէջ, եթէ երբեք մարդիկ կորսնցնեն խոնարհումի գիտակցութիւնը, կամ մայրեր իրենց համար որպէս առաջնորդող բարի մօր կերպարը չունենան, ապա մենք կ'ապրինք մեքենայացուած կեանքով, րոբոտի կեանքով, որուն որպէս հետեւանք՝ կտրուած կ'ըլլանք Աստուծմէ:

Քրիստոնէական Եկեղեցին եւ Հայց. Եկեղեցին կը հաւատայ որ Աստուածամայրը իր կեանքի աւարտին Երկինք վերափոխուեցաւ: Բայց մենք պիտի ուզենք ըսել եւ հաստատել աւելին, որ Աստուածամայրը դարձաւ մնայուն խորհուրդը մեր սրտերուն ու հոգիներուն մէջ, որ մշտապէս կ'առաջնորդէ մեզ: Աստուածամօր Երկինք վերափոխումը, եթէ երբեք չկարողանանք վերածել մշտական այցի մը մեր էութեան մէջ, որպէսզի այլակերպէ մեր հոգեւոր էութիւնը, այն ժամանակ մեր աղօթքը կ'ըլլայ առանց խոստումի, աղօթք առանց գործնականացնելու անոր կեանքի ուղին մեր առօրեային մէջ:

Սիրելի մայրեր, այսօր Աստուածամօր տօնն է եւ մենք բնականօրէն կը տօնախմբենք անոր յիշատակը: Այսօր կը տօնախմբենք նաեւ բոլոր մայրերու պատարագումը, որովհետեւ ինչպէս Աստուածամայրը պատանի Յիսուսը առաջնորդեց տաճար, այդպէս ալ կը սպասենք, որ մեր մայրերը իրենց զաւակները առաջնորդեն Եկեղեցի: Աստուածամօր յիշատակի տօնախմբութիւնը կը պարտաւորեցնէ նաեւ բոլորիս վրայ իր խոնարհ կեանքի օրինակը:

Սիրելիներ, Աստուածամայրը ընտրուեց խոնարհներուն մէջէն: Հոգեւոր կեանքով հարուստ էր ան, որուն համար իր մէջ գտաւ ոյժը քաջօրէն պատասխանելու Աստուծոյ կանչին: Ուրեմն, այս տօնը մեզ կը յուշէ նաեւ այն հիմնական պատգամը, որ մեր կեանքը լեցնենք անոր կեանքին օրինակով: Ժամանակները կը պահանջեն, որ հայ ընտանիքը առաւել խստապահանջ ու նախանձախնդիր իր զաւակներուն ջամբէ քրիստոնէական հաւատքը եւ անոնց ձեռքերուն մէջ դնէ կեանքի Գիրքը – որը մեզի կ'ուսուցանէ Աստուծոյ խօսքը, որպէսզի ապրինք Քրիստոսի նմանակցութեամբ:

Աստուածամօր տօնը կ'իմաստաւորուի, երբ մենք զայն կը դարձնենք ներկայութիւն մեր հոգեւոր էութեան մէջ:

Այսօր կ'օրհնենք նաեւ խաղողը որպէս խորհրդանիշը հողէն մեզի հասած բոլոր բարիքներուն: Կ'աղօթենք, որ Տէրը վտանգներէ հեռու պահէ դաշտերն ու այգիները: Խորհրդանշական իմաստով մեր հոգեւոր կեանքին խաղողն է Աստուածամայրը, որուն հետ հաղորդութեան մէջ մնացած կեանքը կը մնայ սուրբ եւ մաքուր, հեռու փորձութիւններէ: Ուրեմն, այնպէս ապրինք մեր կեանքը, որպէսզի զայն դարձնենք նաեւ ընծայում Աստուծոյ Սբ. Խորանին, մարդկութեան առջեւ խոնարհած ու պատարագեալ կեանք: Այնպէս ապրինք մեր կեանքը, որ զայն դարձնենք ընծայում մեր Սբ. Եկեղեցւոյ Խորանին, հայրենական հողին: Այսօրինակ կեանքը կը դառնայ փառքն Աստուծոյ:

Օգոստոս 13, 2017

ՍԱՓՕՐ ՈՍԿԵՂԷՆ ԼԻ ՄԱՆԱՆԱՅԻԻ

Աստուածամայրը քրիստոնեական Եկեղեցւոյ կեանքին մէջ կը ներկայանայ սուրբերուն մէջ առաջին սուրբը, որուն անձին մէջ կատարելապէս կ'արտացոլուի մայրական կերպարը: Իր խոնարհ նկարագրով Ս. Կոյսը՝ Մարիամ, հնազանդեցաւ Աստուծոյ կանչին եւ կատարեց Աստուծոյ կամքը՝ դառնալով Մայր Աստուծոյ Միածին Որդւոյն, այնուհետեւ կատարելով մայրական իր ամբողջական պարտաւորութիւններն ու պարտականութիւնները իր որդւոյն նկատմամբ:

Աւետարաններուն մէջ շատ քիչ առիթներով մեզի կը ներկայանայ Աստուածամայրը, բայց եւ այնպէս ակներեւ կը տեսնենք այն, որ Աստուածամայրը լիարժէք կը հետեւէր իր որդւոյն առաքելութեան, ընդհուպ մինչեւ իսկ միջամտութիւններ կատարելով մասնաւոր առիթներով, ինչպիսին կը տեսնենք Կանայի Գալիլիացւոց հարսանեաց արարողութեան ընթացքին: Ամենէն ցնցող պատկերը բնականօրէն, Աստուածորդու տառապանաց եւ խաչելութեան իր ներկայութիւնն է, պատկեր մը, որուն մէջ կը տեսնենք մայրական սիրոյ ու նուիրաբերումի անսահմանելութիւնը:

Աստուածամայրը քրիստոնեական Եկեղեցւոյ կեանքին մէջ կեդրոնական ներկայութիւն է: Բազում դասեր կը քաղենք անոր կեանքէն. առաջին եւ կարեւորագոյնը այն է, որ անոր անձին մէջ կը տեսնենք խոնարհագոյն էութիւն մը, որուն կեանքին ընթացքը ինքզինք արդարացւոց հոգեւորին ու բարոյականութեան յաղթանակումով: Ան քաջութեամբ պատասխանեց Աստուծոյ կանչին ու իր մէջ գտաւ կոչումը՝ դառնալու հա-

մար Աստուածածին ու Աստուածամայր: Աւետումը կը ներշնչէ մեզ բոլորս, որպէսզի իւրաքանչիւրս ունենանք աղօթքի խորը պահ մը ու մեր հոգեւոր էութեան մէջ փնտռենք ու գտնենք աստուածային կոչումը եւ անսանք անոր: Իր խոնարհութեամբ ու կոչումին գիտակից կեանքին մէջ Աստուածամայրը եղաւ Քրիստոսի առաքելութեան հաւատացող հիմնական դերակատարը: Ան իմաստութեամբ կը հետեւէր Քրիստոսի եւ ի պահանջել հարկին կը կատարէր ցուցումներ:

Ինչո՞ւ համար այնքան սիրելի է Աստուածամօր տօնը մեզի համար, եւ ինչպէ՞ս պիտի իմաստաւորենք այս տօնը մեր առօրեայ կեանքին մէջ: Իւրաքանչիւր եկեղեցական տօնախմբութիւն ունի գլխաւոր նպատակ մը, որն է մեր կեանքը բարձրացնելու առ Աստուած, մեր մէջ մշակելու հաւատքի կեանքը: Եւ եթէ այս է նպատակը եկեղեցական տօնախմբութեան, ապա ինչպիսի՞ դաս կը քաղենք Աստուածամօր Վերափոխման Տօնին:

Օրուան տօնախմբութիւնը կ'իմաստաւորուի, երբ մենք մեր կեանքը կը դարձնենք խոնարհ կեանքի ճանապարհորդութիւն մը ինչպիսին էր Աստուածամօր կեանքը եւ իր ապրած կեանքի ընթացքը: Այսօրուան աշխարհի մէջ շատեր հեռու մնալով խոնարհ ընթացքէն, փաստօրէն հեռու կը մնան նաեւ Աստուծմէ: Խոնարհութեան բացակայութիւնն է նաեւ, որ մեզ կ'առաջնորդէ դէպի ոչ օրինակելի կեանք մը: Խոնարհութեան մէջ ապրող մարդիկ ոչ միայն իրենց ներսիդին կը գտնեն Աստուծոյ ներկայութիւնը, այլեւ Աստուծոյ խօսքը կը լսեն ընկերոջ կեանքին մէջ եւս:

Օրուան տօնախմբութիւնը կ'իմաստաւորենք նաեւ երբ կը լսենք Աստուծոյ կանչը, եւ կը զգանք որ կոչում ունինք ծառայութեան: Իր կոչումին հարազատ մնաց

Աստուածամայրը: Աղօթքի այս պահուն յարգենք նաեւ մեզի տրուած կոչումը:

Աստուածամօր Վերափոխման տօնը Եկեղեցին յաճախ յայտարարած է նաեւ որպէս Մայրերու Տօն եւ Եկեղեցւոյ տօնը որպէս Մայրը բոլորին: Եթէ Եկեղեցին մայրն է բոլորիս, ապա բոլորս պիտի խոնարհինք Եկեղեցւոյ խորհուրդին առջեւ Սբ. Աստուածածնի տօնին ու հետեւինք առաջին սուրբին կեանքի օրինակին:

Աստուածամօր տօնը հրաւեր է, որ հայ քրիստոնէան ապրող հաւատքով հարստացնէ իր կեանքը: Աստուածամօր տօնը հրաւեր է՝ ուղղուած բոլորիս, որ հոգեւոր եւ բարոյական արժէքներու տեսիլքը դարձնենք մշտական մեր հոգեւոր էութեանը մէջ: Հաւատքը մեր ինքնապաշտպանութեան վահանն է, որ մաքուր պահենք աստուծապարգեւ մեր կեանքը եւ ապրինք կառուցողական կեանք՝ մեր զաւակաց հաղորդելով Աստուածսիրութիւն, եկեղեցասիրութիւն, հայրենասիրութիւն, բարեսէր կեանքի տեսիլք, հայ քրիստոնէայի սրբութեան խորհուրդը, հայ դպրոցի պահպանութեան պատասխանատուութեան զգացողութիւնը, հայաշունչ աւանդութիւններու պահպանութիւն: Եկեղեցին այս բոլորի պարտականութիւնը կը վերցնէ իր վրայ եւ կը յաջողինք միայն այն ժամանակ, երբ միասին կը գործենք: Սա պայման է, որովհետեւ բոլորս միասին ենք կոչուած քահանայութեան, դառնալու առաքեալ Քրիստոսի Եկեղեցւոյ:

Եկեղեցին այսօր կը կատարէ նաեւ խաղողի օրհնութեան կարգը: Այս արարողութիւնը կը խորհրդանշէ մեր գոհաբանութիւնը առ Աստուած հողէն մեզի հասած բարիքներուն համար: Կարծէք, հողն անգամ մարդկութեան առաջ կը ներկայանայ որպէս տեսակ մը մայրու-

թին խորհրդանշող ներկայություն, որովհետեւ կը վայելենք անկէ մեզի եկած բարիքները:

Թող բոլորիս աղօթքը առաջնորդէ մեզ մեր հաւատքի կեանքին սնունդը դարձնելու Աստուածամօր ներկայութիւնը եւ աղօթքն առ Աստուած, որ օրինէ հողէն հասած բոլոր բարիքները, որպէսզի այս բոլորին մէջ փառաւորենք Աստուծոյ անունը: Ամէն:

Օգոստոս 12, 2018

ՄԵՐ ՊԱՏԱՐԱԳԸ

Հոգեւորականի կեանքին մէջ Սբ. Պատարագը առանցքն է իր հոգեւոր ճանապարհորդութեան ընթացքին: Այս խոր համոզումը իմ մէջ սկսած է խմորուիլ դեռեւս իմ մանուկ տարիքէն, երբ անբացատրելի ներքին զգացողութեամբ սէրս աճած է դէպի Սբ. Պատարագը, որուն ամբողջ ընթացքը ինձ մշտապէս կը պարզելէ ուրախութեան բարձրակէտը:

Սբ. Պատարագը մեզի կը ներկայացնէ Քրիստոսի Անձը, որուն մէջ կը տեսնենք սկիզբը նոր կեանքին, առաւել կեանքին, ճշմարիտին ու յաւիտենականին:

Սեր Պատարագը, որ իւրովի կերպով է մշակուած մեր Սբ. Եկեղեցւոյ հայրերու կողմէ իր վեհութեամբ ու խորհրդաւորութեամբ, մեր հոգեւոր էութեանը մէջ կը պարտաւորեցնէ վերացում առ Աստուած: Եւ մարդու կեանքի մէջ Աստուծոյ հետ միութիւնը ճշմարտապէս պայծառակերպութիւն է, որուն կը ձգտինք բոլորս ալ: Մեր Սբ. Պատարագը հաւասարապէս իր մէջ կ'ամփոփէ մեր Սբ. Եկեղեցւոյ ողջ պատմութիւնը, պատկերը մեր ազգի կեանքի, այն իմաստով, որ ինչպէս Քրիստոս բարձրացաւ Գողգոթա, ապա յստակ կ'երեւի որ մեր ազգի կեանքի ճանապարհն ալ իր ընթացքը հաստատած է նոյն Գողգոթայի ճանապարհին, բայց Քրիստոսի հետ մեր վրայ ենք վերցուցած Յարութեան շունչը:

Սեր Սբ. Պատարագը իւրաքանչիւրիս կեանքին մէջ կը հաստատէ աղօթքի եւ խոնարհումի պահը Աստուծոյ ներկայութեան: Սբ. Պատարագին մեր ներկայութեամբ կը կտրուինք ժամանակէն ու տեղի հասկացո-

դութենէն եւ կ'ապրինք նոր կեանքին խորհուրդը: Մեր Սբ. Պատարագին ներկայութիւնը որոշապէս մեր մէջ կը խորացնէ սրբութեան տեսիլքը Քրիստոսով ապրուած կեանքին մէջ պայմանաւորուած: Եւ ինչքան յստակութեամբ կը պատգամէ Պօղոս Առաքեալ, երբ կ'ըսէ. «Զի ինձ կեանք Քրիստոս է»:

Խաղաղ է հոգիս, միտքս ու սիրտս, երբ քայլերս կ'ուղղեմ դէպի Աստուած ու ինձ ուղեկից է Քրիստոս: Ահա այս զգացողութեան կը հրաւիրէ մեզ Սբ. Պատարագը:

Օգոստոս 26, 2018

ՇԱՐԱԿԱՆՆԵՐ

Եկեղեցին՝ քրիստոնեական վարդապետութեան համաձայն հաւատացելոց խումբն է, մէկտեղումը անոնց, ովքեր սաղմոսներու արտասանութեամբ ու շարականներու երգեցողութեամբ անհատն ու հաւաքականութիւնը կ'առաջնորդեն առ Աստուած: Այս ընթացքը կ'երաշխատրուի, երբ կը մշակենք մեր հաւատքի կեանքը զանազան միջոցներով: Աստուածաշունչի սերտողութեամբ, աղօթքներու արտասանութեամբ, սաղմոսներու ընթերցումով, ծիսակատարութեամբ եւ ի մասնաւորի՝ շարականներու երգեցողութեամբ:

Ի՞նչ է շարականը. հոգեւոր երգ է, զորս աղօթքի փոխարէն կ'երգուի, «իր զուտ կրօնական բովանդակութեամբ եւ հոգեւոր կեանքի մշակման, զարգացման դաստիարակչական նպատակով»:

Բնական է կարելի է մասնագիտացուած ոճով խօսիլ շարականին կառուցուածքին մասին տեղեակ դառնալու համար որտեղ կարելի է յստակօրէն տեսնել շարականները իրենց զանազանութեամբ, եւ թէ ինչպիսի՞ն է կառուցուածքն ու արմատը անոնց: Բայց մեր նպատակը չէ խօսիլ անոնց կառուցուածքային տեսակներու մասին, այլեւ՝ շեշտադրումը գլխաւորաբար անոնց բովանդակութեան մասին է: Երբ ուշի-ուշով կը կարդանք շարականները իրենց ամբողջութեան մէջ, ապա բոլորին մէջ կը գտնենք *«աղօթք, աղաչանք, ներբող, եւ փառաբանութիւն, սրբոց վարք, յորդոր, քարոզ, վարդապետութիւն եւ վերջապէս, կրօնական կեանքի յատուկ ամէն ինչ իրենց տեղը ունին շարակնոցին մէջ»*:

Մենք պարզօրէն պիտի ուզենք ընդգծել այն մտածումը, որ շարակնոցը իրերի իր ամբողջութեանը մէջ կ'արտացոլէ Աստուածաշունչ Մատեանը՝ ստեղծագործութենէն մինչեւ Քրիստոսի կեանքը եւ դեռ աւելին՝ մինչեւ Եկեղեցւոյ հայրերուն կեանքն ու ազգային իրադարձութիւնները: Այս առումով ալ կարելի է նոյնիսկ ըսել ու ընդգծել այն մտածումը, որ շարականները եւս ունին նոյնքան դաստիարակչական բնոյթ:

Հոգեւոյս Գարեգին Ա. երբ կը խօսի շարականներու մասին ու ի մասնաւորի անոնց ներքին բովանդակութեան մասին, կ'ընդգծէ հետեւեալը. «Շարականները, աստուածայինին մօտեցնող, բարձրացնող ընթացք մը կ'ապահովեն մարդուն համար: Շարականներուն մէջ մանրամասն ներառնուած են Հին Ուխտը եւ ի մասնաւորի Քրիստոսի կեանքին հանգրուանները. Ծնունդէն մինչեւ Համբարձում, եւ տակաւին մինչեւ սուրբերն ու հայրապետները, որոնք բոլորն ալ ապրած են քրիստոնէական հաւատքը եւ նոյնին համար պատարագած իրենց կեանքը: Վերջիններուս մասին խօսելով կարելի է տալ հետեւեալ սահմանումը. «ականատեսք եւ սպասաւորք եղեն մարմնացեալ Բանին»:

Եւ երբ կը ծանօթանանք շարականներու բովանդակութեան, այն ժամանակ կ'ըմբռնենք նաեւ թէ ինչպիսի՞ նպատակ կը հետապնդեն շարականները. «որպէսզի նմանեցուք վարուց սրբոց»:

Շարականներու նպատակը կ'իրականանայ, որովհետեւ այնտեղ ամփոփուած է աղօթք, պատմութիւն, աստուածաբանութիւն եւ այն ամէնը, որոնցմով եւ կը կարողանանք պայմանաւորել ամբողջացումը մեր քրիստոնէական նկարագրին: Մէկ խօսքով, ինչպէս Աստուածաշունչը կեանքի Գիրքն է, ահա այդ կարելի է ըսել շարականին համար: Ի մասնաւորի, երբ շարականներու

երգեցողությունը կը կատարենք՝ հասկնալով բառերուն խորքը, անոնցմէ մեզ ճառագայթող աստուածային լոյսը, ապա կը զգանք, որ արդէն իսկ աղօթքի մէջ ենք, որովհետեւ շարականներուն բառերը կը դարձնենք մեր աղօթքին բառերը, որոնք եւ կ'արտացոլեն մեր ներքին ապրումներն ու զգացումները եւ մեզ կը կապեն Արարիչն Աստուծոյ հետ:

Շարականներուն մէջ կը գտնենք «*կեանքի տիպարը՝ Քրիստոսի կեանքը*» եւ ապա Անոր կեանքին հետեւեող անձերը: Այս ամբողջությունը կարելի է ամփոփել մէկ բառի մէջ. Աղօթք:

Օգոստոս 11, 2018

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ

Մեր Սուրբ Եկեղեցւոյ կեանքին մէջ սրբազան աւանդութիւն է արդէն Սուրբ Պատարագի ընթացքին Հանրապետական Մաղթանքին արարողութեամբ գոհաբանական մեր աղօթքը բարձրացնել առ Աստուած Հայաստանի Անկախութեան տօնին առիթով:

Ինչո՞ւ այս արարողութիւնը եւ ի՞նչ նպատակով է հաստատուած այն մեր Սուրբ Եկեղեցւոյ կողմէ: Մենք պարզ բառերով պիտի ուզէինք ըսել որ պատեհ առիթը կ'ընձեռենք մեր ժողովուրդին փառք տալու Աստուծոյ եւ աղօթելու մեր Հայրենիքին եւ անոր բարգաւաճման համար, որովհետեւ ի մասնաւորի սփիւռք ապրող մեր ժողովուրդի զաւակաց համար Հայրենիքը գրաւականն է մեր կեանքի:

Այս տարի Անկախութեան տօնը կը նշանաւորուի այն համգամանքով, որ Հայաստանը կը թեւակոխէ պատմական նոր հանգրուան մը իր թաւշեայ յեղափոխութեամբ: Անտարակոյս այս լուսաւոր էջը աւելի հաւատք ու յոյս պիտի ներշնչէ մեր զաւակաց, երբ ականատես կը դառնանք այն ճշմարտութեան, որ արդարութիւնը առաւել պիտի ամրապնդուի մեր երկրին մէջ եւ մեր հայրենանուէր ժողովուրդը ազատ եւ անկաշկանդ իր տեսիլքներուն թռիչք պիտի տայ:

Հայրենիքի Անկախութեան տօնը պայմանաւորուած է մաքուր հայրենասիրութեամբ եւ անշահախնդիր ծառայութեամբ: Այն բոլորին որ ականատես դարձանք եւ լսեցինք երբեւէ չտկարացնէ մեզ, այլեւ կրկնապատկըւած ջանքերով եւ անշափելի հաւատքով պիտի լծուինք հայրենակերտումի սրբազան առաքելութեան:

Էական է, որ քրիստոնեական սերը իշխե մեր կեանքին վրայ, որպեսզի պայծառատես ոգով նայինք դեպի լուսաւոր ապագան: Ինչքան օրհնուած ենք, որ Աստուած կը պահպանէ մեր Սուրբ Եկեղեցին եւ երկիրը, ուր այսօր կը գործեն երիտասարդ եւ իմաստուն առաջնորդներ: Մեզի կը մնայ միմեանց օրհնել սիրով ու ներողամիտ ոգով, փոխադարձ յարգանքով եւ արդար գնահատականներով եւ ամենէն կարեւորը մեր մէջ արմատաւորելու այն գիտակցութիւնը, որ միասնակամ ուժերով պիտի կառուցենք մեր երկիրը եւ արժեւորենք Անկախութիւնը, մեր Սուրբ Հողը:

Սեպտեմբեր 1, 2018

ՄՐՏԻ ԽՕՍՔ*

Մեծայարգ Տիար Նախագահ Արցախի Հանրապետութեան, ազնիւ հիւրեր եւ թանկագին ուսանողներ:

Փառք կու տանք Աստուծոյ այս գեղեցիկ ու պատմական օրուան համար, երբ կը վերաբացուի Յովհաննէս Թումանեանի անունը կրող այս մեծ դպրոցը, որուն ամբողջական նորոգութեան ծախսերը յանձն են առած ազգային բարերարներ՝ Տէր եւ Տիկին Ջէրի եւ Փաթրիսիա Թրփանջեանները:

Մեր մասնայատուկ երախտագիտութիւնը Արցախի Հանրապետութեան Նախագահին իր ներկայութեանը համար, որ միշտ բարձրօրէն է գնահատած բարերար ամուլը:

Մեր սէրը եւ օրհնութիւնը դպրոցի տնօրէնութեան, ուսուցչական կազմին ու ծնողաց, որ ձեռք-ձեռքի տուած կը գործնականացնեն մեր մանուկներու դաստիարակութեան նուիրական առաքելութիւնը:

Մեր սէրը ձեզի, սիրելի բալիկներ եւ ուսանողներ, դուք այս պայծառ երկնքի տակ վաղուան աստղերն էք մեր ազգի: Ձեր աչքերուն մէջ կը տեսնենք յոյսն ու երազները մեր ազգի: Դուք այնպէս սովորէք, որ դառնաք պատիւը մեր Հայրենիքի ու ՄԲ. Եկեղեցու:

Մեր խօսքի մէջ խոր երախտագիտութեան զգացումներ կ'ուզենք յայտնել ազգային բարերարներ՝ Տէր եւ Տիկին Ջէրի եւ Փաթրիսիա Թրփանջեաններուն, ովքեր խոնարհ ոգով իրենց ազնիւ բարերարութեամբ կ'ի-

** Յովհաննէս Թումանեանի անունը կրող Ստեփանակերտի թիւ 9 վերակառուցուած դպրոցի բացման արարողութեան արտասանուած խօսք:*

մաստաւորեն իրենց կեանքը: Ի շարս բազում բարերարութեանց Թրփանջեան ամուլը յանձնառու եղաւ նաեւ իրականացնել Յովհաննէս Թումանեանի անունը կրող այս դպրոցի վերանորոգութիւնը: Այսօր Հայաստանի տարածքին, Արցախի մէջ եւ Արեւմտեան Թեմէն ներս Թրփանջեանները այն քիչերէն են, որոնք իրօք քրիստոնէական ոգով ի կատար կ'ածեն բազում առաքելութիւններ: Մեր աղօթքն է առ բարին Աստուած, որ իրենց պարգեւէ կենաց քաջառողջ ու երկար տարիներ, որպէսզի ընտանեկան երջանկութեամբ վայելեն Ազգին ու Եկեղեցիին պարգեւած իրենց բարիքները:

Հոկտեմբեր 4, 2018

ՍՓԻԻՌՔԸ

Հայ իրականության մեջ սփիւռքը դարձած է մնա-
յուն ներկայութիւն մը իր որոշակի առաքելութեամբ,
որն է հայ քրիստոնեային Հայրենիքի սահմաններէն
դուրս մեզ հայ պահելը՝ իր եկեղեցիներու գլխաւորու-
թեամբ, դպրոցներով եւ հաստատութիւններով: Բնա-
կան է այս բոլորը կը պահանջեն լուրջ ծրագրաւորում,
աշխատանք եւ ծառայութիւն, նիւթական պարտաւո-
րութիւններ, բայց այս բոլորի արդիւնքը կ'ըլլայ այն, որ
նպատակ ու նկարագիր տուած կ'ըլլանք մեր կեանքին
ու ամենէն էականը կը դառնայ այն, որ կ'ապահովենք
կազմակերպեալ ու կայուն սփիւռքի մը ներկայութիւնը:

Հայրենիքէն դուրս ունինք համատարած սփիւռք
մը, գաղութներով տարածուած աշխարհի չորս ծագե-
րուն: Այս պատկերի մէջ ներկայիս կը տեսնենք գա-
ղութներ, որոնք, բնական է, ունեցած են իրենց փառքի
օրերը, բայց այսօր ցաւ ի սիրտ հանգած են: Այնուամե-
նայնիւ ընդհանուր պատկերը մեզի կը ներկայանայ
յուսադրող երեւոյթներով:

Վերջին հարիւրամեակին հայ սփիւռքը դարձաւ
աւելի ընդարձակ եւ այսօր աշխարհի գրեթէ բոլոր
երկիրներուն մէջ ունինք մեծ ու փոքր համայնքներ եւ
բոլորն ալ իրենց կազմուածքով եւ նկարագիրով տար-
բեր մէկգմբիւսէն: Կան, սակայն, երկու գերագոյն սրբու-
թիւններ – Մայր Հայրենիքն ու Մբ. Էջմիածինը, եւ
որոնք կը միաւորեն մեզ: Այս սրբութիւնները մեր էու-
թեան մէջ արմատաւորուած՝ ամուր կը կենանք որպէս
սփիւռք եւ անտարակոյս մեր մէջ կը գտնենք հաւատքի
զօրութիւնը՝ շարունակելու մեր բարի պատերազմը,

գոյատևելու համար որպէս ապրող ու շնչող եկեղեցի ու ազգ:

Երբ կը խօսինք սփիւոքի մասին, ապա այսօր մեր իրականութեան մէջ կան ձեւաւորուած բազում շերտաւորումներ: Բնական է՝ հայ սփիւոքը միշտ առկայ է եղած Հայրենիքէն դուրս, բայց գլխաւորաբար այն առաւել ընդարձակուած է հայոց ցեղասպանութենէն յետոյ գլխաւորաբար, երբ տեղահանուած հայեր գաղթած են մինչեւ դէպի Արեւելք, Արեւմուտք եւ ընդհուպ մինչեւ Ամերիկաներ: Աւելի ուշ ունեցած ենք սփիւոքեան նոր համայնքներու ձեւաւորում Հայաստանէն եւ Միջին Արեւելքէն արտագաղթած հայերէ կազմուած, որոնք պէտք է ընդունիլ երկիմաստով. առաջինը իր երեւոյթով թերեւս կարելի է համարել ժխտական, որովհետեւ Հայաստանէն արտահոսքը բնական է ցաւ կը պատճառէ բոլորս, եւ սակայն պէտք է ըմբռնել իրերու վիճակը: Ապա Միջին Արեւելքի արտահոսքը քաղաքացիական կռիւներու պատճառով, որը նոյնպէս ծանր հարուած էր ձեւաւորուած համայնքներու համար: Բայց երկուքի պարագային ալ Հայաստանէն թէ Միջին Արեւելքէն հոսքը արթնութեան նոր ալիք մը բերաւ Արեւմտեան համայնքներէն ներս: Վերաշխուծացան եկեղեցական ու ազգային կառոյցները, աւելցան դպրոցները, եւ կարելի չէր աննկատ անցնիլ այն երեւոյթի առջեւէն, որն է աշխոյժ կապը Մայր Հայրենիքին հետ: Այս գրութեամբ չենք անդրադառնար Ռուսաստանի սփիւոքին, որտեղ ձուլումը ամենարագ չափերով ընթացք է առած եւ դժուար է պատկերացնել նմանօրինակ սփիւոքի մը ձեւաւորումը այնտեղ ինչպէս աւանդական սփիւոքն է:

Մեր նպատակը երկարաշունչ յօդուած մը գրել չէ, այլ բոլորովին նոր շեշտ մը, դրական մօտեցումով մը նայիլ սփիւոքի իրականութեան եւ գոյատեւման:

Մենք պիտի ուզենք կատարել հաստատում մը, որ երբեւէ չպէտք է յուսալքուիլ եւ սփիւոքը ընդունիլ արթնութեան մարտահրաւեր մը, որ կարծես նպատակ կու տայ մեր կեանքին, օրուան մեր կեանքին մէջ խառնելու համար հայեցի նկարագիրը պահպանելու ձգտումը, առանց սակայն անտեսելու մեր քաղաքացիական պարտաւորութիւնները տուեալ երկրի նկատմամբ: Մենք այս խորհրդածութիւնները թուղթին կը յանձնենք այն նկատառումով, որ այս աշխարհը առհասարակ շարժման մէջ է եւ կարծէք մարդիկ դարձած են աշխարհաքաղաքացի: Առաւել եւս չպէտք է մոռնանք նաեւ այն հանգամանքը, որ մարդը ընդհանրապէս պարտ է յարգել համամարդկային բոլոր արժէքները, ըլլան անոնք մշակութային արժէքներ, թէ բարոյական, հոգեւոր, ընկերային, թէ քաղաքացիական:

Որպէս Հայ Եկեղեցւոյ սպասաւոր չորս տասնամեակներու մեր ծառայութիւնը ինչքան դասեր տուաւ մեզի: Ընդլայնուեցաւ մեր մտահորիզոնը եւ կրօնական իմաստով եւ յարգանքը առհասարակ առաւել խորացաւ բոլորին նկատմամբ, հասկանալով հանդերձ այն ճշմարտութիւնը, որ մեր ազգային նկարագիրը պարզեւ մըն է Աստուծոյ կողմէ մեզի տրուած եւ այն պահելն ու պահպանելը պարտքն է մեր:

Ուրեմն, մեր պատգամն է բոլորին, որ մեր հոգեւոր կապը ամուր բռնենք Մայր Հայրենիքի, Մբ. Էջմիածնի ու մեր հայրենաբնակ ժողովուրդի հետ, եւ ինքնըստինքեան արդէն ժամանակն ու պայմանները մեզ կ'առաջնորդեն որոնելու եւ գտնելու միջոցներ եւ ստեղծելու պայմաններ հայապահպանումի:

Մեր առաքելութիւնը պիտի ըլլայ սերունդները դաստիարակել բարձրագոյն գիտական համալսա-

րաններէ ներս, որպէսզի անոնք դառնան համաշխարհային առումով առաջնորդներ:

Ուսումնաստենչ մեր երիտասարդութիւնը պիտի դառնայ մեր ազգի ու Հայրենիքի հոգեւոր ամենէն հիմնական «դրամագլուխը»:

Հոգեւոր թէ աշխարհիկ կեանքէն ներս մենք այլեւս պիտի մերժենք միջակութիւններ եւ պիտի ձգտինք ունենալ կատարեալ մասնագէտներ բոլոր բնագաւառներէն ներս:

Նոր օրերու աշխարհը մեր առաջ կը դնէ բազում մարտահրաւերներ եւ անշուշտ կարելի է յաղթահարել բոլորը, եթէ երբէք ապրինք քրիստոնէական հաւատքը, որն է դարձած ամրութեան խարիսխն ու վահանը մեր բովանդակ պատմութեան ընթացքին:

Եւ մենք խոր համոզումով կ'ուզենք ընդգծել, որ Հայց. Եկեղեցին պիտի ըլլայ առանցքն ու հիմնականը ե՛ւ Հայաստան եւ սփիւռքի իրականութեան, միայն այն պայմանով որ Եկեղեցին ինքզինք չհեռացնէ ժողովուրդէն ու ժամանակին թելադրած ոգիէն:

Ուրեմն, շարունակենք մեր առաքելութիւնը՝ պահելու հայ սփիւռքը մշտապէս մեր հայեացքը սեւեռուն պահելով դէպի Հայաստան եւ Մբ. Էջմիածին, մնալով գիտակից մեր պատմութեան եւ մշտաբայօն կերտելու համար նոր կեանքի արշալոյսը:

Հոկտեմբեր 7, 2018

ՀԲԸՄ-Ի ԾՆՆԴԵԱՆ 100-ԱՄԵԱԿ

ՀԲԸՄ-ի ծննդեան 100-ամեակն է եւ պատմական անկլինադարձ մը կ'ապրի նուիրական այս կազմակերպութիւնը, որուն նպատակն է հաւատաւոր եւ հայրենասէր սերունդի մը դաստիարակութիւնը:

Ես զաւակն եմ այն հօր ու մօր, որոնք իրենց պատանեկութեան եւ երիտասարդութեան տարիներուն եղած են ՀԲԸՄ-ի շարքերուն մէջ որպէս հպարտ հայեր եւ անկասկած ստացած են ազնիւ դաստիարակութիւն:

ՀԲԸՄ-ը ազգապահպան եւ նուիրական կազմակերպութիւն է, որուն տեսիլքն են ունեցած հարիւր տարիներ առաջ մեր նախնիք եւ սերունդներ, այդ նոյն տեսիլքով իրենց կեանքը կամրջած են Աստուծոյ, Մայր Հայաստանին, մեր Սուրբ Եկեղեցիին, հայոց պատմութեան եւ աւելին՝ ապրած են նոր արշալոյսներու ոգով:

100-ամեակը տօնախմբութեան առիթ մըն է, որպէսզի յիշենք անոնց փառապանծ պատմութիւնը, բայց աւելին, կը թելադրէ 100-ամեակը, որ այսօր մենք ըլլանք յանձնառու եւ վճռակամօրէն պահպանենք այս ժառանգը: Յիշեցէք, որ մեզմէ առաջ հազարաւորներու կեանքը լեցուեցաւ ազնիւ գաղափարականով, որն է կեանքն իմաստաւորել հայուն վայել կեանքի հպարտ ընթացքով:

ՀԲԸՄ-ի գերագոյն նպատակն է հայ պատանիին եւ երիտասարդի հոգիին մէջ արմատաւորել սերն Աստուծոյ, սէրը Հայրենիքին եւ Եկեղեցիին, նուիրումով մեր լեզուի ու աւանդութեանց հանդէպ, որպէսզի այդ բոլորով հարստացած՝ ամուր պահենք հայ քրիստոնեայի ազգային շունչով ներշնչուած հայ ընտանիքը:

Սեպտեմբեր 1, 2018

ԱՐՈՒԵՍՏԸ՝ ԱՍՏՈՒԱԾ ԵՒ ՄԱՐԴ ՄԻԱՑՆՈՂ ՕՂԱԿ ՄԸՆ Է

Արուեստը՝ մարդու հոգին ազնուացնող մտա-
յղացք մըն է, որ առիթ կ'ընծայէ մեզ մեր ներքին աշ-
խարհը թարգմանելու ու արտայայտելու մասնայա-
տուկ ձեւով մը, ըլլայ այն նկարչութիւն, երգ եւ երաժշ-
տութիւն, քանդակագործութիւն, աստղագործութիւն,
ճարտարապետութիւն եւ արծաթագործութիւն:

Արուեստագէտը այն մարդն է, որ անտարակոյս
ամենէն աւելի իր մէջը կը զգայ Աստուծոյ ներկայութիւնը
եւ ներքին հօր զգացողութիւնը կ'ունենայ արտայայ-
տելու այն:

Ինձ համար դժուար է երեւակայել որ Աստուա-
ծաստեղծ մարդը իր մէջ չփայփայէ սէրը՝ արուեստի
նկատմամբ, որովհետեւ այս աշխարհի գեղեցիկ բնու-
թիւնը ամբողջ է մարդուն ներկայութեամբ, որուն կա-
տարելատիպն է մարդը աստուածային ստեղծագոր-
ծութեանը մէջ, մանաւանդ այն հիմնական պատճառին
համար, որ բնութեան վայելքը տրուած է մարդուն հա-
մար: Ուրեմն, նոյն մարդը, պարտ է ոչ միայն պահել
բնութիւնը, իր գեղեցկութեամբ, այլեւ իր հերթին ան
պարտ է ստեղծագործել ու իր էութեամբ դառնալ ստեղ-
ծագործակից Աստուծոյ:

Այսօր հաւաքուած ենք ի մասնաւորի ըմբռնի-
նելու համար արծաթագործութեան եւ մետաղագործու-
թեան նուիրուած ցուցահանդէս մը, որը վերնագրուած է
“The whispering witnesses of Time”, նախաձեռնութեամբ
Մուրադ Պիլերի: Այս ցուցահանդէսին միջոցով կը ծա-
նօթանանք հանրայայտ արուեստագէտներու, որոնց

շարքին են վարպետ՝ Երզնկացի Յակոբ, գլխաւոր վարպետ՝ Գեորգ Պոլսեցի, վարպետ՝ Սարգիս:

Յուցահանդէսը ձօնուած է Սարգիս եւ Վարվառա Քէշիշեաններու յիշատակին, որոնց անձնական մետաղեայ հաւաքածոն կը գտնուի այս տան մէջ: Մեր խորին գնահատութիւնը Մուրադ Պիլերին, Արարատ-Էսքիջեան թանգարանի տնօրէնութեան այս գեղեցիկ քայլին համար: Ձեր այս քայլը կը թելադրէ ձեր սերն ու համոզմունքը արուեստի հանդէպ:

Մեր ժողովուրդի գոյութենականութեան հիմնական կռուանն է եղած հաւատքի կողքին, արուեստն ու մշակոյթը, որոնք ապահոված են նաեւ մեր տոկունութիւնը: Ժողովուրդներ կ'ապրին, երբ իրենց հոգիին պատկերը կ'աձանագրեն իրենց արուեստին եւ մշակոյթին ընդմէջէն:

Սեպտեմբեր 2, 2018

ԽԱՉՎԵՐԱՑ

Հայց. Եկեղեցւոյ տօնացոյցին մէջ Խաչվերացը արձանագրուած է որպէս 5-րդ Տաղաւար տօնը՝ հիմք ունենալով Խաչին տրուած բացառիկ տեղն ու նշանակութիւնը առհասարակ Ընդհանրական Եկեղեցւոյ մէջ: Խաչին մէջ է ամրագրուած ամբողջ խորհուրդը քրիստոնէութեան, անոր վարդապետութեան, Քրիստոսի Անձին մէջ մարմնաւորուած: Երբ մեր հայեացքը կ'ուղղենք խաչին, ապա այնտեղ կը տեսնենք խաչին վրայ Իր ձեռքերը լայն տարածած Աստուածորդուն, ով Իր Անձը պատարագեց մարդկանց հոգիներու փրկութեան համար, մեր առջեւ բանալով նոր կեանքի ճանապարհը: Խաչին նոր իմաստ տուաւ Քրիստոս, զայն դարձնելով Փրկագործութեան գործիքը, որովհետեւ մինչեւ Քրիստոս խաչը մահապատժի միջոցն էր: Քրիստոսի խաչելութիւնը կը խորհրդանշէ բարոյական մեծագոյն յաղթանակ մեղաւոր մարդուն առջեւ դրուած, որպէսզի փոխենք մեր կեանքի ընթացքը, եւ Քրիստոսով որդեգրենք նոր կեանքը հիմնուած Աստուծոյ սիրոյն վրայ: Խաչին խորհուրդը ներբողուած է քրիստոնէական Եկեղեցւոյ մէջ դարերով: Կը փառաւորենք խորհուրդը խաչին, կ'երկրպագենք խաչի առաջ, կը խաչակնքենք, խաչ կը կրենք մեր սրտի վրայ եւ այսօրինակ պաշտամունքային զանազան եղանակներով կ'արտայայտենք մեր հաւատքը՝ Քրիստոսի Անձին հանդէպ:

Խաչվերացի տօնակատարութիւնը հիմնուած է նաեւ պատմական դէպքի վրայ: Բայց թէ ինչպէ՞ս պիտի իմաստաւորենք խաչի տօնը: Ամենէն գործնական ձեւն է, որ մենք մեր հոգիին մէջ կրենք խաչին խորհուրդը, եւ

ապրինք Քրիստոսի նմանակից կեանքով: Ինչպէս Քրիստոս Աստուածորդին Իր կեանքը պատարագեց ու զոհաբերեց մարդկութեան փրկութեան համար, նոյնպէս եւ մենք հրաւեր ու կոչ ունինք Աստուծմէ մեր կեանքն ապրելու զոհաբերութեամբ, զայն ի սպաս դնելով մեր ընտանիքներուն համար, մեր նորահաս սերունդին համար եւ ի մասնաւորի, անոնց ջամբելով հաւատքի դաստիարակութիւնը:

Խաչվերացի տօնին առիթով մեր պատգամին շեշտը կ'ուզենք առաւելաբար դնել մեր նորահաս սերունդի քրիստոնէական դաստիարակութեան վրայ: Կ'ապրինք շատ դժուարին ժամանակներու մէջ, եւ բոլորս ալ երբ մեր շուրջը կը նայինք կը տեսնենք թէ ինչպէ՞ս մարդիկ իրենց մէջ կորսնցուցած են Աստուծոյ ներկայութիւնը, որուն պատճառով ալ վտանգուած է հոգեւոր ու բարոյական կեանքը: Բոլորիս պարտքը պիտի ըլլայ միասնական ուժերով կեդրոնանալ մեր մանուկներու եւ երիտասարդներու հոգեւոր ու կրօնական դաստիարակութեան վրայ, որպէսզի զարգանան քրիստոնէական ոգով ու գիտակցութեամբ: Այս առաքելութիւնը հաւասարապէս կը տարածուի բոլորիս ուսերուն, հոգեւորականը եւ հայ ծնողը, եւ մեզի հետ միասին հայ ուսուցիչը միասին պիտի գործենք: Ինչո՞ւ, որովհետեւ. *«Եկեղեցին դէպի սրբութիւն տանող ճանապարհն է, որու ընթացքին սուրբերը մեր ուղեկիցներն են մեզի, որոնց կեանքէն ճառագայթող լոյսը կը ներշնչէ մեզ, որպէսզի ապրինք Քրիստոսի սիրով»*: Այս ճանապարհը պիտի ընտրենք: Այլապէս, առանց աղօթքի, առանց քրիստոնէական հաւատքի ու հոգեւորին ձգտող զգացողութեան կը կորսնցնենք մեր էութեան մէջ Աստուծոյ պատկերը եւ անոր իսկ պատճառով մեր կեանքը կառուցած կ'ըլլանք աւազի վրայ:

Խաչվերացի տօնին առիթով մեր պատգամը կը յղենք մեր Թեմի հոգեւոր սպասաւորներուն, որ առաւել եռանդով ու անսահման համբերութեամբ ուղղորդեն մեր հաւատացեալները խաչի խորհուրդին: Մեր հայեացքը ուղղած պիտի պահենք Սուրբ Խաչին վրայ, որպէսզի մշտապէս քայլենք Քրիստոսի հետ եւ ապրինք որպէս առաքեալ Քրիստոսի եւ այս օրերուն մանաւանդ համախմբուինք մեր եկեղեցիներէն ներս գործօն մասնակցութեամբ, մեր զաւակները առաջնորդենք դէպի հայ դպրոց, տէրը կանգնինք մեր ազգային հաստատութեանց, մեր ժողովուրդի մէջ խորացնենք եւ քրիստոնէական ոգին, եւ ազգային շունչը, առանց սակայն թերանալու մեր քաղաքացիական պարտականութեանց մէջ: Մեր հոգեւոր առաքելութեան մէջ պարտ ենք հաստատել նուիրական քայլ մը, որն է հայ երիտասարդին ուխտագնացութիւնը Մայր Հայրենիք - ՄԲ. Էջմիածին: Սփիւռք ապրող մեր ողջ երիտասարդութիւնը անխտիր պէտք է այցելէ Մայր Երկիր, այն սուրբ հողը որտեղ իջաւ Աստուած:

Եթէ այս քայլերը առնելու մէջ թերանանք, ապա մեր կեանքը կը կորսնցնէ իր նպատակն ու առաքելութիւնը: Ինչքան օրհնուած է մեր Ազգն ու Եկեղեցին, որ 1915 թուականի Հայոց Յեղասպանութենէն դեռ հազիւ 100 տարիներ անց վերականգնած ենք որպէս յարուցեալ ժողովուրդ: Մենք հաւատացած ենք, որ եթէ մոխիրներէն վեր ենք յառնած, ապա գլխաւոր պատճառը մեր հաւատքի զօրութիւնն է, որուն արմատը խաչին խորհուրդն է:

Խաչին խորհուրդով առաջնորդենք մեր կեանքը եւ մնանք արթուն եւ հաստատ մեր նուիրական պարտականութեանց մէջ եւ այն ժամանակ միայն Խաչվերացի տօնը կ'իմաստաւորուի մեր կեանքին մէջ:

ԽԱՉՆ ԿԵՆԱՐԱՐ

Խաչին խորհուրդը քրիստոնեայ հաւատացեալներու համար անչափելիօրէն մեծ է: Պատճառն այն է, որ խաչը իր մէջ կը կրէ Քրիստոսի ներկայութիւնը, եւ անով իսկ իր մէջ ունի կեանք պարգեւող ուժականութիւն: Երբ մեր հայեացքը կ'ուղղենք խաչին, ապա նոյն խաչին վրայ կը տեսնենք կեանքին ճանապարհը մեր Տիրոջ եւ Փրկչի Յիսուսի Քրիստոսի, Անոր՝ երկինքէն երկիր խոնարհումը, Իր հրաշագործ կեանքին ընթացքը եւ վերջապէս խաչին վրայ Իր զոհաբերեալ կեանքը՝ մարդկանց հոգիներու փրկութեան համար:

Խաչին մէջ քրիստոնեայ հաւատացեալը կը տեսնէ պատկերը իր իսկ կեանքին, իր էութիւնը, եւ ամէնէն կարեւորը կը մնայ այն, որ նոյն քրիստոնեան եւ բոլորս բարի ձգտումը կ'ունենանք նմանուելու Քրիստոսի օրինակին:

Քրիստոնեայ հաւատացեալը եւ մանաւանդ ծնողներ՝ հայրերն ու մայրերը, խաչին խորհուրդով ներշնչուած ու հարստացած կը դառնան հետեւող Քրիստոսի եւ հրաշալի ծնողները: Եւ մենք վստահ ենք, որ ինչպէս Քրիստոս Ինք իր անձը զոհաբերեց խաչին վրայ մարդկանց հոգիներու փրկութեան համար: Դուք ալ որպէս քրիստոնեայ ծնողներ, պատրաստ էք զոհաբերել ձեր կեանքը յանուն ձեր զաւակաց, որպէս ձեր անկեղծ ու ամբողջական սիրոյ արտայայտութիւնը:

Խաչվերացի տօնը, հետեւաբար, հիմնականին մէջ քրիստոնեայի կեանքին մէջ կը խորացնէ զոհաբերեալ կեանքին խորհուրդը: Զոհաբերութեան խորհուրդը պէտք է արտայայտուի բոլորիս կեանքին մէջ եւ՝ ան-

հատապէս, եւ՝ հաւաքականօրէն: Եւ այս տօնին կը համընկնի նաեւ Ս. Ղեւոնդեանց Մայր Տաճարի կառոյցի 10-ամեակը, որուն մէջ եւս պէտք է տեսնենք հաւատացելոց գոհաբերութիւնը: Այսօր բացումը կը յայտարարուի Մայր Տաճարի օծման 10-ամեակի տօնակատարութեանց յաջորդական միջոցառումներով: Եւ տօնակատարութիւնները կ'իմաստաւորուին, երբ մեր կեանքերը կ'ունենան եւ կ'արձանագրեն նոր ընթացք, կ'արժեւորուին բարի գործերու սատարումներով:

Այսօր՝ Խաչվերացի տօնին եւ Ս. Ղեւոնդեանց Մայր Տաճարի օծման 10-ամեակի տօնակատարութեանց սկզբնաւորութեան մեր առաջին եւ ամենէն գլխաւոր քայլը կը համարենք մեր քրիստոնէական հաւատքին ջահին փոխանցումը մեր զաւակաց: Դուք խորհրդանշական կերպով տեսաք, թէ ինչպէս աւագները իրենց երիտասարդներուն փոխանցեցին Ս. Գիրքը քարոզելու առաքելական պարտականութիւնը: Որովհետեւ այդպէս է, որ սերունդէ սերունդ փոխանցելով մեր հոգեւոր ժառանգութիւնը՝ եկեղեցին ու եկեղեցւոյ առաքելութեան տեսիլքը, մեր մէջ կ'ամրապնդենք եկեղեցւոյ կոչումն ու շարունակականութիւնը:

Սիրելի հաւատացեալներ, մեր քրիստոնէական հաւատքին առաջին ուսուցիչները դուք էք: Դուք պիտի առաջնորդէք ձեր զաւակաց քայլերը սուրբ եկեղեցի: Դուք պիտի սորվեցնէք ձեր զաւակներուն խաչակնքել եւ կարդալ Աւետարանը: Եւ այնուհետեւ միայն հոգեւորականի հետ համագործակցաբար պիտի պատրաստենք քրիստոնէական բարոյականութեամբ հարուստ սերունդ մը: Կեանքը պիտի ապրինք այնպիսի ոճով մը, որ միշտ մնանք մօտիկ կանգնած Քրիստոսի:

Թող Ս. Խաչին կենարար խորհուրդով զարդարուին
ձեր հոգիները, որպեսզի հպարտ ու համարձակ տօնա-
խմբենք նաեւ մեր կեանքը:

Մեպտեմբեր 13, 2019

ՎԱՐԱԳԱՅ ՍԲ. ԽԱՉ

Վարազայ Ս. Խաչի տեսիլքը մեր հոգիներուն մէջ Հայ եկեղեցոյ տեսիլքին վերածնունդն է, զորս վերապրեցան երկու աղօթանուէր ճգնաւորներ, որոնք Հայոց երկնականարին վրայ տեսան խաչանման լոյսին խոնարհումը երկինքէն երկիր: Երկինքը՝ Աստուծոյ էջքն է մեր ազգի կեանքին մէջ, եւ երկիրը՝ ինքնին մեր ժողովուրդն է: Եւ ինչպէս երկու աղօթող ճգնաւորներ տեսիլք ունեցան լուսեղէն խաչի խորհուրդին խոնարհումը իրենց ժամանակին, այսօր մենք բոլորով, երբ աղօթքի կը կանգնենք, մեր հոգու հայեացքը ուղղենք դէպի երկինք՝ տեսնելու համար Աստուծոյ ներկայութիւնը եւ այն ընդունելու մեր կեանքին մէջ: Այդ պահուն տեղի կ'ունենայ պայծառակերպութիւնը մեր էութեան, երբ միութիւն կը հաստատենք Աստուծոյ հետ, եւ մեր կեանքին ճանապարհը կը դառնայ ճանապարհ առ Աստուած: Եւ ինչպէս աղօթանուէր ճգնաւորները տեսիլքն ունեցան լուսեղէն խաչին երկնքին վրայ եւ կառուցեցին Վարազայ Ս. Խաչ վանքը, ահա նոյն տեսիլքով առաջնորդուած մեր աղօթանուէր հայրերը կառուցեցին եկեղեցիներ, որպէսզի մեր ազգի զաւակները իրենց կեանքն ապրեն Աստուծոյ սիրով, Քրիստոսի իմաստութեամբ եւ Ս. Հոգու շնորհներով զարդարուած: Նոյն տեսիլքն ունեցան նաեւ այս սուրբ եկեղեցին կառուցող հոգեւոր հայրերն ու աշխարհիկ մեր պատասխանատուները:

Այսօր կը տօնախմբենք ի մասնաւորի անոնց տեսիլքը, եւ ուխտ կը կատարենք մեզի վստահուած այդ ժառանգը՝ Ս. Պօղոս Հայց. Եկեղեցին պահելու, պահպանելու գալիք սերունդներուն համար: Հետեւա-

բար՝ Ս. Պօղոս Հայց. Եկեղեցու օծման 40-րդ տարե-
դարձը կ'իմաստաւորուի միայն այն ժամանակ, երբ կը
նորոգենք քրիստոնէական մեր հաւատքի կեանքը, ծա-
ռայութեան ոգին՝ առաջնորդուելով Աստուածաշունչ
Մատեանէն ճառագայթող լոյսով:

Սիրելիներ ի Քրիստոս, դուք էք եկեղեցին, միայն
այն ժամանակ, երբ համախմբուած էք Աստուծոյ սիրով,
ձեր հոգեւոր հովիւին շուրջ եւ ձեր բովանդակ աշխա-
տանքը կը կեդրոնացնէք նորահաս սերունդի քրիստո-
նէական դաստիարակութեան վրայ:

Ձեր մէջ կրէք Աստուծոյ ներկայութիւնը: Ձեր
խօսքը թող ըլլայ Աստուծոյ խօսքը, եւ թող ձեր կեանքին
ճանապարհը նմանի Քրիստոսի կեանքին:

«ՄԻ՛ ՎԱԽՆԱՐ, ՄԻԱՅՆ ՀԱԻԱՏԱ՛»

Աւետարանէն մեզի հաղորդուած այս հրաշագործ պատմութիւնը իրօք պատկերն է մեր կեանքին իր բոլոր երեսներով ու ելեւէջներով: Պատմութեան կեդրոնական դէմքը Քրիստոս Ինք է, որուն ներկայութեան յաճախ ցոյց կու տանք եւ՝ ամբողջական հաւատք եւ երբեմն ալ անտարբերութիւն, չըսելու համար հաւատքի բացակայութիւն: Նոյն պատմութեան մէջ մեզի կը ներկայանան զանազան դերակատարներ. մէկ կողմէն հարիւրապետը՝ Յայրոս, անոր կողքին Յիսուսի աշակերտները, ամբոյսին մէջէն Յիսուսին հետեւող արինահոսութեամբ տառապող կիներ, աւելի ուշ՝ հարիւրապետին բարեկամներու փութկոտութեամբ ժամանումը:

Վերցնենք իւրաքանչիւր կերպար եւ փորձենք կարդալ անոնց էութիւնը. Յայրոս, հարիւրապետը, հաւատքով լեցուն անձն է, որ առանց վարանելու կը մօտենայ Տիրոջ, որպէսզի բժշկէր իր տասներկու տարեկան դուստրը: Անոր մէջ կասկած կամ հաւատքի տկարութիւն չկայ, նոյնիսկ այն պահուն, երբ իր շուրջը հաւաքուած էին կասկածի հիւանդութեամբ տառապեալներ: Նոյնպիսի դրական կերպար է եւ իր հաւատքին մէջ ամուր, արինահոսութեամբ տառապող կիներ, որ բաւական կը համարէր միայն դպչիլ Փրկչի հագուստի քղանցքին՝ բժշկուելու համար: Բայց աննկատ չանցնիր անոր արարքը Փրկչի մօտ: Այստեղ առանձնայատուկ է առաքեալներուն պատասխանը՝ ուղղեալ Տիրոջ:

Պատմութեան երկրորդ մասին մէջ մեզի կը ներկայանան լրաբերներ ու հարիւրապետի տանը հաւաքուածները, ովքեր հաւատքին ուժին անտեղեակ իրենց

ամբողջ յոյսը կորսնցուցած էին եւ բոլորին պատասխանը Քրիստոս ինք կու տայ երկու հաստատակամ պատասխաններով. մէկը՝ ուղղելով արինահոսութեամբ տառապող կնոջ ու հարիւրապետին եւ միւսը՝ ուղղուած հարիւրապետի աղջկան: Իր առաջին խօսքին մէջ Քրիստոս կը դիմէ արինահոսութեամբ տառապող կնոջ՝ ըսելով. *«Աղջի՛կս, քաջալերուէ՛, հաւատքդ քեզ փրկեց»*, եւ ի պատասխան անհաւատներուն իր խօսքը ուղղելով հարիւրապետին՝ կ'ըսէ. *«Մի՛ վախնար, միայն հաւատա՛, եւ աղջիկդ պիտի ապրի»*: Եւ այդպէս ալ կը պատահի, երբ Յիսուս կը հասնի Յայրոսի տունը, ան կը հրաւիրէ բոլորին՝ ըսելով. *«Մի՛ լաք, աղջիկը մեռած չէ, այլ կը քնանայ»*: Եւ բարձրաձայն դիմելով աղջկան՝ կ'ըսէ. *«Աղջի՛կս, ոտքի՛ ել»*:

Այս է պատկերը մեր կեանքին, ըլլայ մեր անձնական կեանքին մէջ, յաճախ մեր ընտանեկան կեանքին մէջ, եւ ինչու չէ՝ նաեւ մեր համայնքային կեանքին մէջ եւ վերջապէս եկեղեցւոյ կեանքին մէջ: Մենք մեր կեանքով մեր ամբողջ հաւատքը պիտի ապրինք եւ դիմենք Տիրոջ օգնականութեանը՝ ուշադրութիւն չդարձնելով այն մարդկանց, ովքեր կը մերժեն հաւատքի զօրութիւնը եւ իրենց հոգեւոր կեանքին մէջ չեն ուզեր տեսնել Աստուծոյ ներկայութիւնը: Այս պատկերը այս օրերուն մեր հասրակական կեանքին մէջ որոշապէս տեսանելի է: Եկեղեցւոյ կեանքին մէջ թերիներու ականատես դառնալով՝ առանձին անհատներ «համարձակ» յայտարարութիւններ կը կատարեն՝ ըսելով կամ կրկնելով Յայրոսի բարեկամներու խօսքը. *«Աղջիկդ մեռած է, եւ ի գուր կը չարչարես վարդապետը»*, այս անգամ իրենց խօսքը ուղղելով եկեղեցւոյ մասին՝ կ'արտայայտեն իրենց մտածումը, թէ՝ «եկեղեցին մեռած է կամ վտանգի անդունդի եզրին է հասած»: Բայց լսենք Քրիս-

տոսի խօսքը. «Մի՛ վախնար, միայն հաւատա՛, եւ աղ-
ջիկդ պիտի ապրի»: Աղջիկը մեր սուրբ եկեղեցին է՝
հաստատուած Աստուծոյ ձեռամբ եւ օրհնութեամբ, եւ
Աստուած կը պահէ իր ստեղծածը եւ կը պահանջէ մեր
մասնակցութիւնը՝ այն ալ մեր հաւատքն է: Օրերը տար-
բեր են, եւ մեր շուրջը շատցած են անհաւատները, եւ
մեր հաւաքական ջանքը պիտի ըլլայ նմանուիլ Յայրո-
սին ու արիւնահոսութեամբ տառապող կնոջ, ովքեր
առանց վարանումի մնացին հաստատ իրենց հաւատքին
մէջ: Տէրը դառնանք մեր սրբութիւն սրբոց դարաւոր
եկեղեցիին:

Նոյեմբեր 9, 2019

ՄԵՐ ԿԵԱՆՔԻ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ

«Զի որպէս առաւելան չարչարանքն Քրիստոս ի մեզ, նոյնպէս եւ ի ձեռն Քրիստոսի առաւել լիցի եւ մխիթարուիւնն մեր» (Բ. Կորնթ. 1:5):

Առաքելական այս պատգամը լիովին կ'արտայայտէ ամբողջ հաւատամքը Քրիստոսի հետեւող աշակերտներուն ու այն բոլորին, ովքեր իրենց կեանքն են ապրած համաձայն քրիստոնէական վարդապետութեան եւ ի Քրիստոս են դրած իրենց կեանքի առաքելութիւնն ու նպատակը: Մենք այս խօսքն ընտրեցինք յատուկ դիտաւորութեամբ, որովհետեւ Սբ. Գեորգ Զօրավարի կենցաղը ճշմարիտ արտայայտութիւնն է Առաքելի պատգամին:

Դիոկղետիանոս կայսրը անտանելի չարչարանքներու կ'ենթարկէ սուրբը եւ միաժամանակ խոստումներով կ'ուզէ տաքհամոզել սուրբը, որպէսզի նահանջէր իր հաւատքին մէջ ու մերժէր Քրիստոս Աստուածորդին, բայց իր առջեւ կը գտնէ իր հաւատքին ամբօրէն կառչած քրիստոնէան, որ *«Նախ զգեցաւ զգրահն արդարութեան»* (Ելք 6:14), որով լինի մարդ ազատ ի նեւից թշնամոյն»:

Սուրբ Գեորգի յիշտակութեան տօնն է այսօր եւ Սբ. Պատարագով կը պանծացնենք յիշատակը մեծ սուրբին, որուն նահատակութիւնը վասն Յիսուսի մեր հոգեւոր էութեանը մէջ կ'ամրագրէ սէրն Աստուծոյ եւ հաւատքը քրիստոնէական: Իրաքանչիւրս, այսօր, ինչպէս անցեալին մեր Սուրբ Եկեղեցւոյ հայրերը եւ նախնիք մեր հոգեւոր էութեանը մէջ ունինք աստուածային

իմաստութիւն, որ երբ կեանքի կոչենք, ապա այն ժամանակ ձգտումը կ'ունենանք ապրելու սրբակենցաղ կեանքով, հաւատքով զրահելու մեր հոգեւոր կեանքը, եւ Աստուծոյ սիրով լեցնելու մեր բովանդակ կեանքը: Այսօրինակ ապրուած կեանքը անտարակոյս կը դառնայ օրհնութիւն ողջ աշխարհի համար:

Մեպտեմբեր 29, 2018

**«ՅԱՄԵՆԱՅՆ ԺԱՄ ՈՒՍԱՆԻՄ
ԵՒ Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ
ՈՉ ՀԱՍԱՆԻՄ»**

Սր. Մեսրոպ Մաշտոց

Հոկտեմբեր ամիսը Հայ Եկեղեցւոյ մէջ ընկալուած է որպէս մշակոյթի ամիս եւ այն տասնամակներ առաջ հաստատուած է հոգելոյս Տ. Գաբեգին Յովսէփեանց Կաթողիկոսի կողմէ: Ի՞նչ է նպատակը, որ նման ամանդութիւն է հաստատած Եկեղեցին իր հայրերով. պարզ բացատրութեամբ Եկեղեցին իր հոգեւոր զաւակներու կեանքին մէջ կը միտի հազար միջոցներով դէպի գիտութիւն - մշակոյթ առաջնորդելու մանուկը եւ պատանին եւ ինչո՞ւ չէ նաեւ չափահաս սերունդը ներշնչելու գիրքն ու գրականութիւնը սիրելու, առհասարակ մշակոյթը, եւ այդ բոլորին առաջքը հանդիսացող Աստուածաշունչը, որ մեզի կը ներկայանայ որպէս կեանքի գիրքը:

Մարդը այն հոգեւոր էակն է, որ մշտապէս պիտի ուսանի, իր միտքն ու սիրտը պիտի ամբարե գիտելիքներով եւ հոգին սնուցանէ հաւատքի դասերով: Այսօրինակ կեանքն ապրող մարդը ինքզինք կը գերազանցէ, իրեն տրուած կեանքը կը հրաշագործէ ու կը ստեղծագործէ: Ով իր ուշադրութեան կիզակէտը չի դարձնէր հոգեւորն ու ուսումնականը, այդպիսին խաբուսիկ կեանքով մը կ'ապրի եւ իր հոգիին պարապը կը փորձէ լեցնել ժամանակավրէպ նիւթական կառոյցներու պատրաստութեամբ: Նման կառոյցներ երբեւէ ուրախութիւն չեն բերէր մեզ: Նայինք մեր շուրջը, եւ պիտի տեսնենք, որ նման ձեռնարկումներ մեզ կը տանին կործանումի, երբ ժամանակը կը յատկացնենք ոչ թէ մեր զաւակաց

ուսումնառութեան, այլեւ՝ ժամանցելի կառոյցներու ստեղծումին:

Մշակոյթի ամիսը այն ժամանակահատուածն է մեր կեանքի մէջ, երբ մենք պարտ ենք կեդրոնական հաւատքի մշակոյթի վրայ, զայն դարձնելու համար անհրաժեշտութիւն՝ հոգին մշակելու Աստուծոյ սիրով, Աւետարանական պատգամներով: Չկայ աւելի էական առաքելութիւն, քան հաւատքի մշակոյթի գործադրութիւնը: Մշակոյթի ամիսը նշանաւորելու համար պէտք է մեր ընտանիքներէն ներս աղօթքը դարձնենք մշտակրոն, մեր զաւակները առաջնորդենք Եկեղեցի ու Հայ Դպրոց:

Բայց տեսէք թէ ի՞նչ կ'ըսէ Սուրբ Մեսրոպ Մաշտոց. *«Յամենայն ժամ ուսանիմ եւ ի գիտութիւն ճշմարտութեան ոչ հասանիմ»*: Մշակոյթի ամսուան ընթացքին Հայ Եկեղեցին կը տօնախմբէ Մեծ Վարդապետներու տօնը, Սբ. Սահակ Հայրապետի եւ Սբ. Մեսրոպ Մաշտոցի: Անոնք Աստուածաշունչ Մատեանը հայերէնի թարգմանելու մտահոգութեամբ ու տեսիլքով ստեղծեցին Հայոց Այբուրէնը եւ հայոց լեզուն նուիրականացաւ եւ Աստուածաշունչը թարգմանուեցաւ եւ կոչուեցաւ Թագուհի Թարգմանութեանց:

Դարերով մեր մշակոյթը արձանագրեց յիշարժան գործեր ոչ միայն մեր ազգի զաւակաց համար, բայց առհասարակ մարդկութեան համար: Ահա այստեղ կ'արձանագրուի նաեւ ազգի մը մեծութիւնը, երբ կը գործէ համամարդկայինին ծառայելու գիտակցութեամբ:

Հայ մշակոյթի ամիսը պիտի արժեւորենք մեր օջախներէ ներս հայեցի կրօնական դաստիարակութիւնը ապահովելով: Հայ մշակոյթի ամիսը պիտի արժեւորենք գիտակ դառնալով Աստուածաշունչին, մեր մանուկներու քայլերը առաջնորդելով Հայ Դպրոց, ըլլայ այն ամէնօրեայ թէ՛ Շաբաթօրեայ եւ թէ՛ Կիրակնօրեայ: Մշակոյթի

ամիսը արժեւորենք զարկ տալով հայ գիրքի տարածմանն ու ընթերցանութեանը: Երբ այս քայլերը կ'առնենք, ապա այն ժամանակ աւելի շեշտուած կերպով կը զգանք, որ մասնակից ենք մշակոյթի ամսուան տօնակատարութեանց:

Հետեւաբար, ուսումնառութիւնը չափազանց էական է, եթէ մարդ կ'ուզէ քայլ պահել կեանքի իրականութեանց հետ: Ամէն օր մեր առօրեայի մէջ ծնունդ կ'առնեն նոր երեւոյթներ եւ բոլորին պատասխանը Աստուածաշունչ Մատեանը կու տայ մեզի: Այդ իսկ պատճառով ալ Աստուածաշունչը կը կոչուի կեանքի գիրքը:

Ժողովուրդներու կեանքը կ'ամրագրուի հաւատքի մշակոյթին վրայ, եւ հոգեւորականներ եւ ծնողներ պարտին սերտ համագործակցութեամբ ապահովել առողջ սերունդի մը պատրաստութիւնը: Զգլանանք այս սրբազան առաքելութեան մէջ եւ մեր մատղաշ սերունդի հոգիին մէջ արթնցնենք սերը մշակոյթի նկատմամբ, սերը՝ Աստուածաշունչի հանդէպ:

Հոկտեմբեր 5, 2018

ԲՈԼՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒ ՊԱՏՈՒՄՆԵՐԸ

«Իր աշակերտները իրեն կանչելով՝ ըսաւ անոնց. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ այս աղքատ որբեւայրին գանձանակը դրամ ձգողներուն ամենէն աւելին ձգեց: Վասն զի ամենքը իրենց աւելցածէն ձգեցին, բայց ասիկա իր չքաւորութենէն՝ ունեցածին բոլորը ձգեց՝ իր բոլոր ապրուստը» (Մարկոս, 12:43-44):

Քրիստոսի Աւետարաններէն կը քաղենք այնպիսի պատգամներ ու պատմուածքներ, որոնք իրապէս բոլոր ժամանակներու համար են գրառուած եւ բոլոր ժողովուրդներու համար, եւ որոնց նպատակն է լուսաւորել մարդուն կեանքը, ուղղել ընթացքը մեր կեանքի, եւ ամենէն կարեւորը՝ մեր մէջ ամբողջ պահել Երկնաւորին պատկերը, այն որ մարդն ստեղծուած է Աստուծոյ պատկերին համաձայն եւ այն պարտ ենք անաղարտ պահել:

Մարկոսի Աւետարանէն քաղուած այս պատմութիւնը կը վերաբերի անխտիր բոլորիս: Քրիստոսի այս պատմութեան մէջ կը տեսնենք իրական պատահար մը, որ տեղի կ'ունենայ Տաճարի դրան մօտ, երբ այրի կլին մը Տաճարի մուտք գործելով գանձանակին մէջ կը նետէ իր նուէրը: Քրիստոս կը տեսնէ պատահարը եւ անմիջապէս Իր մօտ կը կանչէ Իր աշակերտները եւ կ'ըսէ. «Քանզի ամենեքին յաւելորդաց իւրեանց արկին, այլ նա ի չքաւորութենէ իւրմէ՝ զամենայն ինչ գոր ունէր արկ, գոյի չափ զկեանս իւր»:

Ինչպէ՞ս հասկանալ կատարուածը: Պարզ բառերով մենք պիտի ուզէինք ըսել հետեւեալը, որ երբ մեր

աղօթքն առ Աստուած է ուղղուած եւ այն պէտք է ըլլայ ամբողջական, երբ ծառայութիւնն ու նուիրումը ընտանիքի նկատմամբ այն պէտք է ըլլայ բոլորանուէր, երբ ծառայութիւնը եւ նուիրումը Եկեղեցւոյ եւ Դպրոցին է այն պէտք է ըլլայ նախանձախնդրութեամբ եւ հաւատքով:

Քրիստոսի Աւետարանէն քաղուած այս պատմութիւնը մեզի կը յղէ պատգամ, որ մենք երբ ծառայութեան մէջ ենք այդ ըլլայ իրօք անկեղծ եւ բոլորանուէր եւ ոչ թէ պարզ պարտականութիւն մը կատարած ըլլալու սիրոյն: Քրիստոսի պատգամը այս մասին է, որովհետեւ մենք ալ գիտենք, որ երէկ եւ այսօր կեանքի մէջ բոլորս ալ յաճախ մեր պարտականութեան, մեր նուիրումի մէջ կ'արձանագրենք թերութիւններ եւ մեր ծառայութիւնը կը կատարենք առ երեւոյթ: Երբ աղօթքը, նուիրումն ու ծառայութիւնը ամբողջանուէր, սրտէն եւ հոգիէն չէ, անկեղծ հաւատքի արտայայտութիւնը չէ, ապա այդ բոլորը իրենց նպատակին չեն ծառայէր:

Հովուական մեր այցելութիւնը Մր. Պետրոս Հայց. Եկեղեցի մասնաւոր առիթի մը հետ կապուած չէ: Բայց ուրախ ենք, որ այդ կը կայանայ Հոկտեմբեր ամսուան ընթացքին, երբ մենք մեր համայնքային կեանքին մէջ կը տօնախմբենք Մշակոյթի ամիսը: Եւ երբ խօսքը կը վերաբերի մշակոյթին, այդ առաւելաբար կը վերաբերի հաւատքի մշակոյթին: Որովհետեւ մեր մշակոյթի բոլոր երեսները իրենց արմատը գտած են հաւատքի կեանքին մէջ:

Ուրեմն քաջ գիտնանք հաւատքի դերը եւ տեսնենք թէ ինչպիսի բարիքներ է շնորհած մեր քրիստոնէական հաւատքը: Բայց մեր գնահատութիւնը արտայայտենք ամբողջական սիրով եւ նուիրումով ինչպէս աղքատ կամ տառապած այրին, որուն կերպարը կը

թելադրէ մեզ բոլորիս դառնալու կատարեալ քրիստոնեայ, կատարեալ ծնող կամ ուսուցիչ, ամբողջապէս նուիրուած հոգեւորական թէ ուսուցիչ, որպէսզի մեր կոչումներուն տէրը դառնանք:

Քրիստոս Իր բովանդակ կեանքը տուաւ, ընդհուպ մինչեւ իսկ խաչը բարձրացաւ: Ահաւասաւիկ այս է, որ կը թելադրէ մեզի այրի կնոջ կերպարը:

Սեպտեմբեր 8, 2018

**«ԴՈՒՔ ՀԵՏԱՄՈՒՏ ԵՂԷՔ
ԱՍՏՈՒԾՈՅ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՅԴ ԱՄԷՆԸ ԱԻԵԼԻՈՎ ԿԸ ՏՐՈՒԻ ՁԵԶ»**

Քրիստոսի այս պատգամը ուղղուած է բոլորիս, որպէսզի մեր հոգեւոր կեանքին կիզակէտը դարձնենք Աստուծոյ թագաւորութիւնը, Աստուծոյ հարստանալու գիտակցութիւնը: Օրուայ Աւետարանի դասը կը քաղենք Ղուկասու Աւետարանի 12-րդ գլուխէն (13-21 հմբ.), ուր Քրիստոսի մօտեցող երիտասարդը կը կամենայ, որ վարդապետը միջամտի ըլլայ իր եւ եղբօր միջեւ տիրող կացութեան եւ անոր պարտաւորեցնէ, որ իր հարստութիւնը բաժնէ երկուսին միջեւ: Որպէս պատասխան Քրիստոս կ'ըսէ հետեւեալ խօսքը. *«Ո՛վ մարդ, ինձ ո՞վ դատաւոր կամ բաժանարար կարգեց ձեր վրայ...: Տեսէ՛ք, որ զգոյշ ըլլաք ամէն տեսակի ազահոութիւնէն, որովհետեւ մարդու կեանքը իր կուտակած հարստութեան մէջ չէ»:*

Եւ Քրիստոս իր խօսքն ուղղելով ժողովուրդին՝ կը պատմէ մեծահարուստի մը մասին հետեւեալ առակը.

«Հարուստ մարդու մը արտերը տուին առատ բերքեր, եւ ան կը մտածէր ինքնիրեն՝ ըսելով. «Ի՞նչ ընեմ, որովհետեւ տեղ չունիմ՝ ուր բերքերս ժողովեմ»: Եւ ըսաւ. - «Սա՛ պիտի ընեմ. պիտի քանդեմ ամբարներս, պիտի կառուցանեմ աւելի մեծերը, հոն պիտի ժողովեմ իմ բոլոր բերքերս ու բարիքներս, եւ պիտի ըսեմ անձիս. «Ո՛վ իմ անձս, շատ բարիքներ ունիս՝ դիզուած շատ տարիներու համար. հանգչէ՛, կէ՛ր, խմէ՛ եւ զուարճացի՛ր»: Բայց Աստուած ըսաւ անոր. «Անմի՛տ, այս գիշեր անձդ պիտի պահանջուի քեզմէ. ուստի որո՞ւ պիտի ըլլան այդ

*պատրաստած բաներդ»։ Այսպէս է ան 'որ գանձ կը դի-
գէ ինքնիրեն համար, բայց չի հարստանար Աստուծոյ
մօտ»։*

Մեծահարուստին կերպարը, բնական է, չի կրնար
ներշնչել մեզ։ Իր էութեամբ ժխտական կերպար մըն է
ան, որովհետեւ իր կեանքին նպատակն էր դարձուցած
նիւթն ու հարստութիւնը, եւ այն աւելի ընդարձակելու
միտումն ունէր։ Եւ առակին մէջ կը հանդիպինք այն
տողերուն, երբ մեծահարուստը իր հոգին կ'աւանդէ
առանց իր կեանքը հարստացնելու Աստուծոյ մօտ։

Այս առակը ինչպէս բոլոր ժամանակներու, այն-
պէս ալ այսօրուայ մարդկութեան պատկերը կը ներ-
կայացնէ։ Երբ պարպուած ենք հոգեւորէն ու հաւատքի
կեանքէն, ապա անոր տեղը կու գայ լեցնելու նիւթն ու
հարստութիւն դիզելու մտահոգութիւնը, որ բնականօրէն
ժամանակաւոր ու կորստական արժէքն է։

Քրիստոս կը պատգամէ բոլորիս, որ Աստուծոյ մօտ
հարստանանք, եւ այն ժամանակ աւելիով պիտի տրուի
մեզի։ Հետամուտ ըլլանք Աստուծոյ, եւ մեր կեանքը
մշտապէս ուղեգծենք Աստուծոյ սիրով ու իմաստութեամբ։
Չնմանուինք այն եղբայրներուն, ովքեր հարստութեան
համար իրարմէ կը բաժանուին, եւ ոչ ալ այն մեծահա-
րուստին, որուն գլխաւոր մտահոգութիւնը շտեմարան-
ներն ընդարձակելն էր, որպէսզի իր հարստութիւնը
ամբարէր։ Չմոռնանք, որ անցաւ աշխարհէն մեզի
հետ տանելիք շատ բան չունինք։ Էականն այն է, որ մեր
կեանքին ճանապարհը դարձնենք Աստուծոյ, եւ այն
ժամանակ հոգիով երջանիկ պիտի մնանք։

*Նոյեմբեր 24, 2019
Ամստերդամ*

ԳՏՆԵՆՔ ՔՐԻՍՏՈՍԻ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ

«Տիրոջ հոգին իմ վրաս է, զիս ատոր համար իսկ օծեց, զիս դրկեց աղքատներուն աւետարանելու, սրտաբեկ հոգիները բժշկելու, գերիներուն ազատում քարոզելու եւ կոյրերուն՝ տեսողութիւն, կեղեքուածները ազատ արձակելու, Տիրոջ ընդունելի տարին հռչակելու»:

(Ղուկ. 4: 8-19)

Երէկ մեր Սբ. Եկեղեցին յիշատակեց չորս աւետարանիչներու՝ Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասի եւ Յովհաննէսի տօնը: Նոր Կտակարանի առաջին չորս գրքերու հեղինակները մեզի կը պատմեն Քրիստոսի կեանքը՝ Անոր Ծնունդէն մինչեւ հրաշալի Յարութիւնը եւ մեզի կը փոխանցեն հոգեւոր մեծագոյն ժառանգը, որպէսզի Քրիստոսի կեանքը դարձնենք լոյսի ճանապարհը մեր կեանքին եւ ամենէն կարեւորը՝ մեզի տրուած հրաւերին պատասխանենք քաջութեամբ, հաւատքով ու համոզումով, որպէսզի դառնանք ճշմարիտ քրիստոնէաներ:

Բացէք Աւետարանները եւ այնտեղ պիտի գտնէք Քրիստոսի ներկայութիւնը: Աւետարանիչները մեզի կը հաղորդեն Մարդեղութեան Խորհուրդ խորինը, Աստուածորդու երկինքէն երկիր խոնարհումը, որուն մասին Յովհաննէս Աւետարանիչ կը պատգամէ հետեւեալը. *«Որովհետեւ Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ Իր Միածին որդին աշխարհ դրկեց, որպէսզի ով որ հաւատայ Անոր չկորսուի, այլեւ՝ յաւիտենական կեանք ունենայ»* (Յովհ. 3:16):

Առաջին եւ հիմնական պատգամը, որ մեզի կը տրուի Քրիստոսի մարդեղութեամբ այդ խոնարհութեան դասն է: Աստուած մարդացաւ, որպէսզի մարդը բարձրանայ առ Աստուած:

Այնուհետեւ, երբ կը կարդանք Աւետարանները, ապա մեզի կը ներկայանայ Քրիստոս Աստուածորդին Իր երկրաւոր կեանքով, որուն երբ կը հետեւինք, ապա կը լուսաւորուի մեր կեանքը Իր վարդապետութեամբ, հրաշագործութիւններով, առականքով, բժշկութիւններով, չարչարանքներով եւ ընդհուպ մինչեւ իսկ խաչին վրայ Իր կրած տառապանքներով, որուն աւարտին Ան իր յարութեամբ, մահը պարտութեան կը մատնէ: Այս բոլորին մէջ մենք կը գտնենք կեանքի գիրքը, որպէսզի այն դարձնենք հոգեւոր հացը մեր առօրեային:

Վերջապէս, երրորդ գլխաւոր պատգամը որ մեզի կը տրուի այդ հրաւերն է ապրելու համար Քրիստոսի նմանակից կեանքով, ինչպէս կը հաղորդէ մեզ Քրիստոս, Եսայի մարգարէի բառերով. «Տիրոջ հոգին իմ վրաս է, զիս աստոր համար իսկ օծեց, զիս դրկեց աղքատներուն աւետարանելու, սրտաբեկ հոգիները բժշկելու, գերիներուն ազատում քարոզելու եւ կոյրերուն՝ տեսողութիւն, կեղեքուածները ազատ արձակելու, Տիրոջ ընդունելի տարին հռչակելու»:

Սիրելիներ ի Քրիստոս, Մբ. Աւագանի մկրտութեամբ բոլորս ալ կը ստանանք հրաւերը քարոզելու Աւետարանը, ապրելու Աւետարանի պատգամներով, աւետարանելու հոգով աղքատներուն, միախառնելու սրտաբեկ հոգիները:

Օրուան պատգամն է, որ իւրաքանչիւր հայ ընտանիք, ամէն հայ քրիստոնեայ իր օրը լեցնէ Աւետարանէն ճառագայթող լոյսով եւ պատգամներով: Քրիստոսի Աւետարանը մեր հոգեւոր կեանքի հայելին է, երբ

կը կարդանք Սստուածաշունչ Մատեանը, այն ժամանակ մենք այնտեղ կը տեսնենք մեր իրական էութիւնը եւ կը ճշտենք կեանքի այն ուղին, որ պէտք է ընտրենք:

Օրուան պատգամն է, որ ապրինք սուրբ կեանքով, մեզմէ ամէն մէկը զգայ որ Տիրոջ հոգին մեր վրայ է:

Հոկտեմբեր 21, 2018

ՆՈՐ ՏԱՐՈՒՈՅ ՍԵՄԻՆ

“Being a Christian is not an act of cataloguing a person as a member of a group but the true rebirth of this person into the world of grace.”

Նոր Տարուոյ սեմին ենք կանգնած եւ բոլորս ուրախ սրտով եւ հոգով կը պատրաստուինք տօնախմբելու Յիսուսի հրաշալի Ծնունդը, որպէսզի Անոր հետ սկիզբը հաստատենք հոգեւոր նոր ճանապարհորդութեան, նոր յոյսերով եւ հաւատքի նորովի ուժականութեամբ: Մարդուն եւ ի մասնաւորի քրիստոնէային մեծագոյն յաղթանակը կը կայանայ նոր կեանքին մէջ:

Տարի մը եւս արձանագրեցինք Աստուածատուր մեր կեանքի գրքին մէջ եւ պահն է, որ աղօթքով ունենանք մեր անձերու քննութեան եւ արժեւորման պահը, որպէսզի կատարենք խոստումը նոր կեանքին, հաստատուած Աստուծոյ սիրոյն եւ իմաստութեան վրայ:

Նոր Տարուոյ սեմին գլխաւոր հարցադրումը որ կ'արձագանգէ մեր հոգեւոր էութեանը խորքին սա է. «Ո՞վ է մարդը եւ նպատակն ու առաքելութիւնը անոր»: Մարդն Աստուծոյ ստեղծագործակիցն է, որ իրեն վստահուած կեանքը պարտի ապրել Աստուծոյ երկիւղով: Մարդը պարտ է մշտապէս իր կեանքը առաջնորդելու հոգեւոր վերածնունդի, որպէսզի մեր մէջ ծնի կատարելային ձգտող մարդը:

Մենք անձնապէս կը հաւատանք եւ ճշմարիտ համոզումն ունինք, որ հայ քրիստոնէան իր կեանքը պարտի ապրիլ Աստուծոյ հետ, մարդկութեան ընծայաբերուած կեանքով, նուիրումով դէպի Մայր Հայաստան եւ Մբ. Էջմիածին:

Նոր Տարուոյ եւ Սուրբ Ծննդեան տօներու սեմին
ձեզ կ'ողջունենք աղօթքով եւ հաւատքով, ձեզ ծառայե-
լու խոր գիտակցութեամբ: Մեր կոչն է բոլորին անխտիր,
որ մեր կեանքը լեցնենք Քրիստոսի Աւետարանէն ճա-
ռագայթող սիրոյ պատուիրանով, մեր Սբ. Եկեղեցին
սիրելու անկեղծ ու մաքուր հոգով եւ հայ քրիստոնեային
ընտանիքը դարձնելով գերագոյն խորհուրդը մեր քրիս-
տոնէական առաքելութեան:

Շնորհաւոր Նոր Տարի եւ Սբ. Ծնունդ:

Դեկտեմբեր 2018